

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԱՐԻՆԵ ԷՌՆԵՍԻ ՄԻՐՁՈՅԱՆ

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ
ՌԻՍԿԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՄԱՆ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀՀ-ում:**

Ա Տ Ե Ն Ա Խ Ո Ս ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և
կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի
գիտական աստիճանի համար**

**Գիտական ղեկավար՝
տեխնիկական գիտությունների թեկնածու՝ դոցենտ
Հ. Վ. Զաքոյան**

Երևան - 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
--------------------	---

ԳԼՈՒԽ 1. ՓՈԽԱՌՈՒ-ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՎԱՐԿԱՆՇՄԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....

8	
1.1 Փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկը:.....	8
1.2 Միջազգային վարկանշային գործակալությունների կողմից վարկանշման (Standard and Poor's, Moody's, Fitch) ընդհանուր դրույթների վերլուծություն:	13
1.3 Վարկանշման մոդելները և դրանց կառուցման ժամանակակից միտումները:.....	21

ԳԼՈՒԽ 2. ՎԱՐԿԱՆՇԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԻԲՐԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿԻ ԿԱՌՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՔ.....

43	
2.1.Վարկանշային գնահատման գործընթացը և վարկանիշի օգտագործման ուղղությունները:	43
2.2 Առևտրային բանկերում փոխառու-իրավաբանական անձանց ներքին վարկանշման մոդելների համեմատական վերլուծություն:	51
2.3 Վարկային ռեսուրսների գծով սպասելի և չնախատեսված կորուստների գնահատում:.....	59
2.4 Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից փոխառու-իրավաբանական անձանց տրամադրվող վարկային ռեսուրսների սահմանաչափերի որոշում:.....	66

ԳԼՈՒԽ 3. ՀՀ-ում ՓՈԽԱՌՈՒ-ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՆԵՐՔԻՆ ՎԱՐԿԱՆՇՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ.....

71	
3.1 Փոխառու-իրավաբանական անձանց վարկանշման վրա ազդող քանակական գնահատմանը ենթարկվող գործոնների ընտրություն, վերլուծություն և գնահատում:.....	71
3.2 Փոխառու-իրավաբանական անձանց վարկանշման վրա ազդող փորձագիտական գնահատմանը ենթարկվող գործոնների ընտրություն, վերլուծություն և գնահատում:.....	83
3.3 Փոխառու-իրավաբանական անձանց գործունեության որակական գնահատմանը ենթակա ռիսկերի գնահատում և կանխատեսում:.....	107
3.4 Փոխառու-իրավաբանական անձանց ներքին վարկանիշի շնորհումը մեթոդական մոտեցման շրջանակներում:.....	118

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	123
---	-----

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	126
------------------------------------	-----

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	132
------------------	-----

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Չեռագոտության թեմայի արդիականությունը: Ձարգացող երկրներում տնտեսության զարգացման հիմնական նախադրյալներից մեկը իրավաբանական անձանց կողմից՝ առևտրային բանկերից և վարկային կազմակերպություններից վարկային ռեսուրսների ներգրավման գործընթացի բնականոն ապահովումն է: Ֆինանսական համակարգում աճող մրցակցությունը, առևտրային բանկերի կապիտալի համարժեքության վերաբերյալ ՀՀ ԿԲ նորմատիվները և Բազել II-ով (ԲազելIII) սահմանված պահանջները, շուկայում դիրքը ամրապնդելու և զարգանալու ձգտումները, հատկապես ֆինանսական կայունության ապահովումը, մասնավորապես այն առևտրային կազմակերպությունների անվճարունակության ռիսկերի գնահատման և կանխատեսման անհրաժեշտությունը, որոնք ունեն կամ պատրաստվում են ունենալ պարտային պարտավորություններ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների առջև (այսուհետ՝ փոխառու-իրավաբանական անձիք) ստիպում են առևտրային բանկերին և վարկային կազմակերպություններին ավելի ու ավելի մեծ ուշադրության արժանացնել փոխառու միջոցների կառավարմանը և պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող կազմակերպությունների անվճարունակության ռիսկերի գնահատմանը՝ վարկանիշ շնորհելու միջոցով: Վարկանիշը իրենից ներկայացնում է համապարփակ ցուցանիշ, որը բնութագրում է փոխառու-իրավաբանական անձի վճարունակության դասը: Վարկանշումը կատարվում է գումարային այն բոլոր ցուցանիշների հիման վրա, որոնք բնութագրում են փոխառու-իրավաբանական անձի եկամուտ ստանալու կարողությունը, ակտիվների բավարար լինելը, կառավարման ունակությունը, պարտավորությունների մարման պատրաստակամությունը և պարտաճանաչությունը: Վարկանշման մեխանիզմի կիրառումը և վարկանիշի շնորհումը ավարտին է հասցնում առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից վճարունակ փոխառու-իրավաբանական անձանց ընտրությունը: Բացի այդ, վարկանիշը ուղեցույց է տրամադրվող վարկի մեծությունը որոշելիս, ֆինանսական վիճակի վերլուծության ժամանակ պահուստների ստեղծման նպատակով վարկային պորտֆելի որակը գնահատելիս, փոխառու-իրավաբանական անձի սնանկության հավանականության ցուցանիշը հաշվարկելիս, գործարքների իրականացման գնային պայմանները սահմանելիս, ռիսկի վճարի

տոկոսադրույքը հաշվարկելիս, տրամադրվող վարկի գծով սպասելի և չնախատեսված կորուստների մեծությունը գնահատելիս և մի շարք այլ դեպքերում: Հաշվի առնելով ՀՀ-ում միջազգային վարկանշող գործակալությունների (Moody's, Fitch, S&P), ինչպես նաև ՀՀ ԿԲ կողմից իրականացվող փոխառու-իրավաբանական անձանց վարկանշման աննշան ծածկույթը՝ ՀՀ առևտրային բանկերը և վարկային կազմակերպությունները ստիպված են ինքնուրույն վարկանշել պոտենցիալ փոխառու-իրավաբանական անձանց: Վերջինս պահանջում է առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից փոխառու-իրավաբանական անձանց վերաբերող մեծաքանակ տվյալների և ցուցանիշների ընտրություն, վերլուծություն և գնահատում: Յուրաքանչյուր առևտրային բանկ, ըստ Բազելյան կոմիտեի, պետք է ինքնուրույն ընտրի ներքին վարկանշման իր կողմից կիրառվող մոդելը:

Մասնագիտական գրականության մեջ կազմակերպությունների անվճարունակության ռիսկի գնահատմանը վարկանշման միջոցով մի շարք հեղինակներ են անդրադարձել՝ Օ. Ի. Լավրուշինը, Ե. Պ. Շատալովան, Ա.Գ. Շերեմետը, Կ. Ռ. Արմենայանը, Ա. Մ. Ջանվեյանը, Ի. Վ. Վիշնյակովը, Վ. Ս. Ստոլպակովը և այլոք: Վերջիններս առաջարկել են կազմակերպությունների անվճարունակության ռիսկերի գնահատման իրենց մոդելները՝ համապատասխան ցուցանիշների համակարգով, շնորհվող բալերով, դասերի քանակով և այլն, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առավելություններն ու թերությունները, որոնց հաշվի առնելով մշակվել է ներքին վարկանշման մեթոդական մոտեցում, որի մեջ շտկված են փոխառու-իրավաբանական անձանց ներքին վարկանշման գործող մեխանիզմների թերությունները և որը հիմնված վերջիններիս առավելությունների, ինչպես նաև տնտեսության և ֆինանսական միջավայրերի ժամանակակից միտումների վրա:

Այնուամենայնիվ, համաձայն վերը քննարկվածի՝ պարզ է դառնում, որ առկա է կազմակերպությունների անվճարունակության ռիսկերի համալիր գնահատման ներքին վարկանշման նոր մեթոդական մոտեցման մշակման անհրաժեշտություն, որի մեջ հաշվի առնված կլինեն փոխառու-իրավաբանական անձանց ներքին վարկանշման գործող մեխանիզմների թերությունները և որը հիմնված կլինի վերջիններիս առավելությունների, ինչպես նաև տնտեսության և ֆինանսական միջավայրի ժամանակակից միտումների վրա:

Վերոնշյալն իր ազդեցությունն է ունեցել ներկայացված ատենախոսության թեմայի ընտրության վրա՝ պայմանավորելով վերջինիս արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության թեմայի հետազոտության հիմնական նպատակն է ՀՀ առևտրային բանկերում և վարկային կազմակերպություններում փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկերի համալիր գնահատումը և կանխատեսումը ներքին վարկանիշի շնորհման ալգորիթմի միջոցով՝ անվճարունակության ռիսկի քանակական և փորձագիտական գնահատման հիման վրա: Նշված նպատակի իրագործման համար ատենախոսության շրջանակներում տարանջատվել են հետևյալ խնդիրները.

- իրականացնել անվճարունակության ու սնանկության ռիսկերի գնահատման և վարկանշման մոդելների և դրանց կառուցման ժամանակակից միտումների ուսումնասիրություն և վերլուծություն:
- վերլուծել հրապարակված ներքին վարկանշման մոդելների առավելությունները և թերությունները,
- բացահայտել հրապարակված ներքին վարկանշման մոդելների կիրառելիության առանձնահատկությունները ՀՀ ֆինանսական համակարգում,
- վերլուծել վարկանշային գնահատման գործընթացը և վարկանիշի օգտագործման ուղղությունները,
- իրականացնել վարկային ռեսուրսների գծով սպասելի և չնախատեսված կորուստների և շնորհվող ներքին վարկանիշերի միջև փոխադարձ կապի ձևավորում,
- իրականացնել վարկային ռեսուրսների սահմանաչափերի և շնորհվող ներքին վարկանիշերի միջև փոխադարձ կապի ձևավորում,
- վարկանշման գործընթացի իրականացման շրջանակներում գնահատել և կանխատեսել փոխառու-իրավաբանական անձի գործունեությանը բնորոշ որակական գնահատմանը ենթակա ռիսկերը,
- մշակել ներքին վարկանշման մեթոդական մոտեցում՝ անվճարունակության ռիսկերի քանակական և փորձագիտական գնահատմանը ենթարկվող գործոնների ընտրության, վերլուծության և գնահատման հիման վրա:

Հետազոտության օբյեկտը և առարկան:

Ատենախոսության թեմայի շրջանակներում կատարված ուսումնասիրությունների հիմնական օբյեկտը ՀՀ-ում գործող առևտրային բանկերում և վարկային կազմակեր-

պություններում սպասարկվող փոխառու-իրավաբանական անձիք են: Հետազոտության առարկան ՀՀ առևտրային բանկերում և վարկային կազմակերպություններում փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկերի համալիր գնահատման և կանխատեսման հիմնախնդիրներն են՝ ներքին վարկանիշի շնորհման միջոցով:

Հետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը:

Կատարված հետազոտության համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել արտերկրյա և հայրենական տնտեսագետների՝ փոխառու-իրավաբանական անձանց վարկանշման մեխանիզմներին առնչվող հետազոտությունները, հրապարակումները և մշակված մոդելները:

Տեղեկատվական հիմք են հանդիսացել փոխառու-իրավաբանական անձանց ֆինանսատնտեսական գործունեությունը կարգավորող ՀՀ օրենքներ, ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտեր, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տեղեկագրերն ու վիճակագրական տվյալները և այլն:

Ատենախոսության թեմայի վերլուծության ընթացքում կիրառվել են ուսումնասիրության վիճակագրական, համեմատական և տնտեսամաթեմատիկական մեթոդներ:

Հետազոտության գիտական նորույթը:

Ատենախոսության գիտական նորույթները, որոնք պայմանավորված են հետազոտությունում առաջադրված խնդիրների լուծմամբ, կայանում են հետևյալում.

- մշակվել է փոխառու-իրավաբանական անձանց ներքին վարկանշման մեթոդական մոտեցում, որը հիմնված է անվճարունակության ռիսկերի քանակական և փորձագիտական գնահատումների վրա,
- իրականացվել է փոխառու-իրավաբանական անձանց վարկանշման վրա ազդող քանակական և փորձագիտական գնահատմանը ենթարկվող գործոնների վերլուծություն, ընտրություն և գնահատում,
- իրականացվել է փոխառու-իրավաբանական անձանց գործունեության որակական գնահատմանը ենթակա ռիսկերի ընտրություն և գնահատում:
- առևտրային բանկերում և վարկային կազմակերպություններում փոխառու-իրավաբանական անձանց գծով վարկային ռիսկերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկերի համալիր գնահատման հիման վրա մշակվել է շնորհված ներքին վարկանիշերի, ռիսկերի վճարի և վերջիններիս համապատասխանեցված պահուստների մեծության սանդղակ:

Ատենախոսության տեսական և կիրառական նշանակությունը:

Ներկայացվող ատենախոսության թեմայի հետազոտությունը ևս մեկ քայլ է

առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկերի համալիր գնահատման բարելավման գործընթացում, քանի որ վերջինս կառուցված է ներքին վարկանշման գործող մոդելների թերությունները հաշվի առնելով և առավելությունները զարգացնելով:

Ատենախոսության շրջանակներում ուսումնասիրված և ներկայացված նյութերը՝ մասնավորապես փոխառու-իրավաբանական անձանց ներքին վարկանշումը, կարող են օգտակար լինել առևտրային բանկերի, վարկային և առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև կազմակերպությունների անվճարունակության ռիսկերի գնահատման հիմնահարցերով զբաղվող մասնագետների համար:

Չետագոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսության շրջանակներում մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցումը կիրառվել է առևտրային կազմակերպությունների ներքին վարկանիշի շնորհման գործընթացում:

Աշխատանքի տեսամեթոդական, ինչպես նաև գործնական արդյունքները զեկուցվել և քննարկվել են ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ դասախոսների միջազգային գիտական կոնֆերանսներում և տեղ են գտել վերջիններիս նյութերի ժողովածուներում, ինչպես նաև հրապարակվել են գիտական մամուլում:

Չեղինակի կողմից ատենախոսության թեմայի շուրջ լուսաբանված հիմնահարցերը հրապարակվել են 4 գիտական հոդվածներում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքի ծավալը կազմում է 131 տպագիր էջ՝ առանց հավելվածների:

ԳԼՈՒԽ 1. ՓՈԽԱՌՈՒ-ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՎԱՐԿԱՆՇՄԱՆ ՍՈՐԵԼՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկը

Ռիսկը, դա որոշակի արտադրական, ֆինանսական և ոչ առևտրային գործունեության իրականացման արդյունքում վնասների ի հայտ գալու հավանականությունն է համեմատած կանխատեսումների հետ [1, էջ 19]: Փոխառուի ռիսկը իրենից ներկայացնում է փոխառության հիմնական պարտքի և տոկոսագումարների ոչ ամբողջական մարման հավանականություն՝ կապված փոխառուի վարկունակության ցածր մակարդակի՝ ցածր վարկանիշի հետ: Ռիսկի վերլուծությունը իրենից ներկայացնում է ռիսկի կոնկրետ տեսակը մեծացնող կամ փոքրացնող գործոնների բացահայտում: Ռիսկի գնահատումը դա ոչ այլ է, քան ռիսկի մակարդակի չափում որակական-քանակական մեթոդներով [8, էջ 16]:

Կազմակերպությունների անվճարունակության ռիսկը իրենից ներկայացնում է վերջինիս կողմից ընթացիկ հիմնական գործունեության ֆինանսավորման և պարտային պարտավորությունների մարման հնարավորության բացակայություն՝ միջոցների բացակայության պատճառով [31, էջ 148]: Մեկ այլ հեղինակի սահմանմամբ կազմակերպության անվճարունակության ռիսկը կայանում է նրանում, որ վերջինս չի կարողանա կատարել իր պարտավորությունները պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող իրավաբանական անձանց նկատմամբ (կոնտրագենտ՝ հավելված 1) դրամական միջոցների կամ այլ բարձր իրացվելիություն ունեցող ակտիվների անբավարարության պատճառով: Կարելի է յուրաքանչյուր պահին հստակ ասել վճարունակ է կազմակերպությունը, թե ոչ՝ կիրառելով անվճարունակության գնահատման մոտեցումներ [2, էջ 356]: Անվճարունակության ռիսկը կազմակերպության առավել վտանգավոր ռիսկերի շարքին է պատկանում, քանի որ գեներացնում է վերջինիս սնանկության անմիջական վտանգը: Տվյալ ռիսկը ոչ բավարար ֆինանսական միջոցների արդյունք է [81, էջ 322]: Տնտեսագիտական գրականության մեջ առանձնացվում են կազմակերպությունների անվճարունակության երեք փուլ [1, էջ 152-153].

1. թաքնված անվճարունակություն, որը բնութագրվում է կազմակերպության արժեքի նվազմամբ (արժեթղթերի գնի իջեցում) արտաքին կամ ներքին ոչ բարենպաստ միտումների ի հայտ գալու պատճառով, որոնցից են արտադրանքի իրացման խնդիրներ, արտադրական հզորությունների ոչ արդյունավետ օգտագործում և այլն: Սակայն տվյալ փուլում կազմակերպությունը դեռ ի վիճակի է ինքնուրույն ուղղել ստեղծված իրավիճակը՝ օգտագործելով գնային քաղաքականության մարքե-տինգային մեխանիզմները և այլն,
2. ֆինանսական անկայունության փուլ, որը բնութագրվում է ավելի խորը խնդիրներով՝ կրճատվում են դրամական մուտքերը հաշվեհամարների վրա, մեծանում է դեբիտորական պարտքը, փոխառու միջոցների ծավալը, կրճատվում են սեփական շրջանառու միջոցները և այլն: Տվյալ փուլում, եթե կազմակերպության գործունեության ֆինանսական ցուցանիշների վատացումը կախված է օբյեկտիվ պատճառներից (արտադրանքի իրացման սեզոնայնություն և այլն), և վերջինս ի վիճակի է մարել ժամկետանց պարտավորությունները սահմանված ժամկետում, ապա անվճարունակությունը գնահատվում է որպես կարճաժամկետ: Եթե կազմակերպությունը ի վիճակի չէ սահմանված ժամկետում մարել սեփական պարտավորությունները և այդ նպատակով ստիպված է հավաքագրել շրջանառու և ոչ շրջանառու միջոցների մի մասը, ապա տվյալ անվճարունակությունը որակվում է որպես երկարաժամկետ,
3. անվճարունակության երրորդ փուլը, դա ակնհայտ սնանկացումն է: Սնանկացումը դառնում է իրավաբանորեն անխուսափելի և ակնհայտ փաստ, երբ կազմակերպու-թյան բոլոր միջոցները, շրջանառու և ոչ շրջանառու ակտիվները բավարար չեն սեփական բյուջեի, վարկառուների, բաժնետերերի, անձնակազմի և այլ ֆիզիկական ու իրավաբանական անձանց նկատմամբ պարտավորությունները մարելու համար: Տվյալ դեպքում կազմակերպությունը կամ վերակազմավորվում է ֆինանսական առողջացման մեթոդով կամ լուծարվում:

Սնանկացումը, դա իրավաբանական կամ ֆիզիկական անձի հատուկ վիճակ է, երբ վերջինիս մոտ առկա է պարտավորությունները ամբողջությամբ կամ մասնակիորեն մարելու հնարավորության բացակայության մասին փաստացի հաստատում [3]:
Համաձայն ՀՀ «Սնանկության մասին» օրենքի երրորդ հոդվածի՝ պարտապանը կարող

է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝ սեփական նախաձեռնությամբ կամ պարտադրոջ պահանջով, եթե պարտապանն անվճարունակ է [100]: Այսինքն սնանկության հիմքը անվճարունակությունն է: Սնանկացումից առաջ լինում է դեֆոլթ [3]: Դեֆոլթը, դա կոնտրագենտի մոտ սեփական պարտավորությունները ժամանակին և (կամ) ամբողջ ծավալով կատարելու հնարավորության կամ ցանկության բացակայությունն է, որը բերում է պայմանագրի պայմանների խախտմանը և թույլ է տալիս վարկառուին սկսել գրավի առգրավման գործընթաց: Սակայն տվյալ սահմանումը չի պատասխանում այն հարցին, թե իրավաբանական տեսանկյունից ո՞ր պահին է սկսվում դեֆոլթը [2, էջ 368]: Կազմակերպության դեֆոլթի հավանականությունը կարող է գնահատվել վարկանիշերի միջոցով, որոնք շնորհվում են վերջինիս ֆինանսական հաշվետվության հիման վրա [2, էջ 387]:

Անվճարունակություն և վարկունակություն հասկացությունները սերտորեն կապված են միմյանց հետ: Կազմակերպության անվճարունակությունը գնահատելու համար օգտագործվում են իրացվելիության, ֆինանսական կայունության և այլնի գնահատման հարաբերական ցուցանիշներ: Անվճարունակության գնահատման գործընթացում կարևոր դեր է խաղում դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վերլուծությունը: Անվճարունակությունը և վարկունակությունը տարբերվում են միմյանցից [4, էջ 9]՝

1. վերլուծության առարկայով,
2. տեղեկատվական բազայով,
3. իրավունակության գնահատմամբ:

Վարկունակության վերլուծության առարկան ոչ միայն փոխառուն է (ինչպես անվճարունակության գնահատման ժամանակ է), այլ նաև կոնկրետ վարկային գործարքը: Համարվում է, որ վարկունակության գնահատման տեղեկատվական բազան ավելի լայն է: Բացի այդ անվճարունակության գնահատման ժամանակ հաշվի չի առնվում փոխառուի իրավունակությունը: Անվճարունակության ռիսկերի վերլուծության անտեսումը կարող է հանգեցնել այնպիսի գործոնների ի հայտ գալուն, որոնք կնվազեցնեն վարկունակությունը:

Վարկունակության վերլուծության դասական մեթոդը իրենից ներկայացնում է պոտենցիալ փոխառուների դասակարգում՝ ըստ անվճարունակության ռիսկի, ինչն անհրաժեշտ է փոխառության տրամադրման որոշումն ընդունելու համար [2, էջ 370]:

Ներկայացվող ատենախոսության շրջանակներում առաջարկվող ներքին վարկանշման մեթոդական մոտեցումը մշակված է կազմակերպությունների անվճարունակության ռիսկերի համալիր գնահատման նպատակով, այլ ոչ վարկունակության գնահատման նպատակով, այդ է պատճառը, որ կոնկրետ վարկային գործարքը վերջինիս վերլուծության առարկան չէ, բացի այդ մեթոդական մոտեցման շրջանակներում չի իրականացվում փոխառու-իրավաբանական անձի իրավունակության գնահատում, ինչը պարտադիր է վարկունակությունը գնահատելիս: Սակայն անվճարունակության ռիսկերի համալիր գնահատման ներկայացվող մեթոդական մոտեցման տեղեկատվական բազան մեծ է, ինչը պայմանավորված է տնտեսության մեջ անվճարունակության ռիսկերի գնահատման դերի բարձրացման հետ՝ տնտեսության և բանկային համակարգի զարգացմանը զուգընթաց: Փոխառու-իրավաբանական անձանց վարկանշման ատենախոսության շրջանակներում ներկայացվող մոտեցմամբ գնահատվում է կազմակերպությունների անվճարունակության ռիսկը, քանի որ առևտրային բանկի (այսուհետ՝ բանկ) կողմից փոխառու-իրավաբանական անձի գծով վարկային ռիսկը գնահատելու ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նաև իրավունակությունը, երաշխավորությունները, երաշխիքները, գրավը և այլն:

Վարկանիշը, դա օբյեկտների և սուբյեկտների դասակարգումն է ըստ ընտրված հատկանիշների, որի արդյունքում շնորհվում են որոշակի տառեր կամ թվեր, որոնք վկայում են վերջիններիս ֆինանսական պարտավորությունները կատարելու ունակության մակարդակի մասին [5, էջ 154]: Մեկ այլ հեղինակ վարկանիշը սահմանել է որպես երկրի, փոխառուի կամ առանձին վարկային պրոդուկտի վճարունակության ինտեգրալային գնահատական: Վարկանիշը արտահայտում է վարկանշողի կարծիքը փոխառուի կողմից պարտավորությունները ապագայում ժամանակին և ամբողջ ծավալով կատարելու հնարավորությունների և ցանկության վերաբերյալ [2, էջ 373]: Վարկանշային մոդելի կիրառման արդյունքում շնորհված վարկանիշը էականորեն տարբերվում է վարկային սքորինգից: Սքորինգային համակարգը վարկանշման համակարգի դյուրացված, արագացված տարբերակն է, որը հիմնականում կիրառվում է ֆիզիկական անձանց փոքր գումարներ վարկավորելու նպատակով՝ խանութներից գումմներ կատարելու ժամանակ [6]: Ֆիզիկական անձանց վարկունակության գնահատման սքորինգային մոդելը լայն տարածում ունի: Այն հիմնված է յուրաքանչյուր ֆիզիկական անձի

վարկային հայտի վերլուծության վրա [1, էջ 179]: Վարկանշման համակարգը հնարավորություն է տալիս վարկային մասնագետին վերլուծել վարկային հայտերը փոխառու-իրավաբանական անձի անվճարունակության սահմանափակ քանակությամբ առանցքային գործոնների գնահատման հիման վրա [2, էջ 375]:


Կազմակերպությունների անվճարունակության ռիսկերի գնահատման արդյունքների օգտատերերը շատ են՝ բանկեր, վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ, մատակարարներ և այլն: Անվճարունակության ռիսկի գնահատումը վարկանիշի միջոցով թույլ է տալիս վերոնշյալ օգտատերերին մեկ սիմվոլի (ներքին վարկանիշի) միջոցով լիովին պատկերացում կազմել, թե ինչ պայմաններով է պետք փոխառու-իրավաբանական անձի հետ պայմանագրային հարաբերություններ ունենալ: Մասնավորապես բանկերի համար փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկի գնահատումը առանցքային խնդիր է, քանի որ փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկը, դա բանկի վարկային ռիսկի հիմնական բաղադրիչն է: Որքան փոխառու-իրավաբանական անձի անվճարունակության ռիսկը մեծ է, այնքան մեծ է տվյալ փոխառու-իրավաբանական անձի գծով բանկի վարկային ռիսկը:

Հաշվի առնելով վերոնշյալը և, քանի որ ատենախոսության օբյեկտ են ընտրված ՀՀ-ում գործող առևտրային բանկերում և վարկային կազմակերպություններում սպասարկվող փոխառու-իրավաբանական անձիք, ներկայացվող ատենախոսության շրջանակներում կազմակերպությունների անվճարունակության ռիսկերի համալիր գնահատումը և կանխատեսումը իրականացվել է առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների տեսանկյունից՝ ներքին վարկանշման մեթոդական մոտեցման մշակման միջոցով՝ համաձայն Բազելյան կոմիտեի պահանջներին. Բազել II նոր համաձայնագրում [7, էջ 41-42] նշվում է, որ բանկերն իրենց մոտ պետք է ստեղծեն պոտենցիալ փոխառուների որակի և վարկերի տրամադրման պայմանների գնահատման վրա հիմնված ներքին վարկանշման համակարգեր: Այդպիսի վարկանիշերի հիման վրա պետք է հաշվարկվեն համապատասխան պահուստներ՝ յուրաքանչյուր հնարավոր վարկի համար: Ամենաբարձր վարկանիշով փոխառությունները կունենան պահուստավորման ամենացածր տոկոսադրույքներ և հակառակը: Ենթադրվում է, որ

այդպիսի համակարգերը կուժեղացնեն բանկերին՝ խթանելով վերջիններիս ձգտումը ունենալ ավելի որակով փոխառություններ:

Սակայն Բազելյան կոմիտեի պահանջը՝ բանկերում կազմակերպությունների անվճարունակության ռիսկերը գնահատելու նպատակով ներքին վարկանշման հուսալի մեխանիզմ կիրառելու վերաբերյալ, դեռևս համատարած բնույթ չի կրում ՀՀ-ում, ինչի մասին վկայում են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված տվյալների հիման վրա [86], [87] հեղինակի կողմից կազմված գծապատկերի արդյունքները:

Գծապատկեր 1.1.2 Բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռներն ըստ տնտեսության ճյուղերի (արտահայտված տոկոսներով)¹



Բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռներն ըստ տնտեսության բոլոր ճյուղերի 2015 թվականի օգոստոսին 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճել են [86], [87], [9], ինչը վկայում է բանկերի կողմից փոխառու-իրավաբանական անձանց վարկունակության գնահատման խնդիրների հրատապ լուծման անհրաժեշտության մասին: 2016 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ - ում գործող առևտրային բանկերի կողմից հաճախորդներին տրամադրված վարկերի, լիզինգի և ֆակտորինգի ընդհանուր գումարը կազմել է 2,189,590,793 հազ. դրամ [101, էջ 19]:

1.2. Միջազգային վարկանշային գործակալությունների կողմից վարկանշման (Standard and Poor’s, Moody’s, Fitch) ընդհանուր դրույթների վերլուծություն:

Standard and Poor’s-ը, Moody’s-ը և Fitch-ը կազմում են միջազգային վարկանշային գործակալությունների «Մեծ եռյակ» [10, էջ 81], որոնք վարկանիշ են

¹ Գծապատկերը կառուցված է հեղինակի կողմից՝ [86]–ի և [87] –ի տեղեկատվության հիման վրա:

շնորհում ֆինանսական ինստիտուտների լայն շրջանակին՝ բանկեր, ֆինանսական և առևտրային կազմակերպություններ, քլիրինգային ընկերություններ և այլն [11], [12], [13]: Վերջիններիս կողմից շնորհված վարկանիշը իրենից ներկայացնում է փոխառու-իրավաբանական անձանց գործունեության քանակական և որակական ցուցանիշների քանակական գնահատական, որն արտացոլում է վերլուծաբանների խմբի ընդհանուր կարծիքը, այդ պատճառով շնորհված յուրաքանչյուր վարկանիշի, ինչպես նաև վերջինիս մոնիթորինգի իրականացման համար պատասխանատվություն է կրում գործակալությունը, այլ ոչ՝ կոնկրետ վերլուծաբան: Վարկանշման կամայական մոդելի իրատեսական և վստահելի լինելը կարելի է գնահատել միայն ժամանակի ընթացքում, երբ վերջինս անցնում է վալիդացման փուլ և բացահայտվում է, որ շնորհված վարկանիշը իսկապես համապատասխանում է տվյալ փոխառու-իրավաբանական անձին: Որքան շատ են փոխառու-իրավաբանական անձանց շնորհված իրատեսական վարկանիշերի վերաբերյալ ժամանակային շարքերը, այնքան ավելի վստահելի է համարվում տվյալ վարկանշային մոդելը: Իրատեսական վարկանիշ շնորհելու գործընթացում կարևոր դեր է կատարում փոխառու-իրավաբանական անձանց վարկանիշերի միգրացիայի վերաբերյալ մեծածավալ տեղեկատվական բազայի առկայությունը: «Մեծ Եռյակի» կողմից շնորհվող վարկանիշերի արժանահավատության նախապայմաններից մեկը վերջիններիս մոտ երկարամյա գործունեության շնորհիվ տեղեկատվական և վերլուծական մեծածավալ բազայի առկայությունն է: Միայն վերոնշյալի վրա հիմնվելով՝ վարկանշային գործակալությունները կարող են սնանկության կանխատեսելի հավանականության և վարկանիշերի համապատասխանեցված սանդղակներ կազմել: «Մեծ Եռյակի» վարկանիշերը արժանահավատ են և ընդունելի ողջ աշխարհում, թեպետ վերջին շրջանում, կան դեպքեր, երբ այս կամ այն երկրին կամ կազմակերպությանը շնորհված վարկանիշը որոշ փորձագետների կողմից համարվում է քաղաքականացված (մասնավորապես, երեքն էլ՝ լինելով վարկանշման ամերիկյան գործակալություններ, որոշ ռուս ֆինանսական վերլուծաբանների կողմից արժանանում են թերահավատության՝ ելնելով վերջին շրջանում ՌԴ-ի և ԱՄՆ –ի քաղաքական հարաբերությունների բնույթից) [14]:

Վարկանշային գործակալությունների նպատակներն են.

- ստեղծել անվճարունակության ռիսկի գնահատման օբյեկտիվ չափանիշներ,
- ստեղծել վարկառուների և վարկատուների միջև ավելի վստահելի համագործակցության պայմաններ,
- փոխառու-իրավաբանական անձի վերաբերյալ տեղեկատվության վերլուծության ծախսերի, ինչպես նաև շնորհված վարկանիշի մոնիթորինգի ծախսերի նվազեցում:
- սնանկության հավանականության վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծում և վարկանիշերի միգրացիայի մատրիցի կազմում:

Standard and Poor's-ը, Moody's-ը և Fitch-ը կիրառում են տարբեր վարկանշային սանդղակներ, սակայն դասերի քանակը նույնն է, ինչը հնարավորություն է ընձեռում կազմել վերջիններիս դասերի համապատասխանեցված աղյուսակ [15] (աղյուսակ՝ 1.2.1):

Աղյուսակ 1.2.1. «Մեծ եռյակ»-ի վարկանշային սանդղակների համադրում [15]:

Moody's	Fitch	Standard & Poor's	Բալ
Aaa, Aa1, Aa2, Aa3, A1, A2, A3	AAA, AA+, AA, AA-, A+, A, A-	AAA, AA+, AA, AA-, A+, A, A-	100
Baa1	BBB+	BBB+	93
Baa2	BBB	BBB	86
Baa3	BBB-	BBB-	79
Ba1	BB+	BB+	71
Ba2	BB	BB	64
Ba3	BB-	BB-	57
B1	B+	B+	52
B2	B	B	50
B3	B-	B-	48
Caa1	CCC+	CCC+	29
Caa2	CCC	CCC	21
Caa3	CCC-	CCC-	14
Ca	CC	CC	7
C	C, DDD, DD, D	C, SD, D	0

Յուրաքանչյուր վարկանշային գործակալություն ունի իր առանձնահատկությունները: **Standard & Poor's** վարկանշային գործակալության կողմից կիրառվող վարկանշման մոդելը թույլ է տալիս իրականացնել հետևյալ տիպի փոխառու-իրավաբանական անձանց գնահատում [11]

- ֆակտորինգային կազմակերպություններ, որոնք իրականացնում են շտապ դրամական միջոցների կարիք ունեցող փոխառու-իրավաբանական անձանցից ֆինանսական ակտիվների ձեռքբերում,
- լիզինգային կազմակերպություններ,
- ֆինանսական կազմակերպություններ, որոնք չունեն ֆիզիկական անձանցից ավանդներ ներգրավելու հավաստագիր-լիցենզիա, զբաղվում են հիփոթեքային վարկավորմամբ և անշարժ գույքի հետ կապված գործարքների ֆինանսավորմամբ,
- կեպտիվային բանկեր և կեպտիվային կազմակերպություններ (հավելված 1),
- քլիրինգային կազմակերպություններ և այլն:


Standard & Poor's-ի կողմից կիրառվող վարկանշային մոդելը հիմնված է պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող կազմակերպությունների վարկունակության փուլային գնահատման վրա: Նախքան փոխառու-իրավաբանական անձին վարկանշելը, վերլուծաբանները համոզվում են, որ վերջինս չի գտնվում սնանկության եզրին: Եթե փոխառու-իրավաբանական անձի մոտ առկա են սնանկության նախանշաններ, ապա, անկախ այլ հանգամանքներից, փոխառու-իրավաբանական անձին շնորհվում է D վարկանիշ և վերջինիս համապատասխանեցված սնանկության հավանականություն: Վարկանիշի տվյալ կատեգորիան չի ենթարկվում կամայական վերանայման: Փոխառու-իրավաբանական անձի սնանկությունը չի նշանակում խմբի (հավելված 1) սնանկություն, որի կազմի մեջ մտնում է տվյալ փոխառու-իրավաբանական անձը:

Վարկանիշի նախնական հաշվարկման գործընթացը ներառում է հետևյալ փուլերը.

- Բանկային սեկտորի երկրի և ճյուղի ռիսկերի գնահատում՝ BICRA (հավելված 1) մեթոդաբանության համաձայն:
- Սեփական վարկունակության գնահատման շրջանակներում ռիսկ-գործոնների գնահատում (SACP՝ հավելված 1): Ռիսկ գործոններն են՝ կապիտալացումը և ֆինանսական ճկունությունը, դրամական միջոցների հոսքերի և ակտիվների որակի հարաբերությունը, շուկայական դիրքը և բիզնեսի դիվերսիֆիկացիան, կառավարման որակը, հիմնական գործունեության ու եկամուտների պոտենցիալ

աճի հարաբերությունը և իրացվելիության ու ֆոնդավորման հարաբերությունը:
 Կախված փոխառու-իրավաբանական անձի տեսակից՝ վարկանշման մոդելի
 ռիսկ-գործոնների կազմը և կշիռները փոփոխվում են:

Գծապատկեր 1.2.2. Առաջնային վարկանիշի հաշվարկ (BICRA+SACP)²



Երկրների և ճյուղերի ռիսկերի գնահատումը բանկային համակարգում իրականացվում է BICRA երկրների ժողովածուի հիման վրա, որը պարբերաբար հրատարակվում է: Այն դեպքում, երբ փոխառու-իրավաբանական անձի ծավալած գործունեության երկիրը բացակայում է BICRA երկրների ժողովածուում, մասնագետը, ով զբաղվում է վարկանշմամբ, հայց է ուղարկում ռիսկ-մենեջմենթի բաժին համապատասխան վերլուծություն կատարելու նպատակով: Նման հայց ստանալուց հետո բանկի ռիսկ-մենեջմենթի բաժնի աշխատակիցը իրականացնում է տնտեսական և ճյուղային գործոնների վերլուծություն՝ համաձայն BICRA -յի մեթոդաբանության:

Բանկային համակարգի, երկրի և ճյուղի ռիսկերի գնահատումը իրենից ներկայացնում է ռիսկերի վերլուծություն, որոնք բնորոշում են բանկային համակարգի և տնտեսության ռիսկերը՝ առանձին վերցված երկրում :

Ռիսկ-գործոնների գնահատումը իրենից ներկայացնում է փոխառու-իրավաբանական անձի ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն ռիսկ-գործոնների գծով, որոնցից յուրաքանչյուրը ներառում է ինչպես քանակական, այնպես էլ որակական

² Գծապատկերը կառուցված է հեղինակի կողմից՝ [11]–ի տեղեկատվության հիման վրա:

ցուցանիշներ: Յուրաքանչյուր ռիսկ-գործոնի գնահատումը կարող բարձրացնել կամ իջեցնել BICRA-յի շրջանակներում փոխառու-իրավաբանական անձին շնորհված բազային վարկանիշը: Կախված յուրաքանչյուր ռիսկ-գործոնի գնահատման արդյունքից՝ փոխառու-իրավաբանական անձին շնորհվում է 1-ից (լավագույն գնահատական) մինչև 10 (վատագույն գնահատական) բալեր: Ֆինանսական ցուցանիշների հաշվարկը ավտոմատացված է և հիմնված է բիզնես-վերլուծաբանի կողմից ներբեռնած փոխառու-իրավաբանական անձի ֆինանսական վիճակի տեղեկատվության հիման վրա:

Ռիսկ-գործոնների քանակական գնահատումը իրականացվում է ավտոմատ համակարգի միջոցով: Համակարգը ինքնուրույն վերլուծում է ռիսկ-գործոնները և համապատասխան բալեր շնորհում: Ինչ վերաբերվում է ռիսկ-գործոնների որակական գնահատմանը, ապա վերջինս իրականացվում է բիզնես-վերլուծաբանի կողմից՝ փորձագիտական գնահատման եղանակով:

Նախնական վարկանիշը հաշվարկվում է հետևյալ կերպ. փոխառու-իրավաբանական անձի բազային վարկանիշին (որը ստացել է փոխառու-իրավաբանական անձը բանկային համակարգի, երկրի և ճյուղի ռիսկերի միագումար վերլուծության արդյունքում) գումարելով բոլոր ռիսկ-գործոնների գծով փոխառու-իրավաբանական անձին շնորհված բալերը՝ յուրաքանչյուրը համապատասխան կշռով կշռված: Փոխառու-իրավաբանական անձի նախնական վարկանիշը հաշվարկելուց հետո գնահատվում է, թե արդյոք վերջինս կարող է հավակնել արտաքին որևէ օգնության կամայական «վատ» ելքի դեպքում: Վերջինիս վերլուծությունը կարող է կամ նվազեցնել կամ բարձրացնել շնորհված նախնական վարկանիշը:

Moody's վարկանշային գործակալությունը [12] շնորհում է մի քանի տեսակի վարկանիշեր՝ բանկերի ֆինանսական կայունության վարկանիշ, որը ցույց է տալիս բանկի կայունության և վստահելիության մակարդակը, կորպորատիվ էմիտենտների երկարատև պարտային պարտավորությունների վարկանիշեր և այլն: Բանկերի ֆինանսական կայունության վարկանիշը հաշվարկելու համար օգտագործվում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են ֆինանսական գործակիցները, շուկայական դիրքը, գործունեության դիվերսիֆիկացիան և ակտիվների վերլուծությունը և այլն: Moody's –ն ունի վարկանիշերի հինգ դաս՝ A-ից E, համապատասխանաբար բանկերի գերազանց՝ ինքնուրույն, ֆինանսական կայունությունից մինչև ֆինանսական կայունության՝

սահմանափակ ինքնուրույնությամբ բանկեր: Ինչ վերաբերվում է երկարատև պարտա-
յին պարտավորությունների վարկանիշին, ապա վերջինս ցույց է տալիս հավանակա-
նություն, որ որևէ ֆինանսական պարտավորություն փոխառու-իրավաբանական անձի
կողմից կարող է չմարվել այնպես, ինչպես խոստացված էր (սահմանված էր պայմա-
նագրում): Վերջինս կազմված է ինը վարկանշային դասերից՝ Aaa-C, համապատա-
սխանաբար ամենաբարձր կարգի պարտավորություններից, որոնց անվճարունա-
կության ռիսկը հավասար է զրոյի, մինչև ամենացածր կարգի պարտավորություններ,
որոնց անվճարունակության ռիսկը շատ բարձր է, հետևաբար վերջիններիս գծով
հիմնական գումարի և տոկոսների մարման հավանականությունը հավասար է
համարյա թե զրոյի: Moody's վարկանշային գործակալությունը երկար տարիների
գործունեության արդյունքում հավաքած մեծածավալ բազայի շնորհիվ բացի
վարկանիշ շնորհելուց կազմում է նաև վարկանիշերի և վերջիններիս
համապատասխանեցված սնանկության հավանականությունների սանդղակ (աղյուսակ
1.2.3):

Աղյուսակ 1.2. 3. Վարկանիշերի միգրացիա [16]:

	Aaa	Aa	A	Baa	Ba	B	Caa-C	Default	WR
Aaa	89.48%	7.05%	0.75%	0.00%	0.03%	0.00%	0.00%	0.00%	2.69%
Aa	1.07%	88.41%	7.35%	0.25%	0.07%	0.01%	0.00%	0.00%	2.83%
A	0.05%	2.32%	88.97%	4.85%	0.46%	0.12%	0.01%	0.02%	3.19%
Baa	0.05%	0.23%	5.03%	84.50%	4.60%	0.74%	0.15%	0.16%	4.54%
Ba	0.01%	0.04%	0.46%	5.28%	78.88%	6.48%	0.50%	1.16%	7.19%
B	0.01%	0.03%	0.12%	0.40%	6.18%	77.45%	2.93%	6.03%	6.85%
Caa-C	0.00%	0.00%	0.00%	0.52%	1.57%	4.00%	62.68%	23.12%	8.11%

Աղյուսակ 1.2.3 –ը կազմվել է Moody's վարկանշային գործակալության կողմից՝
1970-2004 թվականների վարկանիշերի միգրացիայի տեղեկատվության հիման վրա,
այն պարագայում, երբ մոնիթորինգի հաճախականությունը այդ տարիների ընթացքում
եղել է տարին մեկ անգամ:

Fitch միջազգային վարկանշային գործակալությունը [13] վարկանշում է ֆինան-
սական, բանկային, ապահովագրական գործունեությամբ զբաղվող փոխառու-իրավա-
բանական անձանց, արժեթղթեր և այլ պարտավորություններ: Fitch-ը իր վարկանշային
դասերը տարիների ընթացքում բաժանեց երկու ֆորմալ խմբի՝ ներդրումային կատեգո-
րիայի և սպեկուլյատիվ կատեգորիայի, համապատասխանաբար AAA-ից BBB և BB-ից՝

D: Ներդրումային կատեգորիայի վարկանիշերը արտացոլում են հարաբերականորեն ավելի ցածրից մինչև զսպված անվճարունակության ռիսկի մակարդակ ունեցող փոխառու-իրավաբանական անձանց, իսկ սպեկուլյատիվ կատեգորիան մատնանշում է փոխառու-իրավաբանական անձանց մոտ անվճարունակության ռիսկի շատ բարձր մակարդակի առկայություն, կամ արդեն տեղի ունեցած սնանկություն: Բացի վարկանիշ շնորհելուց Fitch-ը հաշվարկում, հրապարակում և կանխատեսում է, թե ինչպիսի միտում կունենա շնորհված վարկանիշը առաջիկա մեկ-երկու տարվա ընթացքում: Կանխատեսման վերլուծությունը արտացոլում է փոխառու-իրավաբանական անձի գործունեության վրա ազդող ֆինանսական, քաղաքական, օրենսդրական կամ այլ գործոնների ազդեցություն, որոնք դեռ չեն հասել այն մակարդակի, որպեսզի ազդեն վարկանիշի դասի փոփոխության վրա, սակայն առաջիկայում նման միտումների պահպանման պարագայում կարող են փոփոխել վերջինս: Կանխատեսումների մեծ մասը «հաստատուն» է, այսինքն վերլուծության արդյունքում համապատասխան մասնագետները գալիս են այն եզրակացության, որ փոխառու-իրավաբանական անձի վարկանիշը չի փոխվի, սակայն լինում են նաև «դրական» և «բացասական» միտումների կանխատեսումներ, որոնք թույլ է տալիս նախօրոք գնահատել կանխատեսվող փոփոխության հետևանքները և համապատասխան միջոցառումներ ձեռնարկել [13]:

Հայաստանի Հանրապետությունում վերոնշյալ վարկանշային գործակալությունների ծածկույթը աննշան է: Օրինակ՝ Moody's գործակալության կողմից վարկանշվել են ընդամենը 6 բանկ [12]՝ Յունիբանկին տրված է բազային B2 վարկանիշը, Արդշին-ինվեստբանկի վարկանիշը Ba3 է, Հայէկոնոմբանկը ստացել է B1 վարկանիշ, իսկ ՎՏԲ Բանկ Հայաստանը ունի B1 վարկանիշ: Ինչ վերաբերվում է առևտրային կազմակերպություններին, ապա վերջիններից միջազգային վարկանշման գործակալություններում վարկանշվածներ չկան: Սա պայմանավորված է նրանով, որ միջազգային վարկանշային գործակալությունների ծառայությունները բավականին թանկ են, վերջիններս վարկանշելու նպատակով փոխառու-իրավաբանական անձից մեծածավալ տեղեկատվություն են պահանջում, ինչպես նաև ՀՀ-ում տիրող տնտեսական վիճակի պայմաններում դժվար կլիներ ճիշտ գնահատել կազմակերպությունների կայուն գործունեության միտումները: Սակայն փոխառու-իրավաբանական անձիք պետք է

ծգտեն միջազգային վարկանշային գործակալությունների կողմից վարկանշվելուն, քանզի վարկանշվելու պարագայում կարող են հավակնել ինչպես տեղական, այնպես էլ արտերկրյա ֆինանսական կապիտալի ներգրավմանը արտոնյալ պայմաններով:

1.3 Վարկանշման մոդելները և դրանց կառուցման ժամանակակից միտումները:

Փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության գնահատման մոդելների մշակմամբ տնտեսագետները զբաղվում են դեռ 19-րդ դարի կեսերից, երբ բանկերը սկսեցին շատանալ, բանկային համակարգը զարգացավ և կազմակերպությունների անվճարունակության ռիսկերի գնահատումը բանկերի համար առանցքային խնդիր դարձավ: 1968 թվականին Է. Ալտմանը մշակեց Z (Z-score technique) սնանկության կանխատեսման մոդելը [26, էջ 79], [18, էջ 59], որը մեծ տարածում գտավ Ամն-ուն և Մեծ Բրիտանիայում: Մոդելի նպատակն էր գտնել դյուրին կիրառելի, ճշգրիտ մեթոդ, որի միջոցով հնարավոր կլիներ կանխատեսել փոխառու-իրավաբանական անձանց սնանկության հավանականությունը:

Կարելի է ասել՝ Է. Ալտմանը առաջիններից էր, ով դասակարգեց փոխառու-իրավաբանական անձանց ըստ վարկունակության մակարդակի: Ալտմանը դուրս բերեց Z գործակիցը 66 կազմակերպությունների ֆինանսական վերլուծության հիման վրա [19, էջ 589]: 1983 թվականին Է. Ալտմանը ստացավ իր մոդելի մոդիֆիկացված տարբերակը (1):

$$Z = 0.717 X_1 + 0.847 X_2 + 3.701 X_3 + 0.42 X_4 + 0.995 X_5 \quad (1)$$

որտեղ՝

- X_1 - ը՝ շրջանառու կապիտալի և ընդամենը ակտիվների հարաբերություն, որն ըստ Է. Ալտմանի հանդիսանում է կազմակերպության իրացվելիության ամենատեղեկատվական գործակիցը և ավելի լավ է բնորոշում կազմակերպության վճարունակությունը, քան այնպիսի գործակիցներ, ինչպիսիք են ընթացիկ և արագ իրացվելիությունները:
- X_2 - ը՝ կուտակված շահույթ և ընթացիկ պարտավորությունների հարաբերություն, որն արտացոլում է կազմակերպության կունմուլյատիվ եկամտաբերու-

թյունը՝ արտացոլելով կազմակերպության գործունեության ժամկետը և շահութաբերությունը:

- X_3 - ը՝ գործառնական շահույթի (EBIT) և ընդամենը ակտիվների հարաբերություն: Տվյալ գործակիցը հաշվարկվում է վարկերի, հարկերի և շահաբաժինների մարման գործառնական դրամական հոսքերի հիման վրա:
- X_4 - ը՝ սեփական կապիտալի և համախառն պարտավորությունների հաշվեկշռային արժեքի հարաբերությունն է:
- X_5 - ը՝ հասույթի և ընդամենը ակտիվների հարաբերությունն է:

Վերոնշյալ բանաձևի սահմանային արժեքը 1.23-ն է, այսինքն, եթե Z գործակիցը ընդունում է 1.23 ցածր արժեք, ապա փոխառու-իրավաբանական անձը մոտավորապես 70% հավանականությամբ գտնվում է սնանկության եզրին, 1.23-ից բարձր արժեք ընդունելուն զուգընթաց սնանկանալու հավանականությունը սկսում է նվազել:

Զեսսերի մոդելը [18, էջ 59-60] նույնպես մշակվել էր փոխառու-իրավաբանական անձանց սնանկության կանխատեսման նպատակով, որը մեծամասամբ օգտագործվում է բանկերի կողմից փոխառու-իրավաբանական անձանց վարկանշման նպատակով: Զեսսերի մոդելն ունի հետևյալ տեսքը (2)՝

$$Z = -2.0434 - 5.24X_1 - 0.0053 X_2 - 6.6507 X_3 + 4.4009 X_4 - 0.07915 X_5 - 0.102 X_6 \quad (2)$$

որտեղ՝

- X_1 – ը դրամական միջոցներ + արագ իրացվելի արժեթղթեր հարաբերած ակտիվների գումարին:
- X_2 – ը վաճառքների զուտ գումար հարաբերած դրամական միջոցների և արագ իրացվելի արժեթղթերի գումարին:
- X_3 – ը EBIT հարաբերած ակտիվների գումարին:
- X_4 – ը պարտավորությունների գումար հարաբերած ակտիվների գումարին:
- X_5 – ը հիմնական կապիտալ հարաբերած զուտ ակտիվներին:
- X_6 – ը շրջանառու կապիտալ հարաբերած վաճառքների զուտ գումարին:

Եթե փոխառու-իրավաբանական անձի վերոնշյալ բանաձևով հաշվարկված սնանկության հավանականությունը գտնվում է (0.8-1] միջակայքում, ապա վերջինիս ֆինանսական վիճակը կրիտիկական է, (0.6-0.8] միջակայքում գտնվելու դեպքում՝ փո-

խառու-իրավաբանական անձը գտնվում է անվճարունակության եզրին, (04-0.6] միջակայքը արտացոլում է վերջինիս ֆինանսական վիճակի բավարար լինելը, (0.2-0.4] նշանակում է, որ ֆինանսական վիճակը լավ մակարդակի վրա է, իսկ [0.2-0] միջակայքում գտնվելը վկայում է փոխառու-իրավաբանական անձի ֆինանսական գերազանց վիճակի մասին:

ԱՄՆ բանկային համակարգում մի քանի տասնյակ տարիներ օգտագործվում էր «6 Սի» (6 C) [18, էջ 62], [21, էջ 114-115] կանոնը, որի շրջանակներում փոխառու-իրավաբանական անձի վարկունակությունը գնահատվում է վարկավորման վեց բազային սկզբունքների հիման վրա`

- Character - վերլուծվում են փոխառու-իրավաբանական անձի հուսալիությունը, պատասխանատվությունը և պարտաճանաչությունը:
- Capacity - վերլուծվում են փոխառու-իրավաբանական անձի վարկունակության իրավական հիմքերը:
- Cash - գնահատվում են փոխառու-իրավաբանական անձի` ժամանակին պարտավորությունները մարելու հնարավորությունները:
- Collateral - վերլուծվում է վարկի դիմաց փոխառու-իրավաբանական անձի կողմից տրամադրվելիք ապահովվածությունը:
- Conditions - վերլուծվում են փոխառու-իրավաբանական անձի գործունեության ճյուղին, բնագավառին բնորոշ ռիսկերը:
- Control - համապատասխան մասնագետի կողմից վերլուծվում են (առկայության դեպքում) փոխառու-իրավաբանական անձի գործունեությանը բնորոշ իրավական, տնտեսական և քաղաքական ռիսկերը:

«Վեց Սի» մոդելը բավականին ծավալուն վերլուծություն է ենթադրում և որոշակի առումով ուղեցույց է հանդիսանում փոխառու-իրավաբանական անձի գործունեության համալիր վերլուծություն կատարելու ընթացքում:

«CAMPARI» վարկանշման մեթոդական մոտեցումն [22] իր անունը ստացել է վարկավորման հիմնական սկզբունքների առաջին տառերի հապավումից` C (character)` փոխառու-իրավաբանական անձի գործարար հեղինակություն, բնութագիր, A (ability)` վարկի մարման հնարավորություններ, M (margin)` մարժա, եկամտաբերություն, P

(purpose)՝ վարկի օգտագործման նպատակներ, A (mount)՝ վարկի չափ, R (repayment)՝ վարկի մարման պայմաններ, I (insurance)՝ վարկի ապահովագրություն և ապահովվածություն:

Համալիր վերլուծության վրա հիմնված վարկունակության գնահատման վերոնշյալ մոդելները բավականին լայն կիրառում ունենին հատկապես 19-րդ դարի վերջին, սակայն վերջիններս չունեն բավարար տեսական բազա, այսինքն չկա մշակված ամբողջական մեթոդական մոտեցում, որտեղ նկարագրված և վերլուծված կլինեն փոխառու-իրավաբանական անձանց գործունեության ճյուղի, երկրի և այլ առանձնահատկություններ, ինչպես նաև փոքր է մաթեմատիկական վերլուծությունների բազան [23, էջ 101]: Նմանատիպ մոդելների կիրառումը խնդրահարույց է, որովհետև պահանջում է կազմակերպությունների սնանկության վերաբերյալ տվյալների մեծամասշտաբ բազա, խոչընդոտ է հանդիսանում նաև սնանկության վերաբերյալ նորմատիվային բազայի անընդհատ փոփոխությունը: Վերոնշյալը հաշվի առնելով՝ անվճարունակության ռիսկերի գնահատումը իրականացվում է վարկանշման միջոցով: Այժմ բանկերը և վարկային կազմակերպությունները գերադասում են մշակել իրենց սեփական ներքին վարկանշման մոդելները, որտեղ հաշվի առնված կլինեն տնտեսության ժամանակակից միտումները, իրավական և քաղաքական գործոնները և այլն:

Կազմակերպությունների անվճարունակության ռիսկերի վերլուծությունը բազմափուլ գործընթաց է: Այն պահանջում է բանկերի և վարկային կազմակերպությունների համապատասխան մասնագետների կողմից փոխառու-իրավաբանական անձին վերաբերվող մեծաքանակ տվյալների և ցուցանիշների ճիշտ ընտրություն և վերլուծություն [26, էջ 52]՝ վերջինիս վարկանիշ շնորհելու նպատակով, որը թույլ կտա բանկերին և վարկային կազմակերպություններին հիմնավորված կառավարչական որոշումներ ընդունել՝ վարկավորման ռիսկերը հաշվի առնված: Վարկանիշը իրենից ներկայացնում է համապարփակ ցուցանիշ, որը բնութագրում է փոխառու-իրավաբանական անձի վարկունակության դասը: Վարկանշումը կատարվում է գումարային այն բոլոր ցուցանիշների հիման վրա, որոնք բնութագրում են փոխառու-իրավաբանական անձի եկամուտ ստանալու կարողությունը, ակտիվների բավարար լինելը [26, էջ 50], կառավարման ունակությունը, պարտավորությունների մարման պատրաստականությունն ու պարտաճանաչությունը և այլն: Գոյություն ունեցող մի շարք վարկանշող

գործակալություններ՝ Moody's, Fitch, Standard and Poor's (մանրամասն նկարագրված են 1.2.-ում) և այլն, տարիներ շարունակ կիրառում են իրենց կողմից մշակված վարկանշման մոդելները (որոնց միայն ընդհանուր դրույթներն են հանրությանը հայտնի) և արդեն կարողացել են բավականին մեծ վիճակագրություն հավաքագրել իրենց կողմից շնորհվող վարկանիշերի իրատեսական լինելու կամ չլինելու վերաբերյալ: Սակայն, հաշվի առնելով այն փաստը, որ նույնիսկ զարգացած երկրներում փոխառու-իրավաբանական անձանց քիչ տոկոսն ունի մասնագիտացված գործակալությունների կողմից տրված վարկանիշ (քանի որ քիչ փոխառու-իրավաբանական անձիք են սեփական նախաձեռնությամբ դիմում վարկանիշ ստանալու նպատակով՝ հաշվի առնելով զգալի ծախսերն ու պահանջվող տեղեկատվության մեծաքանակ լինելը)՝ բանկերը և վարկային կազմակերպությունները ստիպված են փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկերը գնահատելու նպատակով ինքնուրույն վարկանշել պոտենցիալ փոխառու-իրավաբանական անձանց: Վարկանիշը ուղեցույց է տրամադրվող վարկի գումարի մեծությունը որոշելիս, ֆինանսական վիճակի վերլուծության ժամանակ պահուստների ստեղծման նպատակով վարկային պորտֆելի որակը գնահատելիս, փոխառու-իրավաբանական անձի սնանկության հավանականության ցուցանիշը հաշվարկելիս և մի շարք այլ դեպքերում: Այդ է պատճառը, որ առկա է ներքին վարկանշման այնպիսի մոդելի պահանջ, որը համապարփակ տեղեկատվություն կտրամադրի, արդի կլիմի տվյալ ժամանակահատվածում, հասկանալի և դյուրին կիրառելի կլիմի, ինչպես նաև կհամապատասխանի տվյալ երկրի ֆինանսական համակարգի մենթալիտետին:

Բազելյան կոմիտեն [24, էջ 32] նշում է, որ բանկերը պետք է կարողանան ցուցադրել, որ իրենց ներքին վարկանշման մոդելները ապահով են և անփոփոխ ժամանակի ընթացքում: Բազելյան կոմիտեն խորհուրդ է տալիս օգտագործել անվճարունակության ռիսկերի հաշվարկման երկու մոտեցում՝ ստանդարտիզացված և մոտեցում՝ հիմնված ներքին վարկանշային համակարգի վրա [25, էջ 14-17]: Ստանդարտիզացված մոտեցումը իրենից ներկայացնում է ռիսկը կշռելու դիֆերենցված համակարգ և չի պարունակում մեծամասշտաբ հաշվարկներ: Համաձայն Բազել II ստանդարտիզացված մոտեցումը արտաքին վարկանիշերի, այսինքն միջազգային վարկանշման գործակալությունների՝ Moody's, Fitch և այլն, կողմից

փոխառու-իրավաբանական անձանց տրվող վարկանիշերի օգտագործումն է՝ վերջիններս կշռելով: Ի դեպ Բազել II-ի պահանջն է, որպեսզի ոչ միայն տվյալ գործակալության հետ լինի իր կողմից տրվող վարկանիշերի օգտագործման թույլտվություն, այլ նաև ձեռք բերվի համաձայնություն վերջիններիս անընդհատ օգտագործման վերաբերյալ: Ստանդարտիզացված մոտեցումը իրենից ներկայացնում է վարկանշայինի համեմատ բանկերի կողմից փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկերի (ինչը բանկի՝ տվյալ փոխառու-իրավաբանական անձի գծով վարկային ռիսկի հիմնական բաղադրիչն է) գնահատման ավելի դյուրին գնահատման մեթոդ [26, էջ 59]: Ներքին վարկանիշերի վրա հիմնված մոտեցումը իրենից ներկայացնում է անվճարունակության ռիսկերի հաշվարկման տեսակյունից ներքին վարկանշման մաթեմատիկական մոդել, որտեղ հաշվի են առնվում չորս գործոններ՝ փոխառու-իրավաբանական անձի սնանկության հավանականության ցուցանիշը, սնանկության դեպքում կորուստների տեսակարար կշիռը, սնանկության դեպքում կորուստների բացարձակ մեծությունը և վարկի ժամկետի մնացորդը: Թվարկված ցուցանիշների օգնությամբ հաշվարկվում են սպասելի և չնախատեսված կորուստների մեծությունները [25, էջ 14-17]:

Բանկերում ավելի ու ավելի մեծ դեր է տրվում կազմակերպությունների անվճարունակության ռիսկերի կառավարման գործընթացին, (քանի որ կազմակերպության անվճարունակության ռիսկի մեծացումը բերում է բանկերի՝ տվյալ փոխառու-իրավաբանական անձի գծով վարկային ռիսկի մեծացմանը) և, հետևաբար, վարկանշում հասկացությանը, վերջինս ունի օբյեկտիվ պատճառներ՝ կախված քաղաքական և տնտեսական միջավայրերի կտրուկ փոփոխությունների հետ [81, էջ 30]: Գոյություն ունեն ներքին վարկանշման համակարգերի մի քանի տեսակներ [26, էջ 59].

- համակարգ՝ հիմնված փոխառու-իրավաբանական անձի վարկունակության վերլուծության վրա,
- համակարգ՝ հիմնված ակտիվների գործառույթների կոնկրետ գործիքների վրա,
- համակարգեր, որոնք ներառում են և փոխառու-իրավաբանական անձի վարկունակության վերլուծություն, և ակտիվների գործառույթների գործիք-

ների վերլուծություն, ինչը բնականաբար ավելի համապարփակ արդյունք է ներկայացնում, թեպետև ավելի մեծածավալ վերլուծություն է պահանջում:

Մասնագիտական գրականության մեջ շատ հեղինակներ [18, 26, 27, 28, 29] են անդրադարձել կազմակերպությունների անվճարունակության ռիսկերի գնահատմանը վարկանշման միջոցով, համաձայն Բազելյան կոմիտեի պահանջին [7, էջ 41-42]: Քանի որ ներկայացվող ատենախոսության օբյեկտը բանկերում ու վարկային կազմակերպություններում սպասարկվող փոխառու-իրավաբանական անձիք են, ներկայացնենք վերոնշյալ հեղինակների` [18, 26], տեսանկյունը բանկերի կողմից կազմակերպությունների անվճարունակության ռիսկերի գնահատման վերաբերյալ: Մասնավորապես, վերջիններս նշել են, որ բանկերը հաճախ կարծում են, թե փոխառու-իրավաբանական անձի միայն անվճարունակության ռիսկերի վերլուծությունը վերջինիս և բանկի կամ վարկային կազմակերպության միջև հաստատուն և արդյունավետ համագործակցության երաշխիք է, սակայն դա այդպես չէ. պետք է վերլուծել նաև վերջինիս իրավունակությունը, վարկի ապահովվածությունը (մանրամասն նկարագրված է 3.3-ում) և այլն, և միայն վերջիններիս միագումար վերլուծության հիման վրա վարկային քաղաքականություն վարել: Ի դեպ, կան հեղինակներ ովքեր իրենց կողմից առաջարկվող վարկանշման մոդելներում մեծ դեր են հատկացնում վարկերի ապահովվածության վարկանշմանը [30, էջ197], և իրենց կողմից փոխառու-իրավաբանական անձին շնորհված վերջնական վարկանիշը իր մեջ պարունակում է նաև վարկի ապահովվածության վարկանիշ, ինչը կատարվում է հետևյալ կերպ. վերլուծվում են անշարժ և շարժական գրավի բաղադրությունը և որակը, իրացվելիության աստիճանը, թե որքանով է ծածկում բանկի կամ վարկային կազմակերպության կողմից փոխառու-իրավաբանական անձին տրամադրվելիք վարկը և այլն: Եթե 100%-ով վարկի ապահովվածության համար շնորհվում է 10 բալ, ապա մասնակի ապահովվածության դեպքում առավելագույն 10 բալը կրճատվում է այնքանով, որքան կազմում է չապահովված վարկի մասնաբաժինը: Սակայն երբեմն ռիսկերի նվազեցման միջոց հանդիսացող վարկերի ապահովվածությունը վատ ծառայություն է մատուցում բանկերին և վարկային կազմակերպություններին. մի կողմից վերջինս զգաստացնում է փոխառու-իրավաբանական անձանց, քանի որ պարտավորությունները չմարելու կամ մասնակիորեն

մարելու պարագայում վերջիններս կարող են կորցնել իրենց կողմից գրավադրված ակտիվները, իսկ մյուս կողմից «փափուկ բարձ» է վերջիններիս համար, քանի որ մեղմում է վարկը չմարելու դեպքում փոխառու-իրավաբանական անձանց համար ստեղծվելիք խնդիրների հետևանքները: Կազմակերպությունների անվճարունակության ռիսկերի գնահատման նպատակով կիրառվող որոշ հեղինակների կողմից [18, 26, 27] առաջարկված ներքին վարկանշման մոդելներում հստակեցված չէ, թե ինչպես են միմյանց հետ համագործակցում վարկի ապահովվածության (այսինքն վարկի վարկանիշը) և փոխառու-իրավաբանական անձի (վարկառուի) վարկանիշերը, այսինքն փոխառու-իրավաբանական անձի վերջնական վարկանիշի ո՞ր տոկոսն է կազմում վարկի ապահովվածության վարկանիշը: Որոշ հեղինակներ իրենց կողմից առաջարկվող վարկանշման մոդելների շրջանակներում կազմում են վարկանիշերի և սահմանաչափերի համապատասխանեցված սանդղակներ [27, էջ 81] (մանրամասն նկարագրված է 2.4-ում), որտեղ յուրաքանչյուր վարկանիշին կամ վարկանիշերի խմբին համապատասխանեցված է վարկի սահմանաչափ, որը բնականաբար կնվազի վարկանիշերի սանդղակի դրական արժեքներից դեպի բացասական արժեքներ տեղափոխվելուն զուգընթաց. օրինակ՝ A+ վարկանիշին համապատասխանում է 500 մլն. դրամը, իսկ B- վարկանիշին՝ 270 մլն. դրամ և այլն:

Ինչպես արդեն նշել էինք, փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկերի գնահատմամբ (ներքին վարկանշման մոդելների կիրառման միջոցով) զբաղվել են բազմաթիվ հեղինակներ: Ստորև ներակայացնենք վարկանշման մոդելների զարգացման մեջ մեծ ներդրում ունեցող հեղինակների աշխատանքների հիմնական դրույթներն ու առանձնահատկությունները:

Շատալուրս Ե. [27] մեծ ներդրում ունի բանկային ռիսկ-մեներջմենթում: Վերջինս առաջարկում է փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկերի գնահատման ներքին վարկանշման մոդել, որտեղ հիմք պետք է ընդունել ֆինանսական ցուցանիշները, բիզնես ռիսկի ցուցանիշները և վարկային պատմությունը [27, էջ 62]:

Չեղինակն առաջարկում է ֆինանսական վիճակի վերլուծության հինգ խումբ ցուցանիշներ՝

- Ֆինանսական լներիջի գործակիցներ, որոնք բնութագրում են սեփական և փոխառու կապիտալի հարաբերակցությունը:
- Շրջանառության գործակիցներ, որոնք թույլ են տալիս գնահատել տնտեսական ցիկլի ինտենսիվությունը:
- Շահութաբերության գործակիցներ, որոնք արտացոլում են փոխառու-իրավաբանական անձի սեփական և փոխառու կապիտալի օգտագործման արդյունավետությունը:
- Իրացվելիության գործակիցներ, որոնք ցույց են տալիս փոխառու-իրավաբանական անձի՝ ժամանակին պարտավորությունները մարելու ունակությունը:
- Պարտքի սպասարկման գործակից, որը դուրս է բերվում վաճառքից հասույթի և երկարաժամկետ ու կարճաժամկետ պարտավորությունների հարաբերությունից:

Յուրաքանչյուր ցուցանիշի գծով սահմանված են առավելագույն և նվազագույն բալեր, կախված փոխառու-իրավաբանական անձի ֆինանսական վիճակից դուրս է բերվում ֆինանսական ցուցանիշների վերջնական բալային գնահատական:

Բիզնես-ռիսկը որոշվում է 3 խումբ ցուցանիշների վերլուծության հիման վրա՝ կառավարման ռիսկ, շուկայում զբաղեցրած դիրք և գործարար հեղինակություն: Կառավարման ռիսկը դուրս է բերվում ստորև ներկայացված գործոնների միագումար վերլուծության հիման վրա [27, էջ 24].

- կառավարման որակ, որը գնահատվում է հետևյալ կերպ. բացահայտվում են սեփականատերերի կազմը և կառուցվածքը, տրվում է սեփականատերերի գործարար հեղինակության գնահատական, վերջիններիս կարևորությունը բիզնես, հասարակական կամ քաղաքական ասպարեզում, ինչպես նաև փոխառու-իրավաբանական անձի արտաքին օգնություն ստանալու հնարավորությունը ճգնաժամի պայմաններում:
- սեփականատերերի միջև կոնֆլիկտների (առկայության դեպքում) բացահայտում և վերջինիս մասշտաբների գնահատում:

- կառավարման համակարգի կենտրոնացվածության աստիճանի գնահատում (վերլուծվում է, թե կազմակերպության որ մակարդակներում են ընդունվում ռազմավարական որոշումներ և այլն):

Շուկայում զբաղեցրած դիրքը որոշվում է հետևյալ կերպ.

- տեղեկատվության առկայության դեպքում գնահատվում է շուկայում կազմակերպության ռազմավարության ադեկվատությունը,
- գնահատվում է բանկի ֆինանսական վիճակի կախվածությունը խոշոր հաճախորդների դրամական միջոցներից,
- վերլուծվում է բանկի վարկային քաղաքականությունը:

Ըստ հեղինակների [27] առաջարկած մոդելի գործարար հեղինակությունը գնահատվում է հետևյալ կերպ.

- ուսումնասիրվում է փոխառու-իրավաբանական անձի վերաբերյալ հասարակական կարծիքը, ՋԼՄ-ներում հրապարակումների ուղղվածությունը և այլն,
- հաշվի են առնվում պարզևները, նախկինում ունեցած բարձր վարկանիշերը, որոնք արտացոլում են փոխառու-իրավաբանական անձի հեղինակությունը,
- գնահատվում են արտաքին ֆինանսավորման առկայության նախադրյալները և այլն:

Բիզնես ռիսկի ցուցանիշների գնահատականը դուրս է բերվում կառավարման ռիսկի, շուկայում զբաղեցրած դիրքի և գործարար հեղինակության քանակական, որակական և փորձագիտական գնահատման հիման վրա՝ հինգ բալանի սանդղակով: Վարկային պատմությունը հեղինակը գնահատում է փոխառու-իրավաբանական անձի կողմից անցյալում վարկային պարտավորությունները ժամանակին մարելու վերաբերյալ տեղեկատվության վերլուծության հիման վրա: Վարկային պատմության ազդեցությունը վարկանիշի վրա գնահատվում է փորձագիտական եղանակով:

Ֆինանսական ռիսկի, բիզնես ռիսկի ցուցանիշների և վարկային պատմության վերլուծության հիման վրա Շատալովա Ե. շնորհում է վարկանիշ «A» –ից «E», համապատասխանաբար հուսալիության բարձր մակարդակից մինչև բացարձակ անհուսալիություն, կիրառվում են նաև «A» – ից մինչև «D» միջանկյալ արժեքներ. օրինակ՝ «A+», «A» և «A-», որից հետո հեղինակները առաջարկում են պարբերական մոնիթո-

րինգ [27, էջ 40-41]: Սակայն, որպեսզի կազմակերպությունների անվճարունակության ռիսկերի գնահատման նպատակով կիրառվող Շատալովա Ե.-ի առաջարկած ներքին վարկանշման մոդելի շրջանակներում շնորհված վարկանիշը ավելի ամբողջական լինի, պետք է վերջինիս մեջ ներառել նաև տվյալ ճյուղի, տվյալ ճյուղում փոխառու-իրավաբանական անձի դիրքի և մրցունակության, և, ինչպես նշում է Բազելյան կոմիտեն [24], փոխառու-իրավաբանական անձի զարգացման հեռանկարների վերլուծության ցուցանիշների բալային գնահատականները: Բացի այդ, միմիայն փոխառու-իրավաբանական անձի վճարունակությունը գնահատելով չի կարելի դատել տրամադրվող վարկային ռեսուրսի անվտանգության մասին, պետք է վերլուծել նաև երաշխիքները, վարկերի ապահովվածությունը և այլն: Շատալովա Ե. վարկանիշ շնորհելուց հետո համապատասխանեցնում է բանկի վարկային ռիսկի չափը շնորհված վարկանիշին, այսինքն, եթե ներքին վարկանշման մոդելի շրջանակներում փոխառու-իրավաբանական անձին շնորհվել է «A+» վարկանիշ, հետևաբար բանկի՝ տվյալ փոխառու-իրավաբանական անձի գծով վարկային ռիսկը մինիմալ է, սակայն նման մոտեցումը ոչ միշտ է իրեն արդարացնում. վարկանիշը տրվում է կազմակերպության անվճարունակության ռիսկերի համալիր գնահատման հիման վրա, ինչը բանկի՝ տվյալ փոխառու-իրավաբանական անձի գծով վարկային ռիսկի հիմնական բաղադրիչն է, սակայն վարկանշման մոդելներում ոչ միշտ են վերլուծվում կազմակերպության երաշխիքները, իրավունակությունը, գրավը, որոնք ևս բանկի վարկային ռիսկի բաղադրիչներ են:

Մասնագիտական գրականության մեջ այլ հեղինակներ [28] առաջարկում են կազմակերպությունների անվճարունակության ռիսկերը գնահատելու նպատակով վարկանիշ շնորհելու համար կառուցել մատրիցներ, որտեղ կհամադրվեն փոխառու-իրավաբանական անձի վարկունակությունը և վարկերի ապահովվածությունը ըստ դասերի, և, կախված այդ երկու կատեգորիաների արժեքների գումարի միջակայքից, շնորհում են վարկանիշ [18, էջ 47]. օրինակ՝ 10-15 բալի դեպքում շնորհվում է «A», իսկ 15-20 բալի դեպքում «A+» վարկանիշը և այլն: Սակայն բանկի կամ վարկային կազմակերպության կողմից փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկը գնահատելու նպատակով վարկանշման նման մոդելի ընտրությունը կախված է մի շարք խնդիրներից, քանի որ տվյալ մոդելը պարունակում է թերություններ. օրինակ՝

չկա փոխառու-իրավաբանական անձանց հավաքած բալերի և վերջիններիս համապատասխանեցված վարկանիշերի սանդղակ, չկան սկզբունքներ, ըստ որոնց կարելի է որոշել յուրաքանչյուր միջակայքի բալերի քանակը, հեղինակների կողմից տրված չեն ռիսկերի ապահովվածության գնահատման չափանիշներ և ֆինանսական ցուցանիշների հստակ խմբեր և այլն: Կան բանկեր, որոնք այդ մոդելի միայն մեկ փուլն են օգտագործում. աշխատում են կազմակերպության անվճարունակության գնահատված արժեքի հետ, իսկ ռիսկերի ապահովվածության ցուցանիշը կիրառում են որպես հավելյալ բալ. Օրինակ, երբ բանկը կամ վարկային կազմակերպությունը շահագրգռված է տվյալ փոխառու-իրավաբանական անձի հետ համագործակցության մեջ և անտեսում է տվյալ ժամանակահատվածում վերջինիս մոտ առկա խնդիրները՝ կախված վարկի ապահովվածության հետ:

Յեղիմակ Ենդովիցկի Դ. [18, էջ 49] փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկերի գնահատման նպատակով առաջարկել է կիրառել վարկանշման մեթոդական մոտեցում, որը բաղկացած է հետևյալ փուլերից.

1. փոխառու-իրավաբանական անձի գործունեության բնագավառի վերլուծություն, ինչն իր մեջ ներառում է վերջինիս գործունեության ոլորտի, հիմնական արտադրանքի շուկայի վերլուծությունը և այլն,
2. փոխառու-իրավաբանական անձի տնտեսական ներուժի վերլուծություն, ինչն իր մեջ ներառում է տեղեկատվական և ինովացիոն ներուժի վերլուծություն, ինչպես նաև աշխատուժի ռեսուրսի օգտագործման արդյունավետության վերլուծություն և այլն,
3. ֆինանսավորման աղբյուրների վերլուծություն, ինչն իր մեջ ներառում է կապիտալի հիմնական աղբյուրների գնահատում,
4. ֆինանսական ցուցանիշների վերլուծություն, ինչը ենթադրում է փոխառու-իրավաբանական անձի շահութաբերության վերլուծություն, եկամուտների և ծախսերի վերլուծություն և այլն,
5. կառավարման վերլուծություն, ինչը ենթադրում է սեփականատերերի կազմի, կոնֆլիկտների առկայության վերլուծություն և այլն,

6. գործարար հեղինակության գնահատում, որի շրջանակներում գնահատվում են վարկային պատմությունը, կառավարիչների հեղինակությունը և այլն,
7. ակտիվների ծավալի և կազմի վերլուծություն, որը ենթադրում է դրամական հոսքերի և ակտիվների վերլուծություն,
8. փոխառու-իրավաբանական անձին ներքին վարկանիշի շնորհում:

Վերլուծության արդյունքների հիման վրա հեղինակը առաջարկում է շնորհել ներքին վարկանիշ: Հեղինակի կողմից առաջարկվող փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկերի գնահատման նպատակով կիրառվող վարկանշման մոդելը ավելի ընդգրկում է, քան այլ հեղինակների կողմից առաջարկվող վերը նկարագրված մոդելները [27, 28]: Մասնավորապես, ինչ վերաբերվում է բնագավառի (ճյուղի կառուցվածք, ճյուղում առկա մրցակցության մակարդակ) վերլուծությանը, ապա շատ հեղինակներ թուցիկ են անդրադառնում այս հարցին, քանի որ վերջինիս ուսումնասիրությունը ժամանակատար է: Ինչ վերաբերվում է փոխառու-իրավաբանական անձի տնտեսական ներուժի վերլուծությանը, ապա դժվար է բացահայտել, թե ինչ չափանիշներ կան վերջինս գնահատելու համար: Ենդովիցկի Դ. փոխառու-իրավաբանական անձին վարկանիշ շնորհելուց հետո առաջարկում է վերլուծել վարկերի ապահովվածությունը: Սակայն շնորհված վարկանիշը և վարկերի ապահովվածության վերլուծությունները ոչ մի կերպ չեն սինթեզվում հեղինակի կողմից, այդպիսով, դարձնելով վերջինիս առաջարկած մոդելը ընտրողաբար կիրառվող, այսինքն յուրաքանչյուր բանկ կամ վարկային կազմակերպություն, իր հայեցողությամբ, կարող է ներկայացված մոդելից իրեն համար գերադասելի փուլեր ներառել իր ներքին վարկանշման մոդելի մեջ կամ ընդհանրապես վարկ տրամադրելու վերաբերյալ որոշում կայացնի միայն առաջարկվող մոդելի որոշ փուլեր իրագործելով (օրինակ՝ ստանա կազմակերպության անվճարունակության մակարդակի մասին տեղեկատվություն միայն ֆինանսական ցուցանիշների վերլուծության հիման վրա) և չիրականացնի վարկանիշի շնորհում, ինչպես պահանջում է Բազելյան կոմիտեն [7, էջ 41-42]: Ինչ վերաբերվում է մոնիթորինգին, ապա Ենդովիցկի Դ. առաջարկում է վերջինիս հաճախականությունը պայմանավորել շնորհված վարկանիշով, այսինքն, որքան շնորհված ներքին վարկանիշը բարձր է, այդքան վերանայելու ժամանակահատվածը՝ ավելի երկար և հակառակը: Սակայն նման մոտեցումը օբյեկտիվ չէ, քանի որ յուրաքանչյուր վարկանիշի համար

բանկը կամ վարկային կազմակերպությունը սահմանում է համագործակցության տարբեր պայմաններ (տարբեր սահմանաչափեր, վարկի ապահովվածության տարբեր աստիճան և այլն), և եթե որևէ փոխառու-իրավաբանական անձի վարկանիշը A+ -ից տեղափոխվում է A-, ապա հետևանքները կարող են համարժեք լինել մեկ այլ փոխառու-իրավաբանական անձի C+ -ից մինչև C- տեխսփոխվելուն:

Չեղինակ Լավրուշին Օ. [26] ևս մեծ ներդրում ունի բանկային ռիսկ-մեներջմենթում, ինչն իր արտացոլումն է գտել վերջինիս կողմից հրապարակված մի շարք աշխատություններում: Լավրուշին Օ. նկարագրել է փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկի գնահատման նպատակով իրականացվող ներքին վարկանշման ողջ գործընթացը և առանձնացրել վարկանշման հետևյալ փուլերը [26, էջ51]

1. երկրի մակրոտնտեսական վերլուծություն,
2. ճյուղի վերլուծություն,
3. փոխառու-իրավաբանական անձի շուկայում զբաղեցրած դիրքի վերլուծություն,
4. ֆինանսական վիճակի վերլուծություն,
5. կառավարման գնահատում,
6. ներքին վարկանիշի շնորհում:

Առաջին և երկրորդ փուլերը պահանջում են մեծամասշտաբ վերլուծություններ և մեծամասամբ իրականացվում են միջազգային վարկանշային գործակալությունների կողմից: Լավրուշին Օ. նշում է [26, էջ 52], որ ֆինանսական վիճակի վերլուծությունը սովորաբար կատարվում է հետևյալ երկու ուղղություններով`

1. հաշվապահական հաշվառման կառուցվածքային վերլուծություն,
2. ֆինանսական գործակիցների հաշվարկ:

Հաշվապահական հաշվառման կառուցվածքային վերլուծության ժամանակ հաշվապահական հաշվեկշիռը ներկայացվում է ոչ թե թվային, այլ տոկոսային հարաբերությամբ` այս կամ այն հոդվածի մասնաբաժնի միտումը ակտիվների ընդհանուր գումարի մեջ բացահայտելու նպատակով: Այսպիսով հանգում ենք 2 դրույթի.

1. ֆինանսական վերլուծության համար առանձնացնել ցուցանիշների խումբ, որոնց հիման վրա դուրս բերել այն գործակիցները, որոնք համալիր կերպով կգնահատեն փոխառու-իրավաբանական անձի գործունեությունը,
2. ստացված արդյունքները համեմատել այն արդյունքների հետ, որոնք համարվում են նորմատիվային:

Առաջին կետը իրագործելիս հարց է առաջանում, թե որքան ֆինանսական ցուցանիշ ընտրել վերլուծության համար, իսկ երկրորդ կետը իրագործելիս պարզ չէ, թե ցուցանիշների որ արժեքներն են համարվում նորմատիվային: Հեղինակ Լավրուշին Օ. փոխառու-իրավաբանական անձանց ֆինանսական վերլուծության նպատակով առաջարկում է առանձնացնել գործակիցների հետևյալ խմբերը [26, էջ 53].

1. իրացվելիության գործակիցներ,
2. գործարար ակտիվության գործակիցներ,
3. շահութաբերության գործակիցներ,
4. ֆինանսական կայունության գործակիցներ:

Հեղինակը առաջարկում է ընտրել ֆինանսական գործակիցները, վերլուծել, հաշվարկել, բերել տոկոսային արտահայտության, այնուհետև հասկանալ, թե յուրաքանչյուր ստացված արժեքին ինչ բալ համապատասխանեցնել: Ֆինանսական ցուցանիշները վերլուծելիս կարևոր է աչքի անցկացնել, թե ինչպիսի արժեքներ են դրանք ընդունել նախորդ ժամանակահատվածում՝ բացահայտելու համար վերջիններիս միտումը, քանի որ այսօրվա նույնիսկ «լավ» ցուցանիշը կարող է «վատը» լինել նախորդ ժամանակահատվածի դրությամբ տվյալ ցուցանիշի ընդունած արժեքի հետ համեմատելիս: Սեկ այլ հեղինակ՝ Գ. Կոռոբովան [29, էջ 311-314] փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկերի համալիր գնահատման նպատակով առաջարկում է կիրառել ներքին վարկանշման մոդել, որի հիմքում ընկած են ցուցանիշների հետևյալ չորս խմբերը՝ իրացվելիության գործակիցներ, ակտիվների օգտագործման արդյունավետության գործակիցներ, ֆինանսական լսերիջի և շահութաբերության գործակիցներ: Կախված, թե վերջիններիս վերլուծության արդյունքում որքան բալեր է հավաքել փոխառու-իրավաբանական անձը, շնորհվում է վարկանիշ: Հեղինակը առաջարկում է վարկանիշերի ընդամենը երեք դաս, թեպետ Բազելյան կոմիտեն նշում է,

որ ավելի նպատակահարմար է, որպեսզի բանկերը կիրառեն վարկանիշերի մոտավորապես տասը դաս (մանրամասն նկարագրված է 2.1-ում): Բացի այդ, հեղինակը չի կատարում փորձագիտական գործոնների, ինչպես նաև փոխառու-իրավաբանական անձի գործունեությանը բնորոշ ռիսկերի գնահատում:

Չեղինակ Ստուպակով Վ. [31] առաջարկում է փոխառու-իրավաբանական անձանց շնորհել վարկանիշ հիմնվելով հետևյալ ցուցանիշների խմբերի վրա՝ իրացվելիություն, ֆինանսական կայունություն և անկախություն, գործարար ակտիվություն և շահութաբերություն [31, էջ 159-162]: Կազմակերպությունների անվճարունակության ռիսկերի գնահատման նպատակով կիրառվող առաջարկվող վարկանշման մոդելի հիմքը հանդիսանում է փաստացի ֆինանսական վիճակի՝ էտալոնայինի (նորմատիվայինի) հետ համեմատությունը: Էտալոնային ֆինանսական վիճակը բնութագրվում է վարկանշային մոդելի մեջ առկա ֆինանսական ցուցանիշների նորմատիվային (նախընտրելի) արժեքներ ընդունելով: Չեղինակը առաջարկում է օգտագործել չորսից վեց ֆինանսական ցուցանիշներ: Ստուպակով Վ. նկարագրում է երկու տեսակի մոդելներ՝ չորսգործոնային և հնգագործոն: Չորսգործոնային մոդելի մեջ մտնում են հետևյալ ֆինանսական ցուցանիշները.

1. ընթացիկ իրացվելիության գործակից (նորմատիվային արժեք՝ $K1 \geq 2$),
2. սեփական միջոցներով ապահովվածության գործակից (նորմատիվային արժեք՝ $K2 \geq 0,1$),
3. շրջանառու կապիտալի շրջանառության գործակից (նորմատիվային արժեք՝ $K3 = 6$),
4. սեփական կապիտալի շահութաբերության գործակից (նորմատիվային արժեք՝ $K4 \geq 0,2$):

Վերլուծվող ֆինանսական ցուցանիշների կշիռները հակադարձ համեմատական են ցուցանիշների քանակի և նորմատիվային արժեքների արտադրյալին:

Վարկանիշի շնորհման հնգագործոն մոդելը նման է չորսգործոնայինին. նույնպես օգտագործվում են ընթացիկ իրացվելիության և սեփական միջոցներով ապահովվածության ցուցանիշներ, այնուհետև հաշվարկվում են ակտիվների շրջանառության ցուցա-

նիշներ ($K_{աշ} < 2,5$), կոմերցիոն մարժա($K_{մ}$), սեփական կապիտալի շահութաբերություն ($K_{սկշ} \geq 0,2$) և այլն:

Կազմակերպությունների անվճարունակության ռիսկերի գնահատման նպատակով կիրառվող վարկանշման հնգագործոն մոդելում վերլուծվող ցուցանիշների կշիռները հակադարձ համեմատական են յուրաքանչյուր ցուցանիշի նորմատիվային արժեքին:

Ըստ հեղինակի, եթե ֆինանսական ցուցանիշները հավասար են իրենց իսկ նորմատիվային արժեքների նվազագույնին, ապա ֆինանսական վիճակը բնութագրվում է բավարար գնահատականով: Եթե վերջինս մեկից փոքր է, ապա դա վկայում է ֆինանսական վիճակի անբավարար լինելու մասին, ավելին, որքան նորմատիվային և փաստացի արժեքների տարբերությունը մեծ է, այնքան ֆինանսական վիճակը ավելի անբավարար է: Հեղինակը նշում է, որ այնքան էլ կարևոր չեն ընտրված ցուցանիշների խմբերը, որքան կարևոր է, որ վերջիններս միմյանց հետ չունենան կորելյացիոն կապ և կարողանան համապարփակ նկարագրել փոխառու-իրավաբանական անձի ֆինանսական վիճակը: Սակայն այն դեպքում, երբ յուրաքանչյուր բանկ կամ վարկային կազմակերպություն փոխառու-իրավաբանական անձին ներքին վարկանիշ շնորհելու նպատակով կարող է ինքնուրույն ընտրել վարկանշային մոդելի մեջ ընդգրկվող ցուցանիշները, կարող է անհրաժեշտություն առաջանալ փոխել կշիռների հաշվարկման եղանակը, բացի այդ, երբ հեղինակը նկարագրում է ֆինանսական գործակիցների նորմատիվային արժեքները, պարզ չէ, թե արդյոք անհերքելի են գործակիցների ընդունած արժեքների միջակայքերը, արդյոք վերլուծված են օբյեկտիվ պատճառները, որոնց դեպքում ցուցանիշները կարող էին շեղում ունենալ և այլն: Տվյալ մեթոդական մոտեցումն ավելի ամբողջական կլինի, եթե այն լրացվի ցուցանիշների խմբերով, ինչպես նաև ձևավորվեն վարկանիշերի և տրամադրվող վարկերի սահմանաչափերի համապատասխանեցված սանդղակներ:

Հեղինակ Յ. Հակոբյանը [32, էջ 99-103] իր ատենախոսության շրջանակներում առաջարկում է բանկերի կողմից փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկերի գնահատման մոդել, որտեղ վերլուծվում են հետևյալ ցուցանիշներն ու գործակիցները.

1. մատակարարների քանակ,
2. մատակարարների հուսալիություն,
3. պահեստային տարածքների առկայություն և անհրաժեշտություն,
4. ընդհանուր իրացվելիության գործակից,
5. բացարձակ իրացվելիության գործակից,
6. սեփական և փոխառու միջոցների հարաբերակցության գործակից,
7. ֆինանսական անկախության գործակից,
8. սեփական միջոցների շրջանառության գործակից,
9. կորուստների առկայության վերլուծություն,
10. աուդիտորական եզրակացությունների առկայություն,
11. վարկի օգտագործման ժամկետ,
12. վարկի գումարի համեմատ հաշվարկային հաշվում միջին ամսական մուտքերի վերլուծություն,
13. սեզոնային մատակարարներից կախվածություն,
14. փոխառու-իրավաբանական անձի գործունեության ժամկետ,
15. բաժնետերերի խորհրդի հերթական հավաքի ժամկետ,
16. նախորդ վարկերի մարման ժամկետների և աղբյուրների վերլուծություն,
17. փոխառու-իրավաբանական անձի գործարար ակտիվության վերլուծություն,
18. փոխառու-իրավաբանական անձի կադրային քաղաքականության վերլուծություն,
19. ռեսուրսներով ապահովվածության գնահատում,
20. մարքեթինգի վերլուծություն,
21. գործունեության դիվերսիֆիկացիայի վերլուծություն,
22. լրացուցիչ արտադրական հզորությունների անհրաժեշտություն (երկարաժամկետ վարկերի համար),
23. փոխառու-իրավաբանական անձի գնահատում ըստ վերջինիս կանոնադրական կապիտալի մեծության:

Յուրաքանչյուր ցուցանիշի համար սահմանվում են առավելագույն և նվազագույն բալեր. օրինակ՝ մատակարարների հուսալիություն ցուցանիշը գնահատվում է հետևյալ կերպ.

- բոլորն ունեն գերազանց հեղինակություն -10 բալ,
- մեծ մասը որպես գործընկեր հուսալի են - 5 բալ,
- հիմնական մատակարարները անհուսալի են -1 բալ:

Այնուհետև, ըստ փոխառու-իրավաբանական անձի հավաքած բալերի քանակի, շնորհվում է ներքին վարկանիշ: Հեղինակը առաջարկում է բացի վերը վերլուծված ցուցանիշներից, ուշադրություն դարձնել նաև պոտենցիալ փոխառու-իրավաբանական անձի գործարար համբավին, որի մասին պատկերացում պետք է կազմվի բանկի համապատասխան աշխատակցի կողմից վերջինիս հետ անձնական զրույցի միջոցով: Հեղինակը առաջարկում է նաև տվյալ զրույցը գնահատել 5 բալանի սանդղակով և ներառել վերջինս վերջնական բալային գնահատականի մեջ վարկանիշ շնորհելու նպատակով: Հեղինակը ներկայացրել է նաև ըստ ռիսկայնության աստիճանի փոխառուների դասակարգման սանդղակը, որտեղ առանձնացված է 5 վարկանշային դաս.

1. Հուսալի փոխառու՝ բալերի ընդհանուր գումարը՝ 250-ից ավելի, ռիսկի գործակիցը՝ 0.0-0.1:
2. Փոխառու նվազագույն ռիսկայնությամբ՝ բալերի քանակը՝ 200-250, ռիսկի գործակիցը՝ 0.1-0.3:
3. Փոխառու միջին ռիսկայնությամբ՝ բալերի քանակը՝ 150-200, ռիսկի գործակիցը՝ 0.3-0.5:
4. Փոխառու բարձր ռիսկայնությամբ՝ բալերի քանակը՝ 100-150, ռիսկի գործակիցը՝ 0.5-0.7:
5. փոխառու բացարձակ ռիսկայնությամբ՝ բալերի քանակը՝ 100-ից ցածր, ռիսկի գործակից՝ 0.7-1.0:

Ինչ վերաբերվում է տրամադրվող վարկի սահմանաչափի որոշմանը, ապա հեղինակը առաջնորդվում է այն սկզբունքով, որ եթե փոխառու-իրավաբանական անձի հավաքած բալերի գումարը հավասար է օպտիմալ բալերի քանակին, որը որոշվում է նախկինում տրամադրված և ժամանակին մարված վարկերի վիճակագրական վերլու-

ծությունից ելնելով, ապա վերջինիս վարկի սահմանաչափը կլինի առավելագույնը: Համապատասխանաբար, բալերի քանակի նվազմանը զուգընթաց սահմանաչափը կկրճատվի:

Հեղինակի կողմից ներկայացված կազմակերպությունների անվճարունակության ռիսկերի գնահատման նպատակով կիրառվող ներքին վարկանշման մոդելը բավականին ծավալուն է և, իսկապես, բանկերում կիրառվող որոշ վարկանշային մոդելներ ի վիճակի է ավելի համապարփակ դարձնել, սակայն որոշ ցուցանիշների վերլուծությունը և դրա արդյունքում տրված բալերի շնորհումը ոչ միշտ է հիմնավորված: Օրինակ՝ մատակարարների քանակը կարող է այդքան էլ էական չլինել համեմատած մատակարարների գործունեության ժամկետի հետ, ինչպես նաև մատակարարների հեղինակությունը դժվար է վերլուծել, քանի որ քիչ են վերջիններիս վերաբերյալ հրապարակումները, վերլուծությունները, կարծիքների արտահայտումը և այլն: Հեղինակի առաջարկած մոդելն իր մեջ ներառում է ավելի շատ ցուցանիշներ, քան ընդունված է կիրառել ԱՄՆ -ի և Եվրոպայի բանկերում կիրառվող ներքին վարկանշման մոդելներում, դա մի կողմից դրական ազդեցություն կարող է ունենալ և վարկանիշը ավելի իրատեսական դարձնել, սակայն մյուս կողմից որոշ վերլուծված ցուցանիշներ կարող են կորեյացիոն կապ ունենալ միմյանց հետ, ինչը կարող է խեղաթյուրել վերջնական բալային գնահատականը: Օրինակ՝ ինչ վերաբերվում է «կազմակերպության կադրային քաղաքականություն» ցուցանիշին, ապա վերջինիս իմաստը որոշ չափով արդեն պարփակված է «գործունեության ժամանակահատված», «նախորդ վարկերի մարման ժամկետներ և աղբյուրներ» և «կորուստների առկայություն» ցուցանիշներում: Ինչ վերաբերում է «դիվերսիֆիկացիա» ցուցանիշին, ապա վերջինիս ընդգրկումը վարկանիշ շնորհելու նպատակով ֆինանսական վերլուծության մեջ սուբյեկտիվ է. կազմակերպությունը կարող է գործել մեկ ուղղությամբ, սակայն երկար տարիների հաջող գործունեության պատմություն ունենալ: Ինչ վերաբերվում է սահմանաչափերին, ապա վերջիններս հեղինակը համապատասխանեցնում է ստացված վարկանիշի հետ, այնինչ ցանկալի կլիներ վերլուծել նաև վարկի ապահովվածությունը՝ երաշխավորություններ, երաշխիքներ և այլն: Ինչ վերաբերվում է ներքին վարկանշման մոդելում հեղինակի կողմից առաջարկվող փոխառու-իրավաբանական անձի և բանկի

համապատասխան մասնագետի միջև «անձնական գրույցի» ներդրմանը, ապա նմանատիպ ցուցանիշների ներառումը ավելորդ պոտենցիալ սուբյեկտիվիզմի դրսևորման աղբյուր է, հատկապես այն պարագայում, երբ մշակված չէ հոգեբանական թեստ պոտենցիալ վարկառուի հետ նմանատիպ գրույց վարելու համար, բացահայտված չէ, թե արդյոք բանկի համապատասխան մասնագետը ի վիճակի կլինի ճիշտ գնահատել գրույցը և համապատասխան բալեր շնորհել գրույցի վերլուծության հիման վրա և այլն:

Մեկ այլ հեղինակ՝ Կ. Արմենակյանն իր ատենախոսության մեջ [33, էջ 74], [33, էջ 40] ևս անդրադառնում է կազմակերպությունների անվճարունակության ռիսկերի գնահատմանը և առաջարկում ներքին վարկանիշ շնորհելու նպատակով կիրառել հետևյալ ցուցանիշները՝ բացարձակ իրացվելիություն, սեփական շրջանառու միջոցների մանրում, սեփական շրջանառու միջոցներով ընթացիկ գործունեության ապահովվածություն՝ սեփական շրջանառու միջոցներ հարաբերած ընթացիկ ակտիվներին, երկարաժամկետ ֆինանսական անկախություն, ակտիվների շրջանառություն և ներդրված կապիտալի շահութաբերություն: Այս ցուցանիշների վերլուծության արդյունքում ստացված արժեքների հիման վրա հեղինակը առաջարկում է փոխառու-իրավաբանական անձանց դասել հետևյալ չորս խմբերից որևէ մեկին.

1. բարձր շահութաբերությամբ փոխառու-իրավաբանական անձիք, որոնք հետագա զարգացման համար ունեն հիանալի հնարավորություններ,
2. շահութաբերության բավարար մակարդակով փոխառու-իրավաբանական անձիք,
3. ֆինանսական կայունության սահմանագծում գտնվող փոխառու-իրավաբանական անձիք,
4. խորը ճգնաժամի մեջ գտնվող փոխառու-իրավաբանական անձիք:

Այնուհետև հեղինակը հաշվարկում է յուրաքանչյուր վերլուծվող ցուցանիշի միջին ճյուղային փաստացի արժեքները և համեմատում ստացված արդյունքների հետ. օրինակ՝ եթե վերլուծության արդյունքում բացահայտվի, որ փոխառու-իրավաբանական անձի ֆինանսական ցուցանիշների 75%-ը և ավելին համապատասխանում է միջին ճյուղային փաստացի արժեքներին, ապա վերջինս դասվում է առաջին խմբում և այլն:

Սակայն հեղինակի առաջարկած մոդելը ավելի ամբողջական կլիներ, եթե վերլուծվեն վարկի ապահովվածությունը, կազմվեն անվճարունակության ռիսկի մակարդակի՝ վարկանիշի, վարկի սահմանաչափի ու կիրառվող տոկոսադրույքի

համապատասխանեցված սանդղակներ: Բացի այդ, հեղինակը փաստացի համեմատում է ճյուղի ներսում մրցակցող փոխառու-իրավաբանական անձանց ֆինանսական գործակիցները, հնարավոր է, որ ճյուղում առկա նույնիսկ «ամենալավ» փոխառու-իրավաբանական անձը վարկունակ և վստահելի չէ:

Չեղինակ Ա. Ջանվեյանը իր ատենախոսության մեջ [34, էջ 94-96] կարծիք է արտահայտում, որ կազմակերպությունների անվճարունակության ռիսկերը պետք է գնահատել հետևյալ գործակիցների հիման վրա՝ բացարձակ իրացվելիություն, արագ իրացվելիություն, ընթացիկ իրացվելիություն և ֆինանսական անկախության կամ սեփական կապիտալի կենտրոնացում: Ներքին վարկանիշի շնորհունը հեղինակը իրականացրել է շնորհվող միավորների հաշվարկման միջոցով, իսկ բալերի հաշվարկը իրականացրել է յուրաքանչյուր գործակցի դասի (1,2,3,4) և ընդհանուր՝ 100 միավորի մեջ գործակցի մասնաբաժնի (20, 20, 30, 30) բազմապատկման եղանակով: Այն կազմակերպությունները, որոնք համարվում են առաջին դասի, պետք է ունենան 100-ից 150բալ, երկրորդ դասը՝ 151-200, երրորդ դասը 201-250 և չորրորդ դասը՝ 251-300: Յուրաքանչյուր դասի վարկառուի վարկավորումը հեղինակը առաջարկում է իրականացնել համապատասխան ապահովվածության առկայության դեպքում, իսկ սահմանվող տոկոսադրույքը համապատասխանաբար կախված է տրամադրված վարկի ապահովվածության ձևից:

Սակայն հեղինակը չի պարզաբանում, թե ինչ սկզբունքով է գործակցին տրվում 20 կամ 30 մասնաբաժինը, բացի այդ այն հարցը, որ կիրառվող տոկոսադրույքը կախված է ապահովվածության ձևից և ծավալներից փոքր-ինչ վիճելի է, քանզի փաստացի միջին մակարդակի ներքին վարկանիշ ունեցող, բայց լավ ապահովվածություն տրամադրած փոխառու-իրավաբանական անձը կարող վարկավորվել ավելի ցածր տոկոսադրույքով, քան բարձր վարկանիշ ունեցող, բայց ոչ բավարար ապահովվածություն տրամադրող փոխառու-իրավաբանական անձը:

ԳԼՈՒԽ 2. ՎԱՐԿԱՆՇԱՅԻՆ ԳՆԱՐԱՏՈՒՄԸ ԻԲՐԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՔ

2.1. Վարկանշային գնահատման գործընթացը և վարկանիշի օգտագործման ուղղությունները:

Վարկանիշը իրենից ներկայացնում է փոխառու-իրավաբանական անձի վարկունակության անկախ, անկողմնապահ, վստահելի և համապարփակ գնահատական [82, էջ 286-287], որը ծառայում է բանկին կամ վարկային կազմակերպությանը, որպես վերջինիս հետ համագործակցության ուղեցույց: Այսինքն, վարկանիշը ամենահասկանալի, դյուրըմբռնելի ցուցիչն է վերջիններիս համար, որի մեկ սիմվոլն իր մեջ ներառում է վարկանշման գործընթացում վերլուծվող հսկայական քանակի տեղեկատվության ուսումնասիրություն, սինթեզում և վերլուծություն: Վարկանիշը, ըստ էության, բանկի կամ վարկային կազմակերպության երաշխիքն է վարկային ռեսուրսի ճիշտ կառավարման պարագայում: Այն դեպքում, երբ փոխառու-իրավաբանական անձն ունի միջազգային վարկանշման գործակալությունների կողմից շնորհված արտաքին վարկանիշ, բանկը կամ վարկային կազմակերպությունը վարկային գործարքի ընթացքում պարզապես հիմնվում է տվյալ վարկանիշի վրա: Սակայն, ինչպես արդեն նշել էինք, փոխառու-իրավաբանական անձանց քիչ տոկոսն է վարկանշված միջազգային վարկանշային գործակալությունների կողմից՝ մեծամասշտաբ ծախսերի, պահանջվող մեծաքանակ տեղեկատվության և այլ գործոնների պատճառով: Բացի այդ փոքր և միջին փոխառու-իրավաբանական անձիք շատ հաճախ չեն զգում վարկանշման միջազգային գործակալություններում վարկանշվելու անհրաժեշտությունը, քանի որ գործում են մեծամասամբ ներքին շուկայի համար, իրենց բավարարում են հայրենական բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրած վարկային ռեսուրսների ծավալները և պայմանները, ինչպես նաև վերջիններս չունեն միջազգային շուկա դուրս գալու նկատառումներ: Յուրաքանչյուր երկրում գոյություն ունեն փոխառու-իրավաբանական անձանց գործունեության առանձնահատկություններ՝ պայմանավորված շուկայի մեծությամբ, բանկային մենթալիտետով, քաղաքական դաշտով և այլն: Վերոնշյալ պատճառները հաշվի առնելով՝ Բազելյան կոմիտեն խորհուրդ է տալիս, որպեսզի յուրաքանչյուր բանկ ունենա իր ներքին վարկանշման մոդելը, որի հուսալիությունը բանկը պետք է

ապացուցի ժամանակի ընթացքում [24, էջ 32]: Հարկ է անդրադառնալ նաև փոխառու-իրավաբանական անձանց կողմից վարկանշվելու պատրաստականությանը և անհրաժեշտությանը. փոխառու-իրավաբանական անձանց ձեռնտու է վարկանշումը, քանի որ լավ վարկանիշը կապահովի վերջիններիս հանդեպ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող կազմակերպությունների (կոնտրագենտների) վստահությունը, դյուրացնում է արտերկրից վարկային ռեսուրսներ ներգրավելու գործընթացը, ինչպես նաև ներդրումային տեսանկյունից բարձրացնում է փոխառու-իրավաբանական անձանց գրավչության մակարդակը: Օբյեկտիվ վարկանիշը նվազեցնում է ֆինանսական կազմակերպությունների կողմից վճարունակ փոխառու-իրավաբանական անձանց՝ վարկային ռեսուրսների մասնակի կամ ամբողջությամբ տրամադրման մերժման ռիսկը: Օրինակ՝ դեռ հինգից տասը տարի առաջ առկա էին բավական քանակի դեպքեր, երբ բանկերը վճարունակության սխալ գնահատման պատճառով, ռիսկը նվազեցնելու նպատակով վճարունակ փոխառու-իրավաբանական անձանց տրամադրում էին բարձր տոկոսադրույքով վարկային ռեսուրսներ կամ վճարունակությանը չհամապատասխանող սահմանաչափեր էին կիրառում վերջիններիս հանդեպ:

Վարկանշման սկզբունքներն են՝ անկողմնապահությունը, փոխառու-իրավաբանական անձի կողմից վարկանշման համար անհրաժեշտ ողջ տեղեկատվության տրամադրումը, վարկանիշերի համապատասխան սանդղակի առկայությունը, վարկանիշերին համապատասխանեցված սահմանաչափերի սանդղակի առկայությունը, վարկանիշերի բավարար քանակի դասերի առկայությունը, մոնիթորինգը և այլն: Ներքին վարկանշման յուրաքանչյուր մոդել ունի իր առանձնահատկությունները: Վարկանշման գործընթացի առաջին փուլը բանկի կամ վարկային կազմակերպության համապատասխան բաժնի կողմից վարկանշվող փոխառու-իրավաբանական անձի գործունեության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումն է, ընդ որում վարկանիշ շնորհելու նպատակով ներկայացվող ներքին վարկանշման մեթոդական մոտեցման համաձայն քանակական գնահատման շրջանակներում պետք է օգտագործվի հետևյալ տեղեկատվությունը՝

- փոխառու-իրավաբանական անձի հաշվապահական հաշվեկշիռ [20, էջ 187],
- ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն,

- հաշվեկշռի հետևյալ հոդվածների վերծանումը՝ երկարատև ֆինանսական ներդրումներ, պաշարներ, երկարաժամկետ և կարճաժամկետ դեբիտորական պարտք, կարճաժամկետ ֆինանսական ներդրումներ և այլն,
- կանոնադրական կապիտալում համահիմնադիրների կողմից դրամական մուտքերի գծով պարտքերի վերաբերյալ տեղեկանք,
- անձնակազմի՝ աշխատավարձերի գծով ժամկետանց պարտավորությունների բացակայության վերաբերյալ տեղեկանք և այլն:

Փորձագիտական գնահատման շրջանակներում վարկանիշ շնորհելու նպատակով կարելի է օգտագործել հետևյալ տեղեկատվությունը՝

- ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված տվյալներ,
- միջազգային վարկանշման գործակալությունների տեղեկատվությունը, այն դեպքում, երբ փոխառու-իրավաբանական անձն ունի կամ ունեցել է վերջիններիս կողմից շնորհված վարկանիշ,
- բանկից քաղվածք փոխառու-իրավաբանական անձի վերջին մեկ տարվա ընթացքում բանկային հաշիվների շրջանառության վերաբերյալ,
- փոխառու-իրավաբանական անձի՝ վարկային ռեգիստրում, ԱՔՌԱ վարկային բյուրոյում, տվյալ բանկում կամ վարկային կազմակերպությունում առկա վարկային պատմության վերաբերյալ տեղեկատվություն,
- բանկի անվտանգության ծառայության կողմից անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում (հարկ եղած դեպքում),
- ՋԼՄ-ներում զետեղված տեղեկատվությունը, որը կարելի է գնահատել, որպես հավաստի,
- տեղեկատվության այլ տիպի աղբյուրներ, որոնց կարելի է գնահատել որպես հավաստի, ի դեպ յուրաքանչյուր բանկ կամ վարկային կազմակերպություն ինքն է սահմանում տեղեկատվության իր կողմից ընդունելի հավաստիության աստիճանը: Երբեմն բանկը կամ վարկային կազմակերպությունն իր պատասխանատվությամբ կարող է վարկանիշ շնորհելու նպատակով օգտագործել այնպիսի տեղեկատվություն, որի հավաստիությունը հնարավոր չէ փաստաթղթերով փաստել: Նման դեպքերի օրինակ կարող են ծառայել փոխառու-իրավաբանական

անձի մոտ հավելյալ եկամտային մուտքերը (օրինակ՝ տրանսֆերտները, փոխկապակցված անձանց կողմից անհատույց տրված գումարային օգնությունը և այլն), որոնք բանկը կամ վարկային կազմակերպությունը կարող է հաշվի առնել փոխառու-իրավաբանական անձի անվճարունակությունը գնահատելիս, կամ ոչ: Դա մեծամասամբ կախված է տվյալ երկրի բանկային մենթալիտետից:

Վարկանշվելու գլխավոր նախապայմաններից է փոխառու-իրավաբանական անձի կողմից բանկի կամ վարկային կազմակերպության պահանջած անհրաժեշտ կամայական տեղեկատվության տրամադրումը (ինչպես պաշտոնական, այնպես էլ կառավարչական ֆինանսական հաշվետվություններ): Վերջիններիս կողմից պահանջվող տեղեկատվության ծավալները և բնույթը երբեմն կարող են տարբերվել՝ կախված բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ընտրված ներքին վարկանշման մոդելից:

Փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկերի համալիր գնահատման նպատակով իրականացվող վարկանշումը կախված է բազմաթիվ գործոններից. գործնականում վերլուծվող ցուցանիշները հիմնված են նախորդ ժամանակահատվածի կամ որևիցե հաշվետու ժամանակահատվածի տվյալների վրա, ինչը հաճախ ապատեղեկատվության աղբյուր է դառնում [18, էջ 55-56]: Միևնույն ժամանակ, դժվարություն են պարունակում այնպիսի գործոնների քանակական գնահատականներ, ինչպիսիք են փոխառու-իրավաբանական անձի հեղինակությունը, կառավարման որակը և այլն [18, էջ 55-56]: Ի սկզբանե վարկանշման հիմնական չափանիշներն էին վարկառուի եկամուտ ստանալու կարողությունը և հեղինակությունը, սակայն ներկայումս վերլուծվում են մի շարք այլ ցուցանիշներ, օրինակ՝ ակտիվների կազմը [26, էջ 50], ինչը ծառայում է, ինչպես փոխառու-իրավաբանական անձի ֆինանսական վիճակի մասին տեղեկատվություն, այնպես էլ վարկի ապահովվածության ինդիկատոր և այլն: Իմի բերելով՝ կարելի է ասել, որ վարկանշումը իրենից ներկայացնում է անվճարունակության ռիսկի վրա ազդող ցուցանիշների ընտրություն, վերլուծություն ու համակարգայնացում և գնահատում: Ցուցանիշները պետք է լինեն մաքսիմալ ինֆորմատիվ, աներկբա, համապարփակ և պետք է կարողանան համագործակցել միմյանց հետ, այլ ոչ թե բացառեն մեկը մյուսին: Որոշ ֆինանսական ցուցանիշներ կարող են առանձին վերցված նույնիսկ ապակողմնորոշել բանկին կամ

վարկային կազմակերպությանը, իսկ ճիշտ ընտրված և համակարգայնորեն դիտարկված ցուցանիշները կտրամադրեն իրատեսական ներքին վարկանիշ: Շատ հեղինակներ [26, 27, 29] են անդրադառնում այն խնդրին, թե ինչ քանակի ցուցանիշներ են պետք վարկանիշ շնորհելու նպատակով, և բոլորը հանգում են այն եզրակացության, որ մեծ քանակի ցուցանիշները կարող են խեղաթյուրել վարկանիշի նշանակությունը՝ կախված վերլուծության դժվարությունների հետ (մեծ քանակի ցուցանիշների վերլուծությունը ժամանակատար է և այլն), հետևաբար առաջարկվում է ընտրել հիմնական՝ գլխավոր ցուցանիշների խումբ և երկրորդական (որոնք կվերլուծվեն երկրորդ հերթին և օգնության կգան միմիայն վիճելի դեպքերում) [26, էջ 53]: Փոխառու-իրավաբանական անձի գործունեության ֆինանսական վերլուծության նպատակով ցուցանիշներ ընտրելիս պետք է բացառել միմյանց հետ կորելյացիոն կապ ունեցող ցուցանիշների երկակի վերլուծությունը: Վարկանշային մոդելների դասերը պետք է ադեկվատ քանակի լինեն, այսինքն բավականացնեն փոխառու-իրավաբանական անձանց բոլոր տեսակի խմբերը վարկանշելու համար: Մեծ քանակի դասերի առկայությունը դժվարացնում է բանկերի համապատասխան մասնագետների աշխատանքը, բացի այդ դասերի մեծաքանակ լինելը վտանգ է ներկայացնում այն տեսանկյունից, որ կարող է դժվարընկալելի դարձնել կոնկրետ վարկանիշի «լավ» կամ «վատ» լինելը (վերջինս վերաբերվում է անցողիկ և ոչ անցողիկ դասերի սահմանագծին [26, էջ 68]): Ի հեճուկս դրան, փոքր քանակի դասերը չեն տրամադրում փոխառու-իրավաբանական անձի վարկունակության վերաբերյալ լիարժեք տեղեկատվություն՝ վարկանիշի տեսքով: Որոշ խոշոր բանկեր օգտագործում են երկուսից չորս ոչ անցողիկ և հինգից տասը անցողիկ վարկանշային դասեր [35, էջ 12]: Ի դեպ, ոչ անցողիկ են համարվում այն դասերը, որոնք ճգնաժամային կամ նախաճգնաժամային են: Բանկերը մեծամասամբ միջինում օգտագործում են մոտավորապես տասը դասեր, որոնց մեջ մտնում են նաև միջանկյալ «+» և «-» արժեքները (օրինակ՝ A+, A, A-) [36, էջ 14]: Բանկերին և վարկային կազմակերպություններին նպատակահարմար է օգտագործել միևնույն քանակի դասեր, որպեսզի դյուրին լինի համեմատել տարբեր ֆինանսական կազմակերպություններում վարկանշված փոխառու-իրավաբանական անձանց վարկանիշերը միմյանց հետ [26, էջ 67]: Դասերի քանակը կախված է շատ հանգամանքներից. օրինակ բանկի կողմից իրականացվող գործարքների տարատեսակությունը, երբ բանկը գործարքների յուրաքանչյուր տեսա-

կի համար սահմանում է վարկանշային սահման (օրինակ B-ից ցածր վարկանիշ ունեցալու դեպքում փոխառու-իրավաբանական անձի հետ չեն իրականացվում ֆակտորինգային գործարքներ և այլն): Ներկայումս խոշոր, միջին և փոքր փոխառու-իրավաբանական անձանց համապատասխան ձևով վարկանշելու, ինչպես նաև ավելի ճշգրիտ և զգայուն վարկանիշ շնորհելու նպատակով նկատվում է վարկանշային քսան դասերի օգտագործման միտում (աղյուսակ՝ 2.1.1): Բնականաբար, եթե ավելացել է դասերի քանակը, ուրեմն նվազել է վարկանիշերին համապատասխանեցված միջակայքերի բալերի քանակը: Օրինակ, եթե տասը վարկանշային դասի պարագայում AAA վարկանիշ շնորհվում էր (90-100] բալ հավաքած փոխառու-իրավաբանական անձանց, ապա քսան դասի պարագայում տվյալ միջակայքը կփոքրանա՝ զետեղելով ընդամենը (95-100] բալ հավաքած փոխառու-իրավաբանական անձանց խումբը:

Աղյուսակ 2.1.1 Քսան դասերից կազմված վարկանշային սանդղակ [11-13]:

Վարկանշային դաս	Վարկանիշ
20	AAA
19	AA+
18	AA
17	AA-
16	A+
15	A
14	A-
13	BBB+
12	BBB
11	BBB-
10	BB+
9	BB
8	BB-
7	B+
6	B
5	B-
4	CCC
3	CC
2	C
1	D

Փոխառու-իրավաբանական անձանց վարկանշման մոդելների վերլուծության հիման վրա առաջարկվում է վարկանշային դասերը համապատասխանեցնել անվճարունակության ռիսկի մակարդակների հետ հետևյալ կերպ. AAA մինչև A

վարկանիշ ունեցող փոխառու-իրավաբանական անձանց որակել որպես ցածր ռիսկային, A-ից B վարկանիշ ունեցողներին՝ միջինից ցածր, BBB- -ից B+ վարկանիշ ունեցողներին՝ միջին, B-ից մինչև B-՝ միջինից բարձր, իսկ CCC վարկանիշ ունեցող փոխառու-իրավաբանական անձանց որակել որպես բարձր ռիսկային:

Բազելյան կոմիտեն նշում է, որ բանկերը գնալով ավելի ու ավելի են կատարելագործում փոխառու-իրավաբանական անձանց ներքին վարկանշման իրենց կողմից կիրառվող մոդելները [36, էջ 9] և հետզհետե ավելի ստույգ, իրատեսական և վստահելի վարկանիշեր են կարողանում շնորհել, ինչը բացարձակ անհրաժեշտություն է, քանի որ բանկերը աշխատում են արտաքին գործոնների անընդհատ փոփոխության, քաղաքական և իրավական դաշտերի երբեմն անկանխատեսելի դինամիկայի պայմաններում: Գոյություն ունեն փոխառու-իրավաբանական անձանց ներքին վարկանշման բազմաթիվ մոդելներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առավելություններն ու թերությունները, սակայն առայժմ չկա որևիցե համակիրառելի մոդել: Փոխառու-իրավաբանական անձանց վարկանշման իրատեսական մոդելի ընտրությունը արդիական է ՀՀ -ում, քանի որ դեռ առկա է թերահավատ վերաբերմունք վերլուծության ընթացքում ստացված քանակական և որակական ցուցանիշների արժեքների հանդեպ, բանկերը և վարկային կազմակերպությունները դժվարությամբ են հրաժարվում արդեն ձևավորված վարկային կուլտուրայից և այլն: Ինչպես նշում է Օ. Լավրուշինը [26, էջ 54] յուրաքանչյուր բանկում արդեն ձևավորված են վարկերի ձևերի, վարկային պորտֆելի ձևավորման, վարկերի ապահովվածության նախապատվելի ուղղություններ, և յուրաքանչյուր բանկ կարող է ընտրել վարկանշման իր մոդելը (օրինակ՝ սուբյեկտիվորեն ընտրել վերլուծվող ֆինանսական ցուցանիշների խումբ և այլն), որում կարող են գերիշխել քանակական կամ փորձագիտական գործոնները: Ի դեպ, այն դեպքում, երբ փոխառու-իրավաբանական անձանց ներքին վարկանշման մոդելում գերիշխում են փորձագիտական գործոնները կարելի է բախվել փորձագետի (բանկի կամ վարկային կազմակերպության համապատասխան մասնագետի) սուբյեկտիվության դրսևորման հետ, ինչի մասշտաբը հաճախ կախված է տվյալ երկրի գործարար աշխարհի մենթալիտետից: Սուբյեկտիվության դրսևորումը կարող է լինել տարբեր տեսակի, երբ մասնագետը սեփական փորձի և կռահողականության վրա հիմնվելով ուղղումներ է մտցնում ստացված վարկանիշի արժեքի մեջ, և երբ վերջինս որոշակի շահագրգռվածություն

ունի այս կամ այն փոխառու-իրավաբանական անձին ավելի բարձր կամ ցածր վարկանիշ շնորհելու մեջ: Վերոնշյալ գործոնները հաշվի առնելով՝ յուրաքանչյուր փոխառու-իրավաբանական անձ կարող է ունենալ տարբեր վարկանիշ տարբեր ֆինանսական կազմակերպություններում:

Վարկանշման մոնիթորինգը վարկանշման գործընթացի կարևորագույն փուլերից մեկն է: Վարկանիշի մոնիթորինգը նպատակահարմար է իրականացնել վեց ամսից մինչև մեկ տարի ժամանակահատվածը մեկ անգամ: Հեղինակները ([27, էջ 79] և այլն) միակարծիք են պարբերական մոնիթորինգի անհրաժեշտության մեջ՝ յուրաքանչյուրը նշելով վարկանիշը վերանայելու իր կարծիքով գերադասելի ժամանակային միջակայքը, որը կարող է լինել եռամսյակը մեկ անգամ, տարին մեկ անգամ և այլն, բացառությամբ այն դեպքերի, երբ մակրոտնտեսական միջավայրում, քաղաքական, իրավական դաշտում որևէ լուրջ փոփոխություններ են տեղի ունենում: Գոյություն ունի ժամանակային կտրվածքով 2 տիպի վարկանիշ՝ «կոնկրետ պահի դրությամբ վարկանիշ», և «վարկանիշ տնտեսական ցիկլի ողջ ընթացքի համար» [26, էջ 74]: «Կոնկրետ պահի դրությամբ վարկանիշը» կարող է էական տատանումներ ունենալ՝ կախված տնտեսական ցիկլի ֆազայից, իսկ «ողջ տնտեսական ցիկլի համար շնորհված վարկանիշը իրենից ներկայացնում է ողջ ֆազայի ընթացքում հնարավոր ամենավատ արժեքը, վերջինից օգտվում են մեծամասամբ ռիսկից խուսափող բանկերը: Այն դեպքում, երբ երկրի կամ համաշխարհային ասպարեզի քաղաքական կամ տնտեսական դաշտում տեղի են ունենում էական փոփոխություններ, մոնիթորինգը կարող է իրականացվել արտահերթ՝ վերլուծելու և գնահատելու համար տվյալ գործոնի ազդեցությունը փոխառու-իրավաբանական անձի շնորհված վարկանիշի վրա: Էական փոփոխություններ ասելիս ենթադրվում են այնպիսի փոփոխություններ ինչպիսիք են՝ ճգնաժամի նախադրյալները, տվյալ երկրի տնտեսության վրա էական ազդեցություն ունեցող որևէ փոխարժեքի անկանխատեսելի վարքի դրսևորումը, օրենսդրական բազայի փոփոխությունը, նոր տեխնոլոգիաների կամ մրցակիցների ի հայտ գալը, ինչը կարող է բացասաբար ազդել փոխառու-իրավաբանական անձի եկամտաբերության վրա, պլանավորված հասույթի ծավալի վրա և այլն: Մոնիթորինգի շրջանակներում բանկի համապատասխան մասնագետը կարող է պարբերաբար զրույցներ ունենալ փոխառու-իրավաբանական անձի մենեջմենթի բաժնի ներկայացուցչի հետ՝ վերջինիս

պլանների կամայական փոփոխության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով կամ բանկի համապատասխան մասնագետի կողմից ռիսկային թվացող արտաքին պայմանների փոփոխության ազդեցության աստիճանը միասին քննարկելու և գնահատելու նպատակով: Վերոնշյալ բոլոր փոփոխությունների ազդեցության աստիճանը գնահատելուց հետո բանկը կամ վարկային կազմակերպությունը վարկանիշը փոփոխելու կամ նույնը թողնելու վերաբերյալ որոշում է կայացնում [37]: Ի դեպ, վարկանիշի մոնիթորինգի անհրաժեշտության, ինչպես նաև մշակված վարկանշման մոդելների պարբերական վերանայման անհրաժեշտության անտեսումը կարող է բացասաբար ազդել բանկի կամ վարկային կազմակերպության ֆինանսական կայունության վրա:

2.2 Առևտրային բանկերում փոխառու-իրավաբանական անձանց ներքին վարկանշման մոդելների համեմատական վերլուծություն:

Բազել II նոր համաձայնագրում [7, էջ 41-42] նշվում է, որ բանկերն իրենց մոտ պետք է ստեղծեն պոտենցիալ փոխառուների որակի և վարկերի տրամադրման պայմանների գնահատման վրա հիմնված ներքին վարկանշման համակարգեր: Հաշվի առնելով վերոնշյալը, և քանի որ ներկայացվող ատենախոսության օբյեկտը առևտրային բանկերում և վարկային կազմակերպություններում սպասարկվող փոխառու-իրավաբանական անձիք են, տվյալ ենթագլխում վերլուծվել են արտերկրյա բանկերում փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկերի գնահատման նպատակով կիրառվող ներքին վարկանշման մոդելներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները:

Ավստրալական բանկերը վարկանիշ շնորհելու համար օգտագործում են չորս հիմնական ցուցանիշների խմբեր [35, էջ 16].

1. ֆինանսական ցուցանիշներ՝ հաշվարկված փոխառու-իրավաբանական անձի գործունեության հաշվապահական հաշվետվության հիման վրա,
2. դրամական հոսքերի ցուցանիշներ,
3. փոխառու-իրավաբանական անձի կառավարման որակի գնահատական,
4. փոխառու-իրավաբանական անձի գործունեության ճյուղային առանձնահատկություններ:

Փոխառու-իրավաբանական անձանց վարկանիշ շնորհելու նպատակով ցուցանիշների յուրաքանչյուր խմբից երկուսից երեք ցուցանիշներ են ընտրվում և վերլուծվում: Ավստրալական բանկերի գերակշռող մասի վարկանիշերի դասերի քանակը համապատասխանում է վարկանշային միջազգային գործակալությունների վարկանիշերի դասերի քանակին: Բացի այդ, յուրաքանչյուր վարկանիշին համապատասխանում է սնանկության հավանականության ցուցանիշ: Սակայն, եթե սնանկության հավանականության ցուցանիշի հաշվարկը որոշ ավստրալական և ամերիկյան բանկերի համար վարկանիշի շնորհման կարևոր նպատակներից մեկն է, ապա օրինակ ռուսաստանյան բանկերը դեռևս մեծ ուշադրություն չեն դարձնում, ըստ էության, վարկանիշի շնորհման հաջորդ փուլ հանդիսացող սնանկության հավանականության ցուցանիշի հաշվարկմանը, ինչը, ըստ ռուսաստանյան մասնագետների, մեծ թերացում է բանկային ռիսկմենեջմենթի կողմից [26, էջ 64]: Ավստրալական բանկերը փոխառու-իրավաբանական անձի սնանկության հավանականության ցուցանիշը փորձում են համապատասխանեցնել նաև ակտիվների առանձին գործարքների գծով վնասների մեծության հետ: Ավստրալական մոդելը բավականին ընդգրկում է և հարմար այն իմաստով, որ վարկանիշերի սանդղակը հարմարեցված է միջազգային գործակալությունների սանդղակին, սակայն մոդելում հստակեցված չեն վերլուծվող ֆինանսական գործակիցները, ինչը կարող է սուբյեկտիվության դրսևորման աղբյուր դառնալ, քանի որ բանկի կամ վարկային կազմակերպության համապատասխան մասնագետը կարող է գործակիցների ընտրությունը հարմարեցնել յուրաքանչյուր փոխառու-իրավաբանական անձին (այսինքն, վերլուծելու նպատակով ընտրել այն ֆինանսական գործակիցները, որոնք առավելագույնս ձեռնտու են փոխառու-իրավաբանական անձին, կամ ընտրել այնպիսի գործակիցներ, որոնք կարելի է հաշվարկել նույնիսկ վերջինիս կողմից տրամադրված ոչ լիարժեք տեղեկատվության հիման վրա և այլն): Բացի այդ, ավստրալական բանկերի մեծ մասը իրենց կողմից շնորհված վարկանիշերի իրատեսությունը գնահատելու համար դեռևս չունեն շնորհված վարկանիշերի երկարաժամկետ տվյալների բազա [35, էջ 16], [35, էջ 19]:

Ամերիկյան բանկերի մեծ մասը վարկանիշ շնորհելու նպատակով վերլուծում է հետևյալ ցուցանիշների խմբերը [38, էջ 910].

1. ֆինանսական վիճակ (հատկապես փոխառու-իրավաբանական անձի՝ ստանձնած պարտավորությունները ժամանակին մարելու ունակություն,
2. փոխառու-իրավաբանական անձի գործունեության ճյուղի վերլուծություն (վերլուծվում է, թե որքանով է վերջինս զգայուն տնտեսական ցիկլի նկատմամբ), վերջինիս վարկավորման ժամանակահատվածի ընթացքում զարգացման հեռանկարները,
3. փոխառու-իրավաբանական անձի ֆինանսական հաշվետվության որակ (վերլուծվում է, թե որքանով է վերջինիս կողմից տրամադրված տեղեկատվությունը արժանահավատ),
4. փոխառու-իրավաբանական անձի մոտ միջազգային վարկանշային գործակալությունների կողմից շնորհված վարկանիշի առկայություն,
5. կառավարման որակի գնահատում և այլն:

Ամերիկյան վարկանշային մոդելներն ընդգրկում են և փորձագետներին տրամադրված է մեծ դեր: Ամերիկյան բանկերը մեծ փորձ ունեն փոխառու-իրավաբանական անձանց ներքին վարկանշման գործում, ինչի շնորհիվ կարողանում են արագ կողմնորոշվել և, տնտեսական միջավայրի փոփոխությանը համապատասխան, ադապտացնել ներքին վարկանշման մոդելները: Այդպես էր 2008 թվականին, երբ ճգնաժամի «դառը դասերի» հետևանքով կտրուկ կրճատվեցին վարկավորման ծավալները, քանի որ վարկանշման մոդելներում առկա գործակիցների գնահատումը խստացվեց:

Ռուսաստանի Դաշնության բանկերին անդրադառնալիս բախվում ենք վերջիններիս նմանությանը ՀՀ բանկերին, քանի որ ԱՊՀ բոլոր երկրներում բանկային համակարգը, բանկային կուլտուրան նույնն էր, և մինչ այժմ, կարծես, բանկային համակարգի այնժամանակյա մենթալիտետը դժվար է վերափոխվում ժամանակակից միտումներին համապատասխան: Իսկ եվրոպական և ամերիկյան բանկերին անդրադարձը հաճախ ի ցույց է դնում վերջիններիս գերազանցությունը, և կողմնորոշում հայրենական բանկերին վերափոխման հետագա ընթացքի ժամանակ: Ռուսաստանյան Խնայբանկը (այսուհետ Խնայբանկ) շնորհում է ներքին վարկանիշ ֆինանսական վիճակի քանակական և ռիսկերի որակական վերլուծության հիման վրա [39]: Ցուցանիշների հաշվարկման ժամանակ բանկը դիմում է «զգուշավորության» սկզբունքին, այսինքն հաշվեկշռի ակտիվների հողվածները հաշվարկվում են որոշակի տոկոսով նվազեցված՝ փորձագետ-

ների գնահատականի հիման վրա: Սակայն վարկանշման նման մոտեցումը բավականին սուբյեկտիվ է, քանի որ չի նշվում, թե քանի տոկոսով է պետք կատարել ակտիվների հողվածների արժեքների նվազեցում, որպեսզի հնարավոր լինի խուսափել ռիսկերից: Նման պարագայում, զուտ հոգեբանորեն, փորձագետը կարող է հատուցել ակտիվների հողվածների արժեքների նվազեցումը՝ մեկ այլ ցուցանիշ վերլուծելու ժամանակ վերջինս գերագնահատելով, ինչի արդյունքում ոչ իրատեսական վարկանիշ կշնորհվի: Բանկը փոխառու-իրավաբանական անձի ֆինանսական վիճակը վերլուծելիս օգտագործում է 3 խումբ ցուցանիշներ [39].

1. փոխառու-իրավաբանական անձի իրացվելիության գործակիցներ,
2. փոխառու և սեփական միջոցների հարաբերակցության գործակից,
3. շրջանառության և շահութաբերության գործակիցներ (ի դեպ, տվյալ մոդելի շրջանակներում վերջիններս համարվում են օժանդակ, լրացուցիչ:

Վերոնշյալ գործակիցները վերլուծելուց հետո ստացված արժեքները համեմատվում են վարկանիշի շնորհման մոդելի շրջանակներում սահմանված էտալոնային արժեքների հետ, վերջինիս համապատասխան շնորհվում են բալեր, որոնք բազմապատկվում են յուրաքանչյուր գործակցի կշռով: Որակական վերլուծությունը հիմնված է փոխառու-իրավաբանական անձանց գործունեության վերաբերյալ այնպիսի տեղեկատվության հիման վրա, որը չի կարող արտահայտվել քանակական ցուցանիշներով: Նման վերլուծության համար օգտագործվում են տեղեկություններ, որոնք տրամադրվել են փոխառու-իրավաբանական անձի կողմից կամ քաղվել են բանկի տվյալների բազայից . գնահատվում են տվյալ ճյուղում առկա գործարարության ռիսկերը:

Քանակական և որակական ցուցանիշների վերլուծության հիման վրա փոխառու-իրավաբանական անձանց շնորհվում է ներքին վարկանիշ: Խնայքանկի կողմից կիրառվող վարկանշային մոդելի վարկանիշերի սանդղակը բաղկացած է երեք դասից . բնականաբար առաջին դասը ընդգրկում է այն փոխառու-իրավաբանական անձանց, որոնց հետ իրականացվող գործարքները մաքսիմալ ոչ ռիսկային են, երկրորդ և երրորդ դասերը շնորհվում են այն փոխառու-իրավաբանական անձանց, որոնց հետ գործարքները համապատասխանաբար ավելի ռիսկային են: Հետագայում վարկանիշը կարող է փոփոխվել՝ մոնիթորինգի արդյունքներին համապատասխան:

Փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկերի համալիր գնահատման նպատակով Խնայբանկի կողմից կիրառվող վարկանշման մեթոդական մոտեցումը կկարողանա տրամադրել ավելի համապարփակ վարկանիշ, եթե վերլուծվեն ավելի մեծ քանակի ֆինանսական գործակիցներ, օրինակ՝ կապիտալի դինամիկան: Բացի այդ հիմնավորված չէ շրջանառության և շահութաբերության գործակիցները տվյալ վարկանշման մոդելի շրջանակներում որպես օժանդակ օգտագործելը: Վարկանիշերի ընդամենը երեք դասերի օգտագործումը, կարծում են շատ ընդհանրացված արդյունք է տրամադրում, այդ դեպքում պետք է յուրաքանչյուր վարկանիշի համար տրված միջակայքը շատ մեծ լինի, որպեսզի ընդամենը երեք դասի մեջ հնարավոր լինի ընդգրկել փոխառու-իրավաբանական անձանց գործունեության վերլուծության հնարավոր բոլոր տարբերակները, սակայն միջակայքերի մեծ լինելը պայմանավորված կլինի մեծ ռիսկերով, քանի որ մեկ միջակայքի մեջ գտնվող փոխառու-իրավաբանական անձանց վերլուծության արդյունքում ստացված արդյունքները կարող են խիստ տարբերվել իրարից. օրինակ՝ եթե 70-100 բալերի միջակայքին համապատասխանեցված լինի A+ վարկանիշը, ապա սխալ կլինի նույն քաղաքականությունը վարել (սահմանել նույն սահմանաչափը, վարկի ապահովվածության նույն աստիճանը և այլն) 70 բալ և 100 բալ ստացողների համար: Բացի այդ Խնայբանկը իր ներքին վարկանշային մոդելի շրջանակներում որական վերլուծությունը կատարում է մեծամասամբ փոխառու-իրավաբանական անձի տրամադրած տեղեկատվության հիման վրա, սակայն մի շարք արտերկրյա բանկեր նշում են, որ դա վերջերս դարձել է ռիսկային, քանի որ հնարավոր է տրամադրված տեղեկատվության խեղաթյուրում (միջազգային փորձը ցույց է տալիս, որ հնարավոր են նույնիսկ աուդիտորական եզրակացության կեղծումներ), և, եթե նման երևույթը խնդիր չէ վարկանշային գործակալությունների համար (վերջիններս պարզապես կնշեն, որ հիմք են ընդունել փոխառու-իրավաբանական անձի տրամադրած տեղեկատվությունը), ապա բանկի կամ վարկային կազմակերպության համար դա իրական ռիսկի աղբյուր է: Խնայբանկը վարկանշումը իրականացնում է անընդհատ հիմունքներով, փոխառու-իրավաբանական անձի համաձայնությամբ՝ վերջինիս կողմից տրամադրված նախորդ առնվազն երեք ժամանակահատվածների վերաբերյալ տեղեկատվության հիման վրա [19, էջ 66], [39]:

Ռուսաստանի Դաշնության մեկ այլ բանկ՝ Ալֆա բանկը, փոխառու-իրավաբանական անձի ֆինանսական վիճակը գնահատում է վերջինիս վճարունակության, իրացվելիության, ֆինանսական կայունության, գործարար ակտիվության և շահութաբերության ցուցանիշների հիման վրա [40]: Անվճարունակության գործակիցները որոշվում են նախկինում կրեդիտորական պարտքերը, բանկային փոխառությունները ժամանակին մարելու ունակությունը վերլուծելով: Իրացվելիության գնահատումը իրենից ներկայացնում է փոխառու-իրավաբանական անձի տարբեր տեսակի ակտիվների ծածկման համար օգտագործվող միջոցների ծավալի և վերջիններիս աղբյուրների վերլուծություն: Բացի այդ, Ալֆա բանկը հաշվարկում է մի շարք հարաբերական ցուցանիշներ՝ ընթացիկ ակտիվների մեջ սեփական շրջանառու ակտիվների բաժինը, արագ իրացվելիության գործակից և այլն:

Փոխառու-իրավաբանական անձի ֆինանսական կայունությունը բնութագրվում է սեփական և փոխառու միջոցների հարաբերակցությամբ և համաձայն բանկի կողմից կիրառվող վարկանշման մոդելի, հաշվարկվում են հետևյալ գործակիցները՝ ֆինանսական կախվածության աստիճան, երկարաժամկետ ներդրումների կառուցվածք, ներգրավված և սեփական միջոցների հարաբերակցություն և այլն:

Գործարար ակտիվության գնահատականը իրենից ներկայացնում է այնպիսի ցուցանիշների վերլուծություն, որոնք բնութագրում են փոխառու-իրավաբանական անձի գործունեության արդյունավետությունը՝ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի շրջանառությունը, սեփական կապիտալի շրջանառությունը և այլն: Այնուհետև Ալֆա-բանկը սահմանում է ցուցանիշների և վերջիններիս կշիռների համապատասխանեցված սանդղակ, որպեսզի վերջնական բալային գնահատականը դուրս բերելիս փոխառու-իրավաբանական անձի՝ վերլուծության արդյունքում հավաքած յուրաքանչ-յուր ցուցանիշի բալերը բազմապատկվեն վերջինիս կշռով: Վարկանիշ շնորհելու համար Ալֆա-բանկը կազմում է սանդղակ, որտեղ համապատասխանեցվում են փոխառու-իրավաբանական անձի վերլուծության արդյունքում ստացված բալերի քանակը և վարկի ապահովվածության աստիճանը, այսպիսով ապահովվածության բարձր աստիճանի և բալերի մեծ քանակի դեպքում փոխառու-իրավաբանական անձանց շնորհվում է IA վարկանիշ, հետևաբար վարկանիշը իջնում է բալերի քանակի և ապահովվածության

աստիճանի իջեցմանը զուգընթաց մինչև D վարկանիշը, որը վկայում է սնանկության մասին:

Վերջին 20 տարիների ընթացքում ՀՀ ֆինանսական համակարգը հաստատուն քայլերով զարգանում էր, փոխվում էր գործարար միջավայրը, վերաբերմունքը վարկառուի նկատմամբ, փոխվում էին վարկավորման մոտեցումները, սկզբունքները, անհրաժեշտ էր դառնում տարեց տարի ավելի ու ավելի կատարելագործել վարկուցակության գնահատման մոդելները, քանի որ կազմակերպությունները զարգանում էին, շատանում, իսկ ֆինանսավորման գլխավոր աղբյուրներից մեկը մնում էին բանկերը և վարկային կազմակերպությունները: Սակայն փոխառու-իրավաբանական անձանց կողմից փոխառու միջոցների ներգրավման գործընթացը խոչընդոտում էր բանկերի և վարկային կազմակերպությունների մոտ վերջիններիս գործունեության վերաբերյալ ասիմետրիկ տեղեկատվության առկայությունը, ինչպես նաև արտաքին վարկանիշերի բացակայությունը: Այսպիսով՝ ՀՀ Կենտրոնական Բանկը ՀՀ ֆինանսական շուկայի կայունության ապահովման, իրական և ֆինանսական հատվածների միջև առողջ տնտեսական հարաբերությունների զարգացման և դրամավարկային քաղաքականության արդյունավետության նպատակով 2006 թվականին ներդրել է ձեռնարկությունների վարկանշման համակարգ [88]: ՀՀ ԿԲ կողմից կազմակերպությունների վարկանշման համակարգի ներդրումը հետապնդում էր մի քանի նպատակներ, որոնցից են.

1. առողջ ընկերությունների կապիտալացման նպաստում, կորպորատիվ պարտատոմսերի շուկայի կայացում,
2. առևտրային կազմակերպությունների գործունեության թափանցիկության խթանումը:

ՀՀ ԿԲ-ն բանկերին խրախուսելու համար շնորհված արտաքին վարկանիշերը նախատեսել էր օգտագործել հետևյալ ուղղություններով՝ 1) ռեպո գործառնությունների ընթացքում մասնավոր արժեթղթերը որպես առք ու վաճառքի առարկա կիրառում, ինչը նշանակում է, որ ի տարբերություն մինչ այդ գործող սկզբունքի, երբ ռեպո համաձայնագրերը կնքվում էին միայն պետական կարճաժամկետ պարտատոմսերով, այսուհետ ՀՀ ԿԲ-ն, որպես ռեպո համաձայնագրի առք ու վաճառքի առարկա, պատրաստ է ընդունել նաև բարձր վարկանիշ ստացած կազմակերպությունների պարտատոմսեր, 2) բարձր վարկանիշ ունեցող կազմակերպություններին բանկերի կողմից տրված

վարկերի, ինչպես նաև բանկերի կողմից բարձր վարկանիշ ստացած կազմակերպությունների պարտատոմսերի գնման համար ՀՀ ԿԲ կողմից բանկերի ակտիվների ռիսկերի կշռման արտոնյալ սանդղակ կիրառելու նպատակով, ինչը կշահագործի բանկերին վարկավորել բարձր վարկանիշ ստացած կազմակերպություններին, ինչպես նաև ձեռք բերել այդ կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսերը [9], [88]: Բացի դրանից բարձր վարկանիշ ստացած կազմակերպությունների համար էականորեն հեշտացվել են բաժնետոմսերի և պարտատոմսերի թողարկման և նրանց բորսայական շրջանառության պայմանները՝ իրական հնարավորություն ստեղծելով կազմակերպության համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները ներգրավել վերջիններիս թողարկման միջոցով:

Բանկերը և վարկային կազմակերպությունները շահագործված են վարկանշված կազմակերպություններ վարկավորելով, քանի որ վարկանիշը իր հերթին ծառայում է որպես հնարավոր անվճարունակության ռիսկի ապահովագրություն: ՀՀ ԿԲ կողմից կիրառվող վարկանշման մեթոդական մոտեցումը բաղկացած է վարկային պատմության ուսումնասիրման և գործունեության քանակական և որակական վերլուծության բաժիններից: Վարկային պատմության ուսումնասիրումը իրենից ներկայացնում է կազմակերպության կողմից նախկինում ստանձնած վարկային պարտավորությունների կատարման ընթացքի վերլուծություն՝ ձեռք բերված վարկերի և վերջիններիս տոկոսների մարման ժամանակացույցը, վարկի մայր գումարի և տոկոսների գծով ժամկետանց օրերի քանակը (եթե այդպիսիք կան) և այլն [9]: Վարկային պատմության ուսումնասիրությունն իրականացվում է ՀՀ ԿԲ վերահսկողության տակ գործող վարկային ռեգիստրի օգնությամբ, որը գործում է 2005 թվականի ՀՀ ԿԲ որոշման համաձայն [88]: Վարկային ռեգիստրը տեղեկատվական աղբյուր է ոչ միայն ՀՀ ԿԲ-ի համար վերջինիս կողմից կազմակերպությունների վարկանշման ընթացքում, այլ նաև բանկերի և վարկային կազմակերպությունների համար, որոնք կարող են հարցում կատարել ՀՀ ԿԲ վարկային ռեգիստր և ստանալ կազմակերպության կամ ֆիզիկական անձի նախկին վարկային պարտավորությունների մասին ողջ տեղեկատվությունը: Կազմակերպության քանակական վերլուծությունը կատարվում է կազմակերպության կողմից տրամադրված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա. այդ է պատճառը, որ նախապատվությունը

տրվում է անկախ աուդիտորական ընկերությունների կողմից հաստատված հաշվետվություններին: ՀՀ ԿԲ կողմից կիրառվող վարկանշային մոդելի շրջանակներում իրականացվում է կազմակերպության նյութական ներուժի վերլուծություն և գնահատում, կապիտալի և լներիջի վերլուծություն և գնահատում, տնտեսական ակտիվության վերլուծություն և գնահատում, շահութաբերության վերլուծություն և գնահատում, պարտքի ծածկույթի և իրացվելիության վերլուծություն և գնահատում:

Կազմակերպության գործունեության որակական գնահատականը տրվում է ՀՀ ԿԲ կողմից մշակված հարցաշարում գետեղված հարցերին կազմակերպության ղեկավարի կամ նրա լիազորված անձի կողմից տրված պատասխանների վերլուծության հիման վրա: Սակայն ՀՀ ԿԲ վարկանշունը կատարում է ըստ կազմակերպության ցանկության, դա չի կրում պարտադիր, ստիպողական բնույթ, բացի այդ վերջինս ունի փոխառու-իրավաբանական անձանց վարկանշման նախապայմաններ՝ կազմակերպությունը պետք է վարկանշման պահի դրությամբ արդեն երեք տարվա պատմություն ունենա և վերջինիս տարեկան հասույթը պետք է գերազանցի հարյուր միլիոն դրամը:

ՀՀ ԿԲ-ի կողմից մշակված վարկանշման մոդելը ամբողջական է, ինֆորմատիվ, սակայն, հաշվի առնելով վերը նկարագրված նախապայմանները, վերջինս չի ընդգրկում վարկանշման կարիք ունեցող փոխառու-իրավաբանական անձանց ողջ ծածկույթը:

2.3 Վարկային ռեսուրսների գծով սպասելի և չնախատեսված կորուստների գնահատում:

Բազելյան կոմիտեի (Բազել II) կողմից մշակված բանկի կապիտալի համարժեքությանը վերաբերող համաձայնագրում մեծ ուշադրություն է դարձվում բանկային ռիսկերի էության վերլուծությանը, մասնավորապես տարբերակվում են սպասելի և չնախատեսված կորուստները՝ որևէ ռիսկի հետ կապված [17]: Այս երկու կատեգորիաները հստակ տարբերակելու համար անհրաժեշտ է [41, էջ 22-25]

- հստակ սահմանել սպասելի և չնախատեսված կորուստները,
- առաջարկել սպասելի և չնախատեսված կորուստների մեծության թվային չափանիշներ,
- սահմանել սպասելի և չնախատեսված կորուստների գծով ստեղծվող պահուստների կարգը,

- Երբառել սպասելի և չնախատեսված կորուստները կապիտալի համարժեքության նորմատիվի հաշվարկի մեջ,

Սպասելի կորուստներ են անվանում որոշակի ապագա ժամանակահատվածի համար բանկի որևէ գործարքի իրականացման հետ կապված ապագա կորուստների միջին մեծությունը, որը դուրս է բերվում հետևյալ բանաձևով [42, էջ 48-50]

$$EL = PD \times LGD \times EAD \quad (1)$$

որտեղ՝

EL - սպասելի կորուստներ, PD - փոխառու-իրավաբանական անձի դեֆոլթի հավանականություն, որը կախված է շնորհված ներքին վարկանիշից,

LGD - փոխառու-իրավաբանական անձի սնանկության պարագայում կորուստների մասնաբաժին, որը կախված է վարկային պարտավորությունների առաջնահերթությունից, ապահովվածությունից և այլն,

EAD - ռիսկի ենթարկվող գումարի մեծության գնահատում [43]՝ հնարավոր կորուստների գումար:

Սնանկության հավանականության (PD) հաշվարկն իրենից ենթադրում է ներքին վարկանշման մոդելի առկայություն, որի իրատեսությունը հիմնված կլինի երկարատև ժամանակահատվածում կուտակված տեղեկատվության վրա և որն ունի դեֆոլթի և վարկանիշերի միջև կախվածության վիճակագրորեն հիմնավորված սանդղակ: LGD-ն իրենից ներկայացնում է EAD-ի այն մասի գնահատում, որը բանկը անհատույց կորցնելու է, այդ է պատճառը, որ LGD-ն և EAD-ն հաշվարկելու համար անհրաժեշտ է վարկային ռեսուրսի կամ ռեսուրսների ապահովվածության արժեքի ճշգրիտ գնահատում [42, էջ 48-50]: Սպասելի կորուստների մեծությունը դուրս է բերվում փորձագիտական եղանակով՝ նախորդ ժամանակահատվածների փորձի հիման վրա, սակայն հաշվի առնելով ներկայումս առկա պայմանները և վերջիններիս ենթադրյալ փոփոխությունները: Գալիք կորուստները իրականություն կդառնան միայն ապագայում, իսկ սպասելի կորուստները գալիք կորուստների այսօրվա գնահատականն են [41, էջ 22-25]: Օրինակ, եթե փոխառու-իրավաբանական անձի վարկային պայմանագրի գծով սպասելի կորուստների մեծությունը բանկի կողմից հաշվարկված է 2%, նշանակում է միմյանցից անկախ, բայց վարկունակության իրար նման բնութագրիչներ և բանկի հետ

կնքած վարկային պայմանագրի միևնույն պայմաններ ունեցող փոխառու-իրավաբանական անձանց բանկի կողմից տրամադրվելիք վարկերը երկու տոկոս դեպքերում կարող են չմարվել [41, էջ 22-25]: Սպասելի կորուստների մեծությունը հաշվարկվում է բանկի համապատասխան մասնագետների (վերլուծաբանների) կողմից՝ վիճակագրական և այլ տեղեկատվության հիման վրա՝ ըստ հաշվարկման սահմանված կարգի, սակայն նույնիսկ այդ փաստը չի բացառում կողմնապահության դրսևորումը. տվյալ դեպքում կողմնապահության վտանգի աղբյուրը հաշվարկման կարգը սահմանող մասնագետն է:

Չնախատեսված կորուստներ են անվանում ապագա կորուստների և սպասելի կորուստների դրական տարբերությունը [41, էջ 22-25]: Հեղինակ Բեյլակով Ա.-ն նշում է, որ սպասելի և չնախատեսված կորուստների մեծությունների տարբերությունը կարող է նաև դրական կամ զրոյական լինել, ինչը չափազանց բարենպաստ է բանկի համար և վկայում է այն մասին, որ սպասելի կորուստների կանխատեսման մեթոդը տվյալ բանկում շատ արդյունավետ է: Կորուստների գերազնահատումը վատացնում է ֆինանսական արդյունքը ներկա ժամանակահատվածի համար և լավացնում վերջինս ապագա ժամանակահատվածի համար, երբ պահուստների չօգտագործված մասը վերականգնվում է որպես եկամուտ: Իսկ կորուստների թերազնահատումը, հակառակը, լավացնում է ֆինանսական արդյունքը ներկա ժամանակահատվածի համար և վատացնում է վերջինս ապագա ժամանակահատվածի համար, երբ կորուստները գերազանցում են սպասելի կորուստները, մեծանում են ծախսերը՝ նվազեցնելով շահույթը: Սպասելի և չնախատեսված կորուստները կարևորագույն ցուցանիշ են բանկերի կողմից ակտիվների և պարտավորությունների ճիշտ կառավարման գործընթացում [41, էջ 22-25]: Օրինակ՝ այն դեպքում, երբ բանկի համապատասխան մասնագետը կանխատեսել է 4% սպասելի կորուստներ, իսկ հետագայում պարզվում է, որ կորուստը կազմել է 7%, ապա չնախատեսված կորուստը կազմել է 3%: Սպասելի և չնախատեսված կորուստների էական տարբերությունը կայանում է նրանում, որ որոշումներ ընդունելիս բանկի կառավարիչները ուղղորդվում են այն ենթադրությամբ, որ ամենայն հավանականությամբ գալիք կորուստները կլինեն մոտավորապես սպասելի կորուստներին համապատասխան և այդ պատճառով սպասելի կորուստները կարելի է նախօրոք դասել վնասների շարքին: Բանկը փոխառու-իրավաբանական անձի հետ վարկային պայմա-

նագիր կնքելիս հաշվարկված սպասելի կորուստների հատուցման նպատակով ավելացնում է բազային տոկոսադրույքը [41, էջ 22-25]. օրինակ, եթե վիճակագրական տվյալներից հայտնի է, որ միմյանցից անկախ, բայց միևնույն բնութագրիչներն ունեցող փոխառու-իրավաբանական անձանց որոշակի խմբին մեկ տարի ժամկետով տրամադրվող վարկերի 2% չի վերադարձվում, ապա փոխառու-իրավաբանական անձանց վերոնշյալ խմբի համար բազային տոկոսադրույքը պետք է ավելանա 2%-ով՝ սպասելի կորուստների հատուցման նպատակով: Եթե վարկը փոխառու-իրավաբանական անձանց վերոնշյալ խմբին տրամադրված լիներ վեց ամսով, ապա տոկոսադրույքի համապատասխան ավելացումը կլիներ տասը տոկոս: Այսինքն ընդհանուր դեպքերի համար բազային տոկոսադրույքի ավելացումը հավասար է սպասելի կորուստների մեծության և վարկի ժամկետի հարաբերությանը՝ տարով արտահայտված [41, էջ 22-26]:

Սակայն այն դեպքում, երբ վարկի անվերադարձելիության հավանականությունը չափազանց մեծ է, ապա ներկայացվող ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում վարկը չի տրամադրվում նույնիսկ շատ բարձր տոկոսադրույքով և պահանջարկի առկայության պայմաններում: Նման կերպ շատ բանկեր որոշակի վարկանիշից ցածր այլևս վարկ չեն տրամադրում (օրինակ՝ CC-ից ցածր վարկանիշ ունենալու դեպքում փոխառու-իրավաբանական անձին կարող է վարկ չտրամադրվել): Այդ է պատճառը, որ բանկերի կողմից փոխառու-իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի տոկոսադրույքների տարբերությունը սովորաբար այնքան էլ մեծ չի լինում՝ [0% - 5%]: Այն դեպքում, երբ տրամադրված վարկի գծով սպասելի կորուստները զնահատված են մեկ տոկոս, և վերջինիս համապատասխան բազային տոկոսադրույքը բարձրացվել է ընդամենը մեկ տոկոսով, սակայն հետագայում փոխառու-իրավաբանական անձի ֆինանսական վիճակը վատացել է (ինչի մասին վկայել են ուշացումները մայր գումարի կամ տոկոսների մարման գծով) և բանկը ստիպված է եղել սպասելի կորուստները տրամադրված վարկի գծով ավելացնել, ապա տվյալ ավելացումը այլևս չի կարող հատուցվել բազային տոկոսադրույքի բարձրացմամբ, այսինքն տոկոսային եկամուտների մեծացման հաշվին [41, էջ 22-26]: Որպես կանոն, ֆինանսական կայունության պահպանման նպատակով ԿԲ -ները պարտադրում են բանկերին ստեղծել սպասելի կորուստներին հնարավորինս համապատասխանող պահուստներ և ունենալ բավարար ընդհանուր կապիտալ, որպեսզի բանկերը ի վիճակի լինեն ծածկել

չնախատեսված կորուստները: Սակայն սպասելի կորուստների գծով պահուստներ ստեղծելիս սպասելի կորուստների մեծությունից պետք է հանել վերջիններիս այն մասը, որը հատուցվում է բազային տոկոսադրույքի բարձրացման հաշվին (հավելյալ տոկոս), այլապես միևնույն ռիսկը կապահովագրվի երկու անգամ [41, էջ 22-26]: Վերոնշյալը հաշվի առնելով շատ տնտեսագետներ գալիս են այն եզրակացության, որ բանկի կապիտալի հանդեպ պահանջները պետք է կախված լինեն վերջինիս վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիայի աստիճանից: Սպասելի հնարավոր կորուստների հատուցման նպատակով բանկերը ձևավորում են վարկերի և վարկային ռիսկ պարունակող այլ վարկային ակտիվների գծով պահուստներ: Պահուստների ձևավորումը փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկի (որը բանկի՝ տվյալ փոխառու-իրավաբանական անձի գծով վարկային ռիսկի հիմնական բաղադրիչն է) կառավարման մեթոդ է, որի նպատակը ռիսկի ի հայտ գալու պարագայում բանկի նյութական վնասների հատուցումն է [8, էջ 20]: Ստեղծվող պահուստները համարվում են բանկի համար ծախս, որի հատուցումը որոշ չափով ներառված է ռիսկի վճարի մեջ: Ռիսկի վճարը իրենից ներկայացնում է այն հավելյալ գումարը, որը փոխառու-իրավաբանական անձը ստիպված է վճարել, քանի որ վերջինիս հետ համագործակցությունը բանկը կամ վարկային կազմակերպությունը որակել է որպես ռիսկային՝ շնորհելով վերջինիս ռիսկայնության տվյալ մակարդակին համապատասխանող ներքին վարկանիշ: Համաձայն ներկայացվող ներքին վարկանշման մեթոդական մոտեցման՝ բանկերի կողմից փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկի համալիր գնահատման հիման վրա շնորհված ներքին վարկանիշից է կախված վերջինիս կողմից տրամադրվող վարկային ռեսուրսի տոկոսադրույքը, որը պետք է հավասար լինի՝

$$S_{վր} = S_p + S_c + S_{ռվ} \quad (2)$$

որտեղ՝

$S_{վր}$ – վարկային ռեսուրսի ներգրավման տոկոսադրույք,

S_p – բազային տոկոսադրույք,

S_c – շահույթի տոկոսադրույք,

$S_{ռվ}$ – ռիսկի վճարի տոկոսադրույք (հավելյալ տոկոսադրույք):

Աղյուսակ 2.3.1 Շնորհված ներքին վարկանիշերի, ռիսկի վճարի և ձևավորվող պահուստների ծավալների համապատասխանեցված սանդղակ:³

Վարկանիշ	Ռիսկի վճար	Պահուստների ծավալ
AAA	0%	1%
AA	0%	1%
A	0%	1%
BBB	0-0.5%	1%
BB	0.5-1%	1%
B	1-2%	1%
CCC	2-3%	2%
CC	3-4%	2%
C	-	-
D	-	-

Բազային տոկոսադրույքը և շահույթի տոկոսադրույքը ընդհանուր առմամբ լինում են հավասար բոլոր փոխառու-իրավաբանական անձանց համար, իսկ հավելյալ տոկոսադրույքի մեծությունը ուղղակիորեն կախված է փոխառու-իրավաբանական անձի վարկանիշից: Բանկի կամ վարկային կազմակերպության կողմից հաշվարկված ռիսկի վճարը մեծանում է վարկանիշի իջեցմանը զուգընթաց և հակառակը: Օրինակ՝ AAA վարկանիշի ռիսկի վճարը կարող է լինել 0%, իսկ BB-ինը՝ [0,5%-1%] և այլն:

Չարկ է անդրադառնալ նաև բանկի կամ վարկային կազմակերպության «ռիսկի ախորժակ» (որի հակառակ կողմը հանդիսանում է ռիսկից խուսափելը) հասկացությանը: Վերջինս իրենից ներկայացնում է որոշակի եկամուտ ստանալու նպատակով որոշակի մակարդակի ռիսկ ստանձնելու ցանկություն [96, էջ7]: Ֆինանսական հաստատություններին անհրաժեշտ է սահմանել իրենց «ռիսկի ախորժակը» կապված տարբեր տեսակի և մակարդակների ռիսկերի ստանձման հետ՝ հաշվի առնելով այդպիսի ռիսկերի կառավարման իրենց կազմակերպչական ունակությունը [96, էջ 6]: Այդպես՝ օրինակ ներկայացվող ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում առաջարկվում է CC-ից ցածր վարկանիշի դեպքում փոխառու-իրավաբանական անձին մերժել համագործակցության մեջ: Սակայն, եթե բանկը կամ վարկային կազմակերպությունը ունեն ռիսկի բարձր ախորժակ, ապա վերջիններս կդիտարկեն վերոնշյալ վարկանիշերն ունեցող փոխառու-իրավաբանական անձանց որպես գործընկերներ:

Չեղինակներից շատերը [26], [27], [41] նշում են, որ բանկը կամ վարկային

³ Աղյուսակը կազմված է հեղինակի կողմից՝ մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում:

կազմակերպությունը պետք է ունենա բավարար ծավալի սեփական միջոցներ և կարողանա ճիշտ գնահատել սպասելի հնարավոր կորուստների ծավալը պահուստների ձևավորման նպատակով: Վերջիններս շահագրգռված չեն գերագնահատել հնարավոր կորուստների մեծությունը, քանի որ ստիպված են վերջինիս գծով պահուստներ ձևավորել սեփական միջոցների հաշվին, բայց միևնույն ժամանակ ձևավորված պահուստների ծավալը պետք է ի վիճակի լինի ծածկել սպասելի հնարավոր կորուստների ծավալը, հետևաբար բանկը կամ վարկային կազմակերպությունը ձգտում է ստեղծել այնպիսի ծավալների պահուստներ, որոնք առավելագույնս կհամապատասխանեն վարկի գծով հնարավոր կորուստների ծավալին: Քանի որ պահուստների ձևավորումը համարվում է բանկի համար ծախս, վերջինս փոփոխության է ենթարկում բանկային կապիտալը, այդ պատճառով յուրաքանչյուր երկրում գոյություն ունեն պահանջներ բանկերի կապիտալի համարժեքության վերաբերյալ: ՀՀ Կենտրոնական Բանկի «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» համաձայն [89] բանկերը ձևավորում են ընդհանուր պահուստ՝ ստանդարտ վարկերի գծով 1%, և հատուկ պահուստ դասակարգված վարկերի գծով՝ հսկվողը՝ 10%, ոչ ստանդարտը՝ 20%, կասկածելի՝ 50%, և անհուսալի՝ 100% -ի չափով: Ելնելով բանկերի կողմից մշակված ներքին կանոնակարգերից (որոնցում բանկերը պարտավոր են մշակել վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման ներքին կանոնակարգ, որը կհամապատասխանի ՀՀ ԿԲ վերոնշյալ կարգին) բանկերը ինքնուրույն առանց ԿԲ-ի վերահսկողության ծառայության համաձայնությունը ստանալու, կարող են ավելացնել հատկացումները ընդհանուր և հատուկ պահուստներին. ընդհանուր պահուստների հատկացումները ստանդարտ ակտիվների համար կարող են կազմել 1 կամ 2%, իսկ հսկվող, կասկածելի և անհուսալի ակտիվների գծով՝ համապատասխանաբար 15%, 25% և 70%: Հետագա կորուստների գծով պահուստների ձևավորումը վարկանիշ շնորհելու կարևոր նպատակներից է [30, էջ 153-156]: Բանկի կողմից փոխառու-իրավաբանական անձի վարկանշումը կատարվում է նախքան վարկային ռեսուրսի տրամադրումը, հետևաբար տվյալ փուլում բանկը դասակարգում է տրվելիք վարկը որպես ստանդարտ, ստեղծում է ընդհանուր պահուստ և, կախված շնորհվող վարկանիշից, կատարում հատկացում 1-2% -ի սահմաններում, հետևաբար բարձր վարկանիշից դեպի

ցածր՝ ակտիվների գծով պահուստների հատկացումների տոկոսադրույքը պետք է ավելանա (աղյուսակ 2.3.1.): Այսինքն յուրաքանչյուր վարկանիշին համապատասխանեցվում է հետագա կորուստների գծով պահուստների համապատասխան ծավալ:

2.4 Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից փոխառու-իրավաբանական անձանց տրամադրվող վարկային ռեսուրսների սահմանաչափերի որոշում:

Բանկի կամ վարկային կազմակերպությունների կողմից փոխառու-իրավաբանական անձանց տրամադրվող վարկային ռեսուրսների հանդեպ սահմանաչափերի կիրառումը վերջիններիս կողմից վարկային ռիսկի կառավարման մեթոդներից մեկն է [95, էջ 594]: Ինչի նպատակը բանկի համար վարկային ռիսկի հանդիսացող կազմակերպությունների անվճարունակության ռիսկի նվազեցումն է՝ վարկային ռեսուրսի բացարձակ մեծության սահմանափակման միջոցով: Սահմանաչափեր կարող են կիրառվել [27, էջ 18]՝

- յուրաքանչյուր պոտենցիալ փոխառու-իրավաբանական անձի հանդեպ՝ կախված վերջինիս վարկանիշից,
- ըստ որևէ հատկանիշի խմբավորված փոխառու-իրավաբանական անձանց խմբի հանդեպ,
- կոնկրետ բանկային գործարքի հանդեպ,
- տնտեսության կոնկրետ ճյուղի հանդեպ,

Սակայն սահմանաչափերի կիրառման համակարգի հիմքը յուրաքանչյուր փոխառու-իրավաբանական անձի հանդեպ սահմանաչափերի կիրառումն է: Միևնույն փոխառու-իրավաբանական անձի գծով կարող է կիրառվել երկու սահմանաչափ, որոնք միմյանց հետ կհամադրվեն և հիմք կընդունվի վերջիններից նվազագույնը. օրինակ, եթե բանկում կամ վարկային կազմակերպությունում վերլուծությունների հիման վրա (կախված՝ ճյուղի զարգացածության աստիճանից, ներուժից, աճի տեմպերից և այլն) կոնկրետ սահմանաչափ է կիրառվում որևէ ճյուղի փոխառու-իրավաբանական անձանց հանդեպ (օրինակ՝ մինչև 50 մլն դրամ) և միևնույն ժամանակ սահմանաչափ է սահմանավում փոխառու-իրավաբանական անձի հանդեպ (կախված ներքին վարկանիշից), որը գործում է տվյալ ճյուղում (օրինակ մինչև 70 մլն դրամ), ապա փոխառու-իրավաբանական անձը կարող է հավակնել առավելագույնս մինչև 50 մլն դրամ վարկային ռեսուրսի

ստացմանը: Բանկերում և վարկային կազմակերպություններում փոխառու-իրավաբանական անձանց հետ ակտիվային գործարքների գծով սահմանաչափերի կիրառումը սովորաբար իրականացվում է «վարկանիշ – սահմանաչափ» համապատասխանեցված սանդղակի միջոցով [27, էջ 55-57]: Յուրաքանչյուր բանկ՝ կախված ռեսուրսների տեղաբաշխման իր կողմից իրականացվող քաղաքականությունից, ընտրված վարկանշման մոդելից և Կենտրոնական Բանկի կողմից սահմանված նորմատիվներից պետք է ընտրի վարկային սահմանաչափերի հաշվարկման առկա մոդելներից որևիցե մեկը կամ մշակի իր սեփական «սահմանաչափ - վարկանիշ» համապատասխանեցված սանդղակը (աղյուսակ 2.4.1):

Աղյուսակ 2.4.1 Մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում կազմված «վարկանիշ–սահմանաչափ» համապատասխանեցված սանդղակ:⁴

Վարկանիշեր	Սահմանաչափեր (հազ. դրամ)
AAA	Առավելագույն
AA	
A	
BBB	
BB	Միջին
B	
CCC	
CC	Ցածր
C	
D	-

Յուրաքանչյուր բանկ և վարկային կազմակերպություն իր կողմից կիրառվող ներքին վարկանշման մոդելի համաձայն պետք է կազմի իր սեփական «վարկանիշ-սահմանաչափ» սանդղակը և որոշի սահմանաչափի իր համար ընդունելի առավելագույնի, միջինի և ցածրի սահմանները: Կատարված վերլուծությունների հիման վրա, նպատակահարմար ենք համարում առաջարկվող ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում վարկանշային դասերը խմբավորել ըստ տրամադրվող վարկային ռեսուրսների սահմանաչափերի հետևյալ կերպ. AAA-ից BBB վարկանիշ ունեցող փոխառու-իրավաբանական անձանց սահմանել առավելագույն սահմանաչափ, BB-ից CCC՝ միջին, CC-ից C ցածր, իսկ D վարկանիշ ունեցողներին մերժել վարկա-

⁴ Աղյուսակը կազմված է հեղինակի կողմից՝ մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում:

վորման մեջ, քանի որ վերջիններս անվճարունակ են:

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից վարկավորման սահմանաչափի հաշվարկման առավել կիրառելի մեթոդներից է վերջինիս՝ հետևյալ բանաձևի միջոցով դուրսբերումը [44]՝

$$ՎՍ = \min(ԱՊ, ՍՅ, ՖՎ, ԱՅՍ) \quad (1)$$

որտեղ՝

ՎՍ – վարկավորման սահմանաչափ,

ԱՊ – վարկային ռեսուրսի ապահովվածություն,

ՍՅ – վարկի սպասարկման ունակություն,

ՖՎ – ֆինանսական վիճակ,

ԱՅՍ – վարկավորման առավելագույն հնարավոր սահմանաչափ:

Փոխառու-իրավաբանական անձի վարկի սպասարկման ունակությունը գնահատվում է բանկի կամ վարկային կազմակերպության համապատասխան մասնագետի կողմից, ով վերլուծում է ինչպես վերջինիս ընթացիկ ֆինանսական վիճակը, այնպես էլ ապագա ժամանակահատվածում պարտավորությունները մարելու ունակությունը. վերլուծվում են փոխառու-իրավաբանական անձի ընդհանուր պարտավորությունները, վերջիններիս մարման աղբյուրները և այլն: Փոխառու-իրավաբանական անձի ֆինանսական վիճակի վերլուծությունը իրենից ենթադրում է ֆինանսական գործակիցների վերլուծություն և գնահատում, որոնց կազմը և բնույթը պայմանավորված է փոխառու-իրավաբանական անձի կողմից կիրառվող ներքին վարկանշման մոդելից: Բանկերի կողմից ակտիվային գործարքների հանդեպ սահմանաչափերի կիրառումը պետք է իրականացվի ՀՀ Կենտրոնական Բանկի Ն3 և Ն1 –ի համաձայն [45, էջ 3]: Ն1-ը սահմանում է ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցության չափը, որը ՀՀ-ում կազմում է 12 տոկոս, համեմատության համար նշենք, որ Ռուսաստանի Դաշնությունում տվյալ նորմատիվը սահմանված է 10 տոկոս [46]: Այսինքն բանկը պետք է կարողանա սահմանել այնպիսի սահմանաչափեր, որպեսզի բանկի ընդհանուր կապիտալի և բանկի կողմից տրամադրված բոլոր վարկային ռեսուրսների գումարի հարաբերակցությունը լինի 12 տոկոսից ոչ պակաս: Նորմատիվ 1-ը կարգավորում է (սահմանում է) բանկի անվճարունակության ռիսկը և սահմանում է վարկային, օպերացիոն և շուկայական ռիսկերի ծածկման համար

անհրաժեշտ բանկի ընդհանուր կապիտալի նվազագույն մեծության հանդեպ պահանջները: Նորմատիվ 3-ը սահմանում է (կարգավորում է) մեկ փոխառու-իրավաբանական անձի կամ միմյանց հետ փոխկապակցված փոխառու-իրավաբանական անձանց խմբի գծով բանկի կողմից ընդունելի վարկային ռիսկի չափը: Այսինքն, բանկի ընդհանուր կապիտալի և մեկ փոխառու-իրավաբանական անձի կամ միմյանց հետ փոխկապակցված փոխառու-իրավաբանական անձանց խմբի հանդեպ բանկի կողմից վարկային պահանջների հարաբերության առավելագույն չափը, որը պետք է կազմի 20 տոկոսից ոչ ավել: Համեմատության համար նշենք, որ Ռուսաստանի Դաշնությունում տվյալ նորմատիվը սահմանված է 25 տոկոս [46]: Բացի սեփական կապիտալում տրամադրված վարկային ռեսուրսների կշիռը հաշվի առնելուց, բանկը տրամադրվող վարկային ռեսուրսների սահմանաչափերը սահմանելիս պետք է ուշադրություն դարձնի նաև փոխառու-իրավաբանական անձի կապիտալի մեծությանը, որովհետև նույնիսկ այն պարագայում, երբ վերջինս ունի լավ վարկանիշ, եթե տրամադրվող վարկային ռեսուրսի մեծությունը էական կշիռ ունենա իր ընդհանուր կապիտալում, ապա փոխառու-իրավաբանական անձի մոտ կարող են առաջանալ անվճարունակության ռիսկեր: Օրինակ, որպես փոխառու-իրավաբանական անձի հանդեպ կիրառվող առավելագույն սահմանաչափ կարելի է կիրառել վերջինիս ընդհանուր կապիտալի 15 տոկոսը [27, էջ 55], այն դեպքում, եթե տվյալ մեծությունը չի հակադրվում ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված վերոնշյալ նորմատիվներին: Բանկերի կողմից վարկավորման սահմանաչափերի հաշվարկման մոդելի ընտրությունը կամ մշակումը պատասխանատու գործընթացներ են, քանի որ վերջինիս շնորհիվ կարող է մեծանալ կամ նվազել փոխառու-իրավաբանական անձանց սնանկության հավանականությունը՝ կախված սահմանաչափի մեծության և փոխառու-իրավաբանական անձի վարկունակության անհամապատասխանությունից:

Բանկը կամ վարկային կազմակերպությունը օբյեկտիվ պատճառների առկայության դեպքում կարող է փոփոխել տրամադրվող վարկային ռեսուրսների սահմանաչափերի շեմային արժեքները (օրինակ փոխարժեքի կտրուկ տատանում, տնտեսության որոշ ճյուղերի անկում և այլն), ինչպես նաև վարկանշային դասերի և վերջիններիս համապատասխանեցված սահմանաչափերի խմբերը: Բացի այդ բանկերի կամ վարկային կազմակերպությունների համապատասխան բաժինը (կամ համապատասխան

մասնագետը) պետք է իրականացնի սահմանված սահմանաչափերի պահպանման վերահսկողություն: Այսինքն համակարգչային համապատասխան ծրագրերում զետեղված և յուրաքանչյուր օր թարմացվող աղյուսակների միջոցով պետք է բացահայտվեն բանկի կամ վարկային կազմակերպության կողմից փոխառու-իրավաբանական անձանց տրամադրված վարկային ռեսուրսի սահմանված սահմանաչափերի գերազանցման կամ վարկանիշին չհամապատասխանող սահմանաչափերի կիրառման դեպքեր (եթե վերջիններս առկա են): Խախտումների բացահայտման պարագայում, պետք է կատարել վերլուծություն, թե ինչ պայմաններում է կատարվել խախտումը, ուն կողմից և այլն՝ հետագայում նմանատիպ խախտումներից խուսափելու նպատակով:

ԳԼՈՒԽ 3. ՀՀ-ում ՓՈԽԱՌՈՒ-ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՆԵՐՔԻՆ ՎԱՐԿԱՆՇՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ

3.1 Փոխառու-իրավաբանական անձանց վարկանշման վրա ազդող քանակական գնահատմանը ենթարկվող գործոնների ընտրություն, վերլուծություն և գնահատում:

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկերի գնահատումը ներկայացվող մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում իրականացվում է անվճարունակության ռիսկի քանակական և փորձագիտական գնահատականների միագումար գնահատման հիման վրա: Քանակական գնահատումը իրենից ներկայացնում է կազմակերպության անվճարունակության ռիսկի չափի որոշում արտահայտված բացարձակ և հարաբերական ֆինանսական ցուցանիշների վերլուծությամբ՝ փոխառու-իրավաբանական անձի ֆինանսական վիճակը գնահատելու նպատակով: Ֆինանսական վերլուծության հիմնական նպատակը փոքր քանակի առավելագույնս ինֆորմատիվ գործակիցների դուրսբերումն է, որոնց միջոցով հնարավոր է ստանալ փոխառու-իրավաբանական անձի ֆինանսական վիճակի, շահույթի և վնասի, ակտիվների և պասիվների կառուցվածքի օբյեկտիվ պատկեր [47, էջ 66]: Ֆինանսական վերլուծության տեղեկատվական բազան ֆինանսական հաշվետվությունն է: Ֆինանսական հաշվետվության վերլուծությունը հանդես է գալիս որպես փոխառու-իրավաբանական անձի ֆինանսա-տնտեսական գործունեության խնդիրները բացահայտելու գործիք [48, էջ 7]: Բանկի կամ վարկային կազմակերպությունների կողմից փոխառու-իրավաբանական անձանց շնորհված ներքին վարկանիշը պետք է միտված լինի ապագային, այսինքն լիակատար տեղեկատվություն տրամադրի ինչպես տվյալ պահի դրությամբ, այնպես էլ մոտ ապագայում փոխառու-իրավաբանական անձի ֆինանսական վիճակի վերաբերյալ [26, էջ 51]:

Այդ է պատճառը, որ բանկի կամ վարկային կազմակերպության համապատասխան մասնագետները վերլուծում են ոչ միայն փոխառու-իրավաբանական անձի շահութաբերությունը կամ վաճառքների ծավալը հաշվետու ժամանակահատվածի

համար, այլ ողջ ֆինանսական հաշվետվությունը, քանի որ կարող է մեկ ցուցանիշի դրական միտումը չվկայի փոխառու-իրավաբանական անձի բարգավաճման մասին, այլ ընդամենը փոխհատուցի մեկ այլ ցուցանիշի բացասական միտումը: Ինչպես օրինակ՝ վաճառքների ծավալի մեծացումը դեռ չի վկայում փոխառու-իրավաբանական անձի շահութաբերության մեծացման մասին, այն կարող է պայմանավորված լինել ճյուղում առկա մրցակցության ուժեղացման պատճառով գների իջեցման քաղաքականությամբ և այլն:

Ռիսկերի փորձագիտական գնահատման մեթոդը իրենից ներկայացնում է մաթեմատիկական և տրամաբանական միջոցառումների ամբողջություն, որոնք ուղղված են մասնագետ-փորձագետներից տեղեկատվություն ստանալուն, ստացված տեղեկատվության վերլուծության և ընդհանրացման՝ ռացիոնալ լուծումների ընտրության նպատակով [31, էջ 139]: Փորձագիտական խմբի ձևավորման ժամանակ անհրաժեշտ է լուծել վերջիններիս ընտրության հետ կապված որակական և քանակական խնդիրները: Որակական ընտրությունը ենթադրում է փորձագետին այնպիսի պահանջներ ներկայացնելուն, ինչպիսիք են տեղեկացվածությունը, փորձաքննության արդյունքների մեջ հետաքրքրվածությունը, գործունյա լինելը և օբյեկտիվությունը: Քանակական ընտրությունը իրենից ենթադրում է փորձագետի տվյալ բնագավառում կարողության գնահատում և փորձագետների անհրաժեշտ քանակի հաշվարկում: Փորձագետների խմբի կազմի օպտիմալ քանակը տատանվում է հինգից տասներկու [31, էջ 140]: Փորձագիտական տեղեկատվության հավաքագրման և վերլուծության տեսանկյունից փորձագիտական գնահատականների մեթոդները բաժանվում են երկու խմբի [31, էջ 140-141].

1. փորձագիտական խմբի միասնական աշխատանքի մեթոդներ,
2. փորձագիտական խմբի անդամների անհատական կարծիքի ստացման մեթոդներ:

Փորձագիտական խմբի միասնական կարծիքը կարող է դրսևորվել հետևյալ ձևերով [31, էջ 142].

1. բալային գնահատականներ,
2. զույգ համեմատություններ,
3. դասակարգում:

Փոխառու-իրավաբանական անձանց գործունեության ֆինանսական վիճակի քանակական գնահատման համար ներկայացվող մեթոդական մոտեցման շրջանակներում իրականացվել է գործոնային վերլուծություն և փորձագիտական գնահատման բալային մեթոդի կիրառման արդյունքում ընտրվել են հետևյալ հինգ խումբ գործակիցները, որոնց բանաձևերի վերծանումը ներկայացված է հավելված 1-ում:

- իրացվելիության գործակիցներ,
- ֆինանսական կայունության գործակիցներ,
- շահութաբերության գործակիցներ,
- գործարար ակտիվության գործակիցներ,
- զարգացման միտումների գործակիցներ:

Աղյուսակ` 3.1.1. Գործակիցների խմբեր և վերջիններիս համապատասխանեցված բալերի միջակայքեր:⁵

Օգտագործվող գործակիցների խմբեր	Բոլոր գործակիցների համապատասխան խմբերի գծով բալերի գումարի միջակայքեր
Իրացվելիության գործակիցներ	$[\min(Q_{05}; Q_{404}) \dots \max(Q_{01}; Q_{401})]$
Ֆինանսական կայունության գործակիցներ	$[\min(Q_{306}; Q_{705}; Q_{945}) \dots \max(Q_{301}; Q_{701}; Q_{941})]$
Շահութաբերության գործակիցներ	$[\min(Q_{905}; Q_{405}) \dots \max(Q_{901}; Q_{401})]$
Գործարար ակտիվության գործակիցներ	$[\min(Q_{705}; Q_{705}; Q_{405}) \dots \max(Q_{701}; Q_{701}; Q_{401})]$
Զարգացման միտումների գործակիցներ	$[\min(Q_{226}; Q_{206}) \dots \max(Q_{221}; Q_{201})]$

որտեղ` $Q_{[x]1} > Q_{[x]2} > Q_{[x]3} > \dots > Q_{[x]n}$

Իրացվելիության գործակիցները նկարագրում են փոխառու-իրավաբանական անձի կողմից տիրապետվող այն ակտիվները, որոնք արագ և առանց էական կորուստների կարող են փոխակերպվել դրամական միջոցների: Վերջիններիս վերլուծության արդյունքում պարզ է դառնում, թե արդյոք փոխառու-իրավաբանական անձը ապագայում ի վիճակի կլինի ժամանակին մարել իր պարտավորությունները, եթե ոչ, ապա ինչ չափով չի կարողանա մարել և այլն: Իրացվելիության գործակիցները ոչ միայն տալիս են փոխառու-իրավաբանական անձի ֆինանսական վիճակի կայունության բազմակողմ

⁵ Աղյուսակը կազմված է հեղինակի կողմից` մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում:

բնութագրում, այլ նաև պատասխանում են վերլուծության արդյունքում ստացված տեղեկատվության արտաքին օգտատերերի (բանկեր, վարկային և առևտրային կազմակերպություններ, մատակարարներ և այլն) մի շարք հարցերին [49, էջ 157-158]:

Մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում առաջարկվում է վերլուծել հետևյալ իրացվելիության գործակիցները՝

1. ծածկման գործակից,
2. վճարունակության մակարդակի գործակից:

Ծածկման գործակիցը տալիս է փոխառու-իրավաբանական անձի իրացվելիության ընդհանուր գնահատական՝ ցույց տալով, թե կարճաժամկետ ակտիվների որքան միավորն է բաժին ընկնում մեկ միավոր կարճաժամկետ պարտավորությունների: Գործակիցի արժեքը կարող է տարբեր լինել՝ կախված փոխառու-իրավաբանական անձի գործունեության ճյուղից (աղյուսակ՝ 3.1.2.): Եվ վերջինիս աճի միտումը ողջամիտ սահմաններում ընկալվում է որպես դրական գործոն: Ծածկման գործակիցը, ըստ էության, ցույց է տալիս փոխառու-իրավաբանական անձի վճարման հնարավորությունները ունեցած ակտիվներով բոլոր պարտավորությունները ծածկելու համար [51, էջ 349]:

Ծածկման գործակիցը դուրս է բերվում «կարճաժամկետ ակտիվների» գումարի և «կարճաժամկետ պարտավորությունների» գումարի հարաբերությամբ՝ հետևյալ բանաձևով (1)՝

$$\frac{\text{տող 250}_h + \text{տող 180}_h + \text{տող 150}_h + \text{տող 210}_h + \text{տող 2261}_h}{\text{տող 490}_h - \text{տող 523}_h} \quad (1)$$

որտեղ՝

«կարճաժամկետ ակտիվների» բաղադրիչներն են՝ դրամական միջոցներ, կարճաժամկետ ֆինանսական ներդրումներ, կարճաժամկետ դեբիտորական պարտք (մինչև տասներկու ամիս) [20, էջ 176-177] և պաշարները՝ ԱԱՀ-ն հաշվի առած: Այն դեպքում, երբ կարճաժամկետ պարտավորությունները հաշվետու ամսաթվի դրությամբ հավասար են ապագա ժամանակահատվածի եկամուտներին, ծածկման գործակիցը չի հաշվարկվում և փոխառու-իրավաբանական անձին ներկայացվող ներքին վարկանշման մշակված

մեթոդական մոտեցման շրջանակներում շնորհվում է տասը բալ: Վերջիններիս տարբերության մեծացմանը զուգընթաց շնորհվող բալերի քանակը նվազում է:

«Վճարունակության մակարդակի» ցուցանիշը սահմանվում է որպես պարտավորությունների (կարճաժամկետ պարտավորությունների և ապագա ժամանակահատվածների եկամուտների տարբերություն) և փոխառու-իրավաբանական անձի ամսական միջին շահույթի հարաբերություն և դուրս է բերվում հետևյալ բանաձևով [93] (2)`

$$\frac{\text{տող 490}_h - \text{տող 523}_h + \text{տող 360}_h}{\text{տող 010}_{\text{մ.ա.}}} \quad (2)$$

Տվյալ ցուցանիշը ինֆորմատիվ է և բնութագրում է փոխառու-իրավաբանական անձանց ընդհանուր վճարունակությունը, փոխառու միջոցների ծավալը և վերջիններիս մարման հնարավոր ժամկետները, այսինքն պարտքի սպասարկման աստիճանը, քանզի արտահայտում է, թե փոխառու-իրավաբանական անձի ամսական եկամուտը երկարաժամկետ պարտավորությունների որ մասն է կազմում: Որքան «վճարունակության մակարդակի» ցուցանիշը մեծ է, այնքան փոխառու-իրավաբանական անձի վճարունակության աստիճանը ցածր է և հակառակը:

Ներկայացվող ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում վերլուծվող ցուցանիշների հաջորդ խումբը ֆինանսական կայունությունն է, որի մասին պատկերացում ենք կազմում «ֆինանսական անկախության գործակցի», «սեփական շրջանառու միջոցներով ապահովվածության» և «գույքային վիճակ» գործակիցների վերլուծության արդյունքում:

«Ֆինանսական անկախության գործակիցը» սահմանվում է որպես զուտ ակտիվների հարաբերություն հաշվեկշռային արժույթին հետևյալ բանաձևով [53, էջ 85] (3)`

$$\frac{\text{Ձ. Ա.}_h}{\text{տող 500}_h} \quad (3)$$

որտեղ`

զուտ ակտիվները իրենցից ներկայացնում են փոխառու-իրավաբանական անձի ունեցվածքի հաշվեկշռային արժեքը` նվազեցված վերջինիս պարտավորությունների ընդհանուր գումարով [54]: Հաշվեկշռի արժույթը իրենցից ներկայացնում է ակտիվների կամ պասիվների գծով հաշվապահական հաշվեկշռի մեծությունը: Ի դեպ հաշվեկշռի արժույթի արժեքի մեծացումը կարող ինչպես դրական, այնպես էլ բացասական

երևույթների հետևանք լինել՝ հիմնական միջոցների գերազնահատում, գնաճային գործընթացներ և այլն [55, էջ 131]: Իսկ վերջինիս նվազումը կարող է փոխառու-իրավաբանական անձի գործունեության ակտիվության նվազման արդյունք լինել, որն իր հերթին կարող է առաջացած լինել սպառողների վճարունակ պահանջարկի նվազմամբ, հումքային շուկաներ մուտք գործելու խնդիրների հետ և այլն: Հաշվեկշռի արժույթի նվազումը կարելի է դիտարկել որպես փոխառու-իրավաբանական անձի վճարունակության նվազում:

«Սեփական շրջանառու միջոցներով ապահովվածության» գործակիցը բնութագրում է փոխառու-իրավաբանական անձի մոտ սեփական շրջանառու միջոցների առկայությունը, որոնք անհրաժեշտ են վերջինիս ֆինանսական կայունության պահպանման համար [56, էջ 75]: Որքան տվյալ գործակցի արժեքը մեծ է (0,5), այնքան փոխառու-իրավաբանական անձի ֆինանսական վիճակը համարվում է «լավ», այնքան վերջինս հնարավորություն ունի վարել անկախ ֆինանսական քաղաքականություն: «Սեփական շրջանառու միջոցներով ապահովվածության գործակիցը» սահմանվում է որպես սեփական շրջանառու միջոցների և շրջանառու ակտիվների հարաբերություն [20, էջ 187] և դուրս է բերվում հետևյալ բանաձևով (4)՝

$$\frac{\text{Ձ.Ա.}_h - \text{տող } 080_h - \text{տող } 060_h}{\text{տող } 220_h} \quad (4)$$

որտեղ՝

սեփական շրջանառու միջոցներն իրենցից ներկայացնում են զուտ ակտիվները՝ նվազեցված ոչ շրջանառու ակտիվներով և երկարաժամկետ դեբիտորական պարտքով: Այն դեպքում, երբ շրջանառու ակտիվները հաշվետու ժամանակահատվածի համար հավասար են զրոյի, «սեփական շրջանառու միջոցներով ապահովվածության» գործակիցը չի հաշվարկվում, և փոխառու-իրավաբանական անձը ներկայացվող մեթոդական մոտեցման շրջանակներում տվյալ գործակցի համար ստանում է զրո բալ:

Փոխառու-իրավաբանական անձի գույքային վիճակի հիմնական բնութագրիչն է վերջինիս տիրապետության տակ գտնվող տնտեսական միջոցների արժեքային գնահատականը, այսինքն հաշվեկշռային արժույթը [57, էջ 60]: «Գույքային վիճակի գործակիցը» դուրս է բերվում ոչ շրջանառու ակտիվների և հաշվեկշռի արժույթի հարաբերությամբ, հետևյալ բանաձևով [93] (5)՝

տող 080_h (5)
տող 500_h

Փոխառու-իրավաբանական անձի գործունեության արդյունավետության գլխավոր ցուցանիշներից է շահութաբերությունը: Փոխառու-իրավաբանական անձի շահութաբերության բարձրացումը ֆինանսական մենեջմենթի գլխավոր խնդիրն է: Ի տարբերություն մյուս նպատակային ցուցանիշների (շահույթ, ծախսեր և այլն), շահութաբերության մեծացումը երբեք չի վնասում կազմակերպությանը [58, էջ108]: Շահութաբերության գործակիցները ցույց են տալիս իրացվելիության, լներիջի, և ակտիվների կառավարման ցուցանիշների համատեղ ազդեցությունը փոխառու-իրավաբանական անձի գործունեության արդյունքների վրա: Ներկայացվող ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում վերլուծվում են շահութաբերության հետևյալ գործակիցները՝ «գործունեության շահութաբերություն» և «վաճառքների շահութաբերություն»: «Գործունեության շահութաբերության» գործակիցը իրենից ներկայացնում է զուտ շահույթի և հասույթի հարաբերություն, ըստ հետևյալ բանաձևի [93] (6)՝

տող 180_h (6)
տող 010_{մ.ա.}

Այն դեպքում, երբ հասույթը հաշվետու ամսաթվի դրությամբ հավասար է զրոյի, վերոնշյալ գործակիցը չի հաշվարկվում, և փոխառու-իրավաբանական անձը ներկայացվող ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում տվյալ գործակցի գծով բալեր չի ստանում:

Շահույթը նույնպես փոխառու-իրավաբանական անձի գործունեության կարևորագույն ցուցանիշներից է, վերջինիս աճի միտումը ֆինանսական հիմք է ստեղծում փոխառու-իրավաբանական անձի համար: Շահույթը բնութագրում է փոխառու-իրավաբանական անձի գործարար ակտիվությունը, ֆինանսական բարեկեցության մակարդակը, ակտիվներում կատարված ներդրումների եկամտաբերությունը և այլն [59]: «Վաճառքների շահութաբերության» գործակիցը սահմանվում է որպես հասույթի աճի հարաբերում հասույթին և դուրս է բերվում հետևյալ բանաձևով [93] (7)՝

տող 060_h (7)
տող 010_h

Այն դեպքում, երբ հասույթը հաշվետու ժամանակահատվածի դրությամբ հավասար է զրոյի, ներկայացվող ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում «վաճառքների շահութաբերություն» գործակիցը չի հաշվարկվում և շնորհվում է զրո բալ:

Անվճարունակության ռիսկը կառավարելու համար փոխառու-իրավաբանական անձիք պետք է ունենան կանխիկ դրամական միջոցներ կամ բարձր իրացվելիությամբ ակտիվներ: Իրացվելիության ցածր մակարդակը նշանակում է, որ փոխառու-իրավաբանական անձի ռեսուրսների միայն փոքր մասն է ներգրավված շրջանառու կապիտալում և վերջինիս կարճատև ֆինանսավորման աղբյուրը վարկերն ու փոխառություններն են: Վերահսկելով պաշարները և դեբիտորական պարտքը, կրեդիտորների հետ վստահելի հարաբերություններ ստեղծելով կարելի է կառավարել փոխառու-իրավաբանական անձի շրջանառու կապիտալը [60, էջ 80]: Վերոնշյալը հաշվի առնելով ներքին վարկանշման ներկայացվող մեթոդական մոտեցման շրջանակներում վերլուծվող գործակիցների հաջորդ խումբը գործարար ակտիվության գործակիցներն են [84] «պաշարների շրջանառության ժամանակահատված», «դեբիտորական պարտքի շրջանառության ժամանակահատված», «կրեդիտորական պարտքի շրջանառության ժամանակահատված»:

«Պաշարների շրջանառության ժամանակահատվածը» սահմանվում է որպես պաշարների միջին մեծության հարաբերությունը միջին օրական հասույթին հետևյալ բանաձևով (8)

$$\frac{(\text{տող } 210_{\text{ս}} + \text{տող } 210_{\text{հ}}) \times 0.5 \times 30}{\text{տող } 010_{\text{մ.ա.}}} \quad (8)$$

Այն դեպքում, երբ հասույթի մեծությունը ընթացիկ տարվա հաշվետու ժամանակահատվածի դրությամբ հավասար է զրոյի «պաշարների շրջանառության ժամանակահատված» գործակիցը չի հաշվարկվում, և փոխառու-իրավաբանական անձին ներկայացվող ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում շնորհվում է զրո բալ: «Դեբիտորական պարտքի շրջանառության ժամանակահատված» գործակիցը ցույց է տալիս, թե միջինում դեբիտորները քանի օրում են մարում փոխառու-իրավաբանական անձի առջև ունեցած պարտավորությունները: Վերջինս սահմանվում

է, որպէս դեբիտորական պարտքի միջին մեծութեան հարաբերութիւն միջին օրական հասույթին հետևյալ բանաձևով (9)

$$\frac{(\text{տող } 060_u + \text{տող } 060_h + \text{տող } 150_u + \text{տող } 150_h) \times 0.5 \times 30}{\text{տող } 010_{\text{մ.ա.}}} \quad (9)$$

Փոխառու-իրավաբանական անձիք ձգտում են հնարավորինս նվազեցնել դեբիտորական պարտքերը՝ խրախուսելով դեբիտորական պարտքի նախօրոք վճարումը [60, էջ 81]: Այն դեպքում, երբ հասույթի մեծութիւնը ընթացիկ տարվա հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ հավասար է զրոյի, «դեբիտորական պարտքի շրջանառութեան ժամանակահատված» գործակիցը չի հաշվարկվում, և ներկայացվող մեթոդական մոտեցման շրջանակներում փոխառու-իրավաբանական անձին շնորհվում է զրո բալ:

«Կրեդիտորական պարտքի շրջանառութեան ժամանակահատված» գործակիցը սահմանվում է որպէս կրեդիտորական պարտքի միջին մեծութեան հարաբերութիւն միջին օրական հասույթին հետևյալ բանաձևով (10)

$$\frac{(\text{տող } 390_u + \text{տող } 390_h) \times 0.5 \times 30}{\text{տող } 010_{\text{մ.ա.}}} \quad (10)$$

Կրեդիտորական պարտքը պարտավորութիւն է, որը կարելի է սահմանել որպէս պայմանագրից բխող վճարման անհրաժեշտութիւն [61, 290]: «Կրեդիտորական պարտքի շրջանառութեան ժամանակահատված» գործակիցը ցույց է տալիս, թե միջինում քանի օրվա մեջ է փոխառու-իրավաբանական անձը վճարում կրեդիտորների կողմից ներկայացվող հաշիվները [60, էջ 81]: Այն դեպքում, երբ հասույթի մեծութիւնը ընթացիկ տարվա հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ հավասար է զրոյի «կրեդիտորական պարտքի շրջանառութեան ժամանակահատված» գործակիցը չի հաշվարկվում, և ներկայացվող մեթոդական մոտեցման շրջանակներում փոխառու-իրավաբանական անձին շնորհվում է զրո բալ:

Ներկայացվող ներքին վարկանշման մեթոդական մոտեցման սահմաններում վերլուծվող գործակիցների հաջորդ խումբը զարգացման գործակիցներն են՝ «հասույթի հավելաճի գործակից» և «զուտ ակտիվների նվազման գործակից»: «Հասույթի հավել-

լաճի» գործակիցը իրենից ներկայացնում է հասույթի հավելաճի հարաբերում հասույթին հետևյալ բանաձևով (11)՝

$$\frac{\text{տող } 010_h - \text{տող } 010_{h-1}}{\text{տող } 010_{h-1}} \quad (11)$$

Այն դեպքում, երբ հասույթի մեծությունը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի դրությամբ հավասար է զրոյի, հասույթի հավելաճի գործակիցը չի հաշվարկվում և փոխառու-իրավաբանական անձին ներկայացվող ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում շնորհվում է զրո բալ:

«Ջուտ ակտիվների նվազման գործակիցը» իրենից ներկայացնում է զուտ ակտիվների նվազման չափը ի համեմատ զուտ ակտիվների առավելագույն մեծության՝ հարաբերած զուտ ակտիվների առավելագույն մեծությանն ըստ հետևյալ բանաձևի (12):

$$\frac{\text{Ջ.Ա.}_{\text{max}} - \text{Ջ.Ա.}_h}{\text{Ջ.Ա.}_{\text{max}}} \quad (12)$$

Այն դեպքում, երբ զուտ ակտիվների առավելագույն մեծությունը հավասար է զրոյի կամ զուտ ակտիվների մեծությունը հաշվետու ամսաթվի դրությամբ բացասական է, տվյալ գործակիցը չի հաշվարկվում և ներկայացվող ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում փոխառու-իրավաբանական անձին շնորհվում է «-5» բալ:

Ստորև ներկայացված են ներքին վարկանշման ներկայացվող մշակված մեթոդական մոտեցման շրջանակներում փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկի քանակական գնահատման գործակիցների արժեքների բալային գնահատականները (ըստ տնտեսության ճյուղերի)՝ աղյուսակ 3.1.2.

Աղյուսակ՝ 3.1.2. Կազմակերպությունների անվճարունակության ռիսկի քանակա-
կան գնահատման գործակիցներ՝ ըստ տնտեսության ճյուղերի [80, էջ 402-421], [50, էջ
257-261], [20]:

Գործակիցներ	Գործակիցների արժեքները ըստ ճյուղերի պայամանական խմբերի			Բալեր
	Արդյունաբերություն	Առևտուր	Գյուղատնտեսություն	
1. Իրացվելիության				
Ծածկման	>1.6	>1.5	>1.9	Գժ1
	[1.3-1.6]	[1.3-1.5]	[1.6-1.9]	Գժ2
	(1.0-1.3)	(1.1-1.3)	(1.3-1.6)	Գժ3
	[0.8-1.0]	[0.9-1.1]	[1.0-1.3]	Գժ4
	< 0.8	< 0.9	<1.0	Գժ5
Վճարունակության մակարդակ	< 3	<1	< 6	ԳՎՄ1
	[6-3]	[3-1]	[9-6]	ԳՎՄ2
	(9-6)	(6-3)	(12-9)	ԳՎՄ3
	>12	> 9	>15	ԳՎՄ4
2. Ֆինանսական կայունության				
Ֆինանսական անկախության	> 0.7	> 0.3	> 0.6	ԳՖԱ.1
	[0.5-0.7]	[0.2-0.3]	[0.5-0.6]	ԳՖԱ.2
	(0.3-0.5)	(0.1-0.2)	(0.4-0.5)	ԳՖԱ.3
	[0.1-0.3]	[0.05-0.1]	[0.3-0.4]	ԳՖԱ.4
	[0-0.1)	[0-0.05)	[0-0.3)	ԳՖԱ.5
	< 0	< 0	< 0	ԳՖԱ.6
Սեփական շրջանառու միջոցներով ապահովվածության	> 0.4	> 0.5	> 0.2	ԳՇՄԱ.1
	[0.25-0.4]	[0.35-0.5]	[0.1-0.2]	ԳՇՄԱ.2
	(0.1-0.25)	(0.15-0,35)	(0-0,1)	ԳՇՄԱ.3
	[-0,1-0,1]	[0-0.15]	[-0.2-0]	ԳՇՄԱ.4
	<-0.1	< 0	>-0.2	ԳՇՄԱ.5
Գույքային վիճակի	> 0.5	> 0.15	> 0.6	ԳԳՎ.1
	[0.4-0.5]	[0.1-0.15]	[0.5-0.6]	ԳԳՎ.2
	(0.3-0.4)	(0.05-0.1)	(0.4-0.5)	ԳԳՎ.3
	[0.2-0.3]	[0.02-0.05]	[0.3-0.4]	ԳԳՎ.4
	< 0.2	< 0.02	< 0.3	ԳԳՎ.5
3. Շահութաբերության				
Գործունեության շահութաբերություն	> 0.25	> 0.1	> 0.15	ԳԳՇ1
	[0.15-0.25]	[0.05-0.1]	[0.1-0.15]	ԳԳՇ2
	(0.05-0.15)	(0-0.05)	(0.05-0.1)	ԳԳՇ3
	[0-0.05]	[-0.05-0]	[0-0.05]	ԳԳՇ4
	< 0	< -0.05	< 0	ԳԳՇ5
Վաճառքների գծով շահութաբերություն	> 0.20	> 0.08	> 0.15	ԳՎՇ1
	[0.15-0.20]	[0.05-0.08]	[0.08-0.15]	ԳՎՇ2
	(0.05-0.15)	(0.02-0.05)	(0.04-0.08)	ԳՎՇ3
	[0-0.05]	[0-0.02]	[0-0.05]	ԳՎՇ4
	< 0	< 0	< 0	ԳՎՇ5

Աղյուսակ՝ 3.1.2. շարունակություն				
4. Գործարար ակտիվության				
Պաշարների շրջանառության ժամանակահատված	< 120	< 30	< 180	Գ _{ՊՇ1}
	[180-120]	[60-30]	[270-180]	Գ _{ՊՇ2}
	(270-180)	(90-60)	(360-270)	Գ _{ՊՇ3}
	[360-270]	[180-90]	[450-360]	Գ _{ՊՇ4}
	> 360	> 180	> 450	Գ _{ՊՇ5}
Դեբիտորական պարտքի շրջանառություն	< 120	< 30	< 180	Գ _{ԴՊՇ1}
	[180-120]	[60-30]	[270-180]	Գ _{ԴՊՇ2}
	(270-180)	(90-60)	(360-270)	Գ _{ԴՊՇ3}
	[360-270]	[180-90]	[450-360]	Գ _{ԴՊՇ4}
	> 360	> 180	> 450	Գ _{ԴՊՇ5}
Կրեդիտորական պարտքի շրջանառություն	< 120	< 30	< 180	Գ _{ԿՊՇ1}
	[180-120]	[60-30]	[270-180]	Գ _{ԿՊՇ2}
	(270-180)	(90-60)	(360-270)	Գ _{ԿՊՇ3}
	[360-270]	[180-90]	[450-360]	Գ _{ԿՊՇ4}
	> 360	> 180	> 450	Գ _{ԿՊՇ5}
5. Զարգացման				
Հասույթի հավելած (բացակայություն)	> 0.7	> 0.5	> 0.6	Գ _{ՀՀ1}
	[0.45-0.7]	[0.3-0.5]	[0.4-0.6]	Գ _{ՀՀ2}
	(0.2-0.45)	(0.2-0.3)	(0.2-0.4)	Գ _{ՀՀ3}
	[0.1-0.2]	[0.1-0.2]	[0.1-0.2]	Գ _{ՀՀ4}
	[0-0.1]	[0-0.1]	[0-0.1]	Գ _{ՀՀ5}
	< 0	< 0	< 0	Գ _{ՀՀ6}
Զուտ ակտիվների նվազում (բացասական մեծություն)	0			Գ _{ՀԱ1}
	(0-0.05)			Գ _{ՀԱ2}
	[0.05-0.10]			Գ _{ՀԱ3}
	(0.10-0.15)			Գ _{ՀԱ4}
	[0.15-0.25]			Գ _{ՀԱ5}
	> 0.25			Գ _{ՀԱ6}

որտեղ՝ $Q_{[x]1} > Q_{[x]2} > Q_{[x]3} > \dots > Q_{[x]n}$

Յուրաքանչյուր բանկ կամ վարկային կազմակերպություն՝ ելնելով իր արտաքին միջավայրի, գործունեության առանձնահատկություններից, ակտիվների մեծությունից, ռիսկ-ախտրժակից և այլն, փորձագիտական գնահատման միջոցով է սահմանում նկարագրված գործակիցների գծով շնորհվող բալերը և բալերի միջակայքերը:

Ատենախոսության հավելված 4-ում ներկայացված են փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկերի գնահատման նպատակով մշակված ներքին վարկանշման մոտեցման շրջանակներում հեղինակի, վերջինիս գիտական ղեկա-

վարի և վերը նկարագրված մեթոդի համաձայն ընտրված ևս երեք փորձագետների կողմից քանակական գործակիցների փորձագիտական գնահատման բալային մեթոդի հիման վրա առաջարկվող (ընտրված) բալերը և բալային միջակայքերի (չափերը):

Փոխառու-իրավաբանական անձանց ֆինանսական վիճակի քանակական գնահատման հիման վրա ներկայացվող մեթոդական մոտեցման շրջանակներում շնորհված բալերը գումարվում են և օգտագործվում 3.4. ենթավերնագրի (1) բանաձևի մեջ փոխառու-իրավաբանական անձի ներքին վարկանիշը դուրս բերելու նպատակով:

3.2 Փոխառու-իրավաբանական անձանց վարկանշման վրա ազդող փորձագիտական գնահատմանը ենթարկվող գործոնների ընտրություն, վերլուծություն և գնահատում:

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից փոխառու-իրավաբանական անձանց ներքին վարկանշման մոդելները ավելի իրատեսական դարձնելու նպատակով անվճարունակության ռիսկի քանակական գնահատմանը այժմ գումարվել է նաև փորձագիտական գնահատումը: Փոխառու-իրավաբանական անձանց փորձագիտական գնահատումը ունի բազմաթիվ առավելություններ. նախևառաջ գոյություն ունեն այնպիսի ցուցանիշներ որոնց քանակական չափումն ու համեմատումը անհնար է: Օրինակ՝ հեղինակությունը, կառավարման որակը և այլն, բացի այդ տնտեսական միջավայրի ինտենսիվ փոփոխության պայմաններում երբեմն նպատակահարմար չէ առաջնորդվել ցուցանիշների միայն զուտ թվային մեկնաբանմամբ: Նման դեպքերում անհրաժեշտություն է առաջանում փորձագիտական գնահատման, որի ընթացքում բացահայտվում են այս կամ այն ցուցանիշի բացասական կամ դրական միտումների նախապայմանները, ինչից հետո հնարավոր է դառնում գնահատել, թե արդյոք այդ միտումները ժամանակավոր, թե հաստատուն բնույթ են կրում [62]: Փորձագիտական գնահատումը ունի նաև բացասական կողմեր. մասնավորապես որոշ հեղինակներ [18, 27] նշում են ներքին վարկանշման գործընթացում փորձագետների սուբյեկտիվության դրսևորման վտանգի առկայության մասին: Այդ է պատճառը, որ վարկանշման մոդելների զգալի մասում փորձագիտական գնահատմանը քանակականի համեմատ ավելի քիչ կշիռ է տրվում:

Փոխառու-իրավաբանական անձանց վարկանիշ շնորհելու նպատակով ֆինանսական վիճակի փորձագիտական գնահատումը իրականացվել է գործոնային վերլուծության հիման վրա և փորձագիտական գնահատման արդյունքում ընտրվել են հետևյալ երեք բլոկերի ցուցանիշները.

- փոխառու-իրավաբանական անձի շուկայում զբաղեցրած դիրքի վերլուծություն,
- փոխառու-իրավաբանական անձի գործունեության դիվեսիֆիկացիայի վերլուծություն,
- փոխառու-իրավաբանական անձի բնութագրի վերլուծություն:

Աղյուսակ` 3.2.1. Ցուցանիշների խմբեր և վերջիններիս համապատասխանեցված բալերի գումարի միջակայքեր:⁶

Օգտագործվող ցուցանիշների խմբեր	Բոլոր գործակիցների համապատասխան խմբերի գծով բալերի գումարի միջակայքեր
Շուկայում զբաղեցրած դիրք	[min(Գ _{Մրց5} ; Գ _{զբ4} ; Գ _{զթ5})...max(Գ _{Մրց1} ; Գ _{զբ1} ; Գ _{զթ1})]
Գործունեության դիվեսիֆիկացիա	[min(Գ _{Մ46} ; Գ _{Մ46} ; Գ _{Պ44})...max(Գ _{Մ41} ; Գ _{Մ41} ; Գ _{Պ41})]
Հաճախորդի բնութագրում	[min(Գ _{Վ76} ; Գ _{Վ3Ե6})...max(Գ _{Վ71} ; Գ _{Վ3Ե1})]
Դրամական միջոցների հոսքերի կանխատեսումային հաշվարկի վերլուծություն:	[min(Գ _{ՊՄ35} ; Գ _{ՊՄՄ5})...max(Գ _{ՊՄ31} ; Գ _{ՊՄՄ1})]
Փոխառու-իրավաբանական անձանց գործունեությանը բնորոշ ռիսկերի (որոնց բացահայտումը նվազեցնում է փոխառու-իրավաբանական անձի փորձագիտական բալային գնահատականը) վերլուծություն (մանրամասն նկարագրված է 3.3 ենթագլխում)	[0 ... 10]

որտեղ` $Q_{[x]1} > Q_{[x]2} > Q_{[x]3} > \dots > Q_{[x]n}$

Փոխառու-իրավաբանական անձին վարկավորելու վերաբերյալ որոշում կայացնելու ընթացքում, բանկը կամ վարկային կազմակերպությունը վերլուծում են փոխառու-իրավաբանական անձի հիմնական արտադրանքի իրացման շուկան, վերջինիս պահանջարկը, իրականացվող գնային քաղաքականությունը, տվյալ շուկայում

⁶ Աղյուսակը կազմված է հեղինակի կողմից` մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում:

մրցակցության մակարդակը և այլն: Փոխառու-իրավաբանական անձի հիմնական արտադրանքի շուկայի բնույթից է կախված վաճառքների ծավալը, գների միջին մակարդակը, արտադրանքի իրացումից ստացված հասույթը, շահույթի մակարդակը և այլն: Փոխառու-իրավաբանական անձի բարեհաջող գործունեության համար շատ կարևոր է շուկայի մեծությունը, որը կարող է արտահայտվել ինչպես վաճառված արտադրանքի քանակով, այնպես էլ արտադրանքի գումարային արժեքով [63, էջ 345]: Բանկը փոխառու-իրավաբանական անձին վարկ տրամադրելուց առաջ պետք է վերլուծի, թե կյանքի ցիկլի որ փուլում է գտնվում վերջինիս կողմից արտադրվող ապրանքը կամ ապրանքը, որի արտադրության համար պահանջվում է ստանալիք վարկը: Վերոնշյալից է կախված, թե արդյոք փոխառու-իրավաբանական անձը կկարողանա զարգանալ տվյալ ճյուղում և ունակ կլինի ստացած շահույթը ուղղել բանկի կողմից տրամադրված վարկի մարմանը [19, էջ 50]: Կարևոր է նաև արտադրանքի պահանջարկի վերլուծությունը, վերջինիս վրա ազդող ներքին (նորարարության միտումներին հետևելը, տեխնիկական զինվածության մակարդակը, հաղորդակցությունը և այլն) և արտաքին (իրավական դաշտը, տնտեսական միջավայրը, սպառողների եկամուտները և այլն) գործոնները [64, էջ 274-275], եթե պահանջարկը նվազի, կնվազի պատվերների պորտֆելը, հետևաբար կնվազեն արտադրության ծավալները, կավելանան ծախսերը, փոխառու-իրավաբանական անձը կունենա վնասներ և կարող է սնանկանալ ու չկարողանալ մարել իր պարտավորությունները: Փոխառու-իրավաբանական անձանց փորձագիտական գնահատման գործընթացում կարևոր դեր ունի Պորտերի հինգ ուժերի վերլուծությունը, որն իրենից ներկայացնում է փոխառու-իրավաբանական անձանց պոտենցիալ վտանգների վերլուծություն [65, էջ 176]: Որպեսզի արտադրանքը մրցունակ լինի շուկայում այն պետք է համապատասխանի որոշակի չափանիշներին՝ տեխնիկական, էսթետիկ, նորմատիվային և տնտեսական [19, էջ 50]: Բանկի և փոխառու-իրավաբանական անձի միջև վարկային գործարքի հաջողությունը կախված է նրանից, թե որքանով են փոխառու-իրավաբանական անձի կողմից արտադրվող կամ արտադրվելիք ապրանքը կամ մատուցվող ծառայությունը մրցունակ:

Ներկայացվող ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում փոխառու-իրավաբանական անձի շուկայում զբաղեցրած դիրքը պետք է վերլուծել հետևյալ ցուցանիշների հիման վրա՝

- շուկայում մրցակցության մակարդակի վերլուծություն,
- գնային քաղաքականության վերլուծություն,
- փոխառու-իրավաբանական անձի գործունեության ժամկետ:

«Շուկայում մրցակցության մակարդակի վերլուծության» ցուցանիշը օգնում է պարզաբանել, թե ինչ դիրք է զբաղեցնում փոխառու-իրավաբանական անձն իր հիմնական արտադրանքի շուկայում, արդյոք վերջինս ի վիճակի է ազդել ճյուղում գնագոյացման վրա, արդյոք շուկայական բարդ պայմաններում ի վիճակի է պահպանել իր մասնաբաժինը և այլն: «Շուկայում մրցակցության մակարդակի վերլուծություն» ցուցանիշի համար, ըստ մշակված մեթոդական մոտեցման, փոխառու-իրավաբանական անձին կարող է շնորհվել [0...10] բալ: Ճյուղում մրցակցության միմիմալ մակարդակի դեպքում, երբ փոխառու-իրավաբանական անձի հիմնական արտադրանքի ծավալի բաժինը տվյալ արտադրանքի շուկայում կազմում է երեսուն տոկոսից ավելին և դա կրում է հաստատուն բնույթ՝ անկախ արտաքին գործոնների ազդեցությունից, այսինքն փոխառու-իրավաբանական անձն ունի մրցակցային ակնհայտ առավելություններ, փոխառու-իրավաբանական անձին, ըստ մշակված մեթոդական մոտեցման, կարող է շնորհվել [8...10] բալ: Աննշան մրցակցության պայմաններում, երբ փոխառու-իրավաբանական անձի հիմնական արտադրանքի բաժինը տվյալ արտադրանքի շուկայում կազմում է ողջ շուկայի ծավալի տասից երեսուն տոկոսը՝ [10-30), այսինքն փոխառու-իրավաբանական անձը կարևոր դիրք է զբաղեցնում շուկայում և կարողանում է մանր և միջին մրցակիցների դեմ պայքարել, փոխառու-իրավաբանական անձին մշակված մեթոդական մոտեցման շրջանակներում կարող է շնորհվել [5...7] բալ: Ճյուղում մրցակցության միջին մակարդակի առկայության դեպքում, երբ փոխառու-իրավաբանական անձի հիմնական արտադրանքի գծով մասնաբաժինը տվյալ արտադրանքի շուկայում կազմում է հինգից տասը տոկոս՝ [5-10), այսինքն փոխառու-իրավաբանական անձը միջին չափի շուկայական մասնաբաժին ունի, վերջինիս՝ համաձայն մշակված մեթոդական մոտեցման, կարող է շնորհվել 4 կամ 5 բալ: Այն դեպքում, երբ ճյուղում մրցակցության մակարդակը բարձր է, այսինքն փոխառու-իրավաբանական անձի գործունեության հիմնական արտադրանքի շուկայում վերջինս մինչև հինգ տոկոս մասնաբաժին ունի, կամ տվյալ ճյուղում առկա է մոնոպոլիստ, սակայն դա վերոնշյալ

փոխառու-իրավաբանական անձը չէ, ճյուղում մրցակցության աճի միտումների պահպանման և տնտեսական միջավայրի փոփոխության պայմաններում, գոյություն ունի շահութաբերության նվազման վտանգ, այդ պատճառով փոխառու-իրավաբանական անձին ըստ մշակված մեթոդական մոտեցման կարող է շնորհվել 3 կամ 2 բալ: Այն դեպքում, երբ փոխառու-իրավաբանական անձի մասնաբաժինը իր հիմնական արտադրանքի շուկայում հնարավոր չէ բացահայտել, փոխառու-իրավաբանական անձին ըստ մշակված մեթոդական մոտեցման շնորհվում է զրո բալ (աղյուսակ՝ 3.2.2):

Աղյուսակ 3.2.2. Շուկայում մրցակցության մակարդակի վերլուծություն՝ ըստ մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման:⁷

Թափանիշների նկարագրություն	Բալային գնահատական
Մրցակցությունը մինիմալ է: Փոխառու-իրավաբանական անձի հիմնական արտադրանքի բաժինը տվյալ արտադրանքի շուկայում կազմում է երեսուն տոկոսից ավելին:	Գ _{Մրց1}
Մրցակցությունը աննշան է: Փոխառու-իրավաբանական անձի հիմնական արտադրանքի բաժինը տվյալ արտադրանքի շուկայում կազմում է ողջ շուկայի ծավալի տասից երեսուն տոկոսը:	Գ _{Մրց2}
Մրցակցության միջին մակարդակի առկայություն: Փոխառու-իրավաբանական անձի հիմնական արտադրանքի գծով մասնաբաժինը տվյալ արտադրանքի շուկայում կազմում է հինգից տասը տոկոս:	Գ _{Մրց3}
Ճյուղում մրցակցությունը բարձր է: Փոխառու-իրավաբանական անձի գործունեության հիմնական արտադրանքի շուկայում վերջինս մինչև հինգ տոկոս մասնաբաժին ունի, կամ տվյալ ճյուղում առկա է մոնոպոլիստ, սակայն դա վերոնշյալ փոխառու-իրավաբանական անձը չէ:	Գ _{Մրց4}
Գնահատումը անհնար է իրականացնել: Փոխառու-իրավաբանական անձի մասնաբաժինը իր հիմնական արտադրանքի շուկայում հնարավոր չէ բացահայտել:	Գ _{Մրց5}

որտեղ՝ $Q_{[x]1} > Q_{[x]2} > Q_{[x]3} > \dots > Q_{[x]n}$

Փոխառու-իրավաբանական անձի հիմնական արտադրանքի շուկայի ծավալը և վերջինիս սահմանները որոշվում են վերջինիս գործունեության բնագավառով: Այսինքն, եթե փոխառու-իրավաբանական անձի հիմնական արտադրանքը սպառվում է միայն մեկ մարզի սահմաններում, ապա շուկայում մրցակցության մակարդակի վերլուծություն ցուցանիչը հաշվարկելու նպատակով որոշվող շուկայի ծավալը համապատասխանում է տվյալ մարզի սահմաններում սպառվող արտադրանքի ծավալին: Այն դեպքում, երբ

⁷ Աղյուսակը կազմված է հեղինակի կողմից՝ մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում:

փոխառու-իրավաբանական անձի հիմնական արտադրանքը սպառվում է մի քանի մարզերում, ապա շուկայի ծավալը որոշվում է մարզերի շուկաների ծավալներն իրար գումարելու եղանակով:

Գնային քաղաքականության վերլուծություն:

Փոխառու-իրավաբանական անձի կողմից իրականացվող գնային քաղաքականության վերլուծությունը այն ցուցանիշներից է, որն էականորեն ազդում է վերջինիս ֆինանսական վիճակի վրա: Յուրաքանչյուր փոխառու-իրավաբանական անձ աշխատում է սահմանել և, կախված շուկայում ստեղծված իրավիճակից այնպես փոփոխել ապրանքների և մատուցվող ծառայությունների գները, որպեսզի վերջիններս համապատասխանեն իր հետապնդած կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակներին [66, էջ 214-215]: Այսինքն փոխառու-իրավաբանական անձի արտադրանքի գնի մակարդակը որոշվում է՝ կախված, թե ինչ նպատակներ է հետապնդում վերջինս մոտ ապագայում: Այդ պատճառով բանկը տվյալ ցուցանիշի շնորհիվ կարող է պատկերացում կազմել, թե ուր կբերի փոխառու-իրավաբանական անձի այս կամ այն գնային քաղաքականությունը և վերլուծի՝ արդյոք դա չի ունենա բացասական ազդեցություն բանկի կողմից փոխառու-իրավաբանական անձին տրվելիք կամ տրված վարկի մայր գումարի և տոկոսագումարների բնականոն մարման վրա: Այն դեպքում, երբ փոխառու-իրավաբանական անձի հիմնական արտադրանքի շուկայում նմանատիպ որակի արտադրանքների միջին գները բարձր են վերջինիս կողմից սահմանված գներից կամ առհասարակ շուկայում փոխառու-իրավաբանական անձի կողմից ներկայացվող արտադրանքը չունի փոխարինիչ, ապա, համաձայն մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման, վերջինիս կարող է շնորհվել 4 կամ 5 բալ: Այն դեպքում, երբ փոխառու-իրավաբանական անձի հիմնական արտադրանքի շուկայում նմանատիպ որակի արտադրանքների միջին գները համապատասխանում են վերջինիս սահմանված գներին, ապա փոխառու-իրավաբանական անձին, ըստ մշակված մեթոդական մոտեցման, կարող է շնորհվել 3 բալ: Այն դեպքում, երբ փոխառու-իրավաբանական անձի հիմնական արտադրանքի շուկայում նմանատիպ որակի արտադրանքների միջին գները աննշան ցածր են վերջինիս սահմանված գներից, փոխառու-իրավաբանական անձին կարող է շնորհվել 2 բալ: Գնի աննշան ցածր լինելը այնքան էլ չի կրճատի սպառման նախկին քանակը և հետևաբար հասույթը, սակայն կարող է մարքեթինգային վնաս հասցնել կազմակերպու-

թյանը: Այն դեպքում, երբ փոխառու-իրավաբանական անձի հիմնական արտադրանքի շուկայում նմանատիպ որակի արտադրանքների միջին գները զգալիորեն ցածր են վերջինիս սահմանված գներից, ինչը վկայում է այն մասին, որ փոխառու-իրավաբանական անձը արտադրանքի փոքր ծավալի, ֆինանսական միջոցների ներգրավման հետ կապված խնդիրների և այլնի պատճառով չի կարողանում մրցունակ մնալ շուկայում կամ ընտրել է գերշահույթ ստանալու ռազմավարությունը, ինչի սխալ իրականացումը կարող է անբարենպաստ ելք ունենալ վերջինիս համար, փոխառու-իրավաբանական անձին, ըստ մշակված մեթոդական մոտեցման, կարող է շնորհվել 0 բալ (աղյուսակ՝ 3.2.3):

Աղյուսակ՝ 3.2.3. Գնային քաղաքականության վերլուծություն՝ ըստ մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման:⁸

Չափանիշների նկարագրություն	Բալային գնահատական
Փոխառու-իրավաբանական անձի հիմնական արտադրանքի շուկայում նմանատիպ որակի արտադրանքների միջին գները բարձր են վերջինիս կողմից սահմանված գներից կամ առհասարակ շուկայում փոխառու-իրավաբանական անձի կողմից ներկայացվող արտադրանքը չունի փոխարինիչ:	Գ _{գթ1}
Փոխառու-իրավաբանական անձի հիմնական արտադրանքի շուկայում նմանատիպ որակի արտադրանքների միջին գները համապատասխանում են վերջինիս սահմանված գներին:	Գ _{գթ2}
Փոխառու-իրավաբանական անձի հիմնական արտադրանքի շուկայում նմանատիպ որակի արտադրանքների միջին գները աննշան ցածր են վերջինիս սահմանված գներից:	Գ _{գթ3}
Փոխառու-իրավաբանական անձի հիմնական արտադրանքի շուկայում նմանատիպ որակի արտադրանքների միջին գները զգալիորեն ցածր են վերջինիս սահմանված գներից:	Գ _{գթ4}

որտեղ՝ $Q_{[x]1} > Q_{[x]2} > Q_{[x]3} > \dots > Q_{[x]n}$

Փոխառու-իրավաբանական անձի գործունեության ժամկետ ցուցանիշը ինֆորմատիվ է այն առումով, որ թույլ է տալիս պատկերացում կազմել փոխառու-իրավաբանական անձի մրցակցությանը դիմակայելու ներուժի վերաբերյալ, փոխառու-իրավաբանական անձի ճյուղի ներսում խոշոր մասնակիցների գործունեությանը բնորոշ նրբություններին տեղեկացվածության աստիճանի վերաբերյալ, բացի այդ երկար ժամանակ միևնույն արտադրանքի շուկայում գործելու փաստը որոշ չափով երաշխիք է, որ փո-

⁸ Աղյուսակը կազմված է հեղինակի կողմից՝ մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում:

խառու-իրավաբանական անձը արդեն սովոր է հաղթահարել այնպիսի խոչընդոտներ, ինչպիսիք են տնտեսական անբարենպաստ պայմանները, տնտեսական ճգնաժամը, և կարող է արագ ադապտացվել արտաքին գործունեության փոփոխությանը:

Եթե փոխառու-իրավաբանական անձի գործունեության ժամկետը հինգ տարուց ավելին է, վերջինիս, մշակված մեթոդական մոտեցման համաձայն, կարող է տրվել 4 կամ 5 բալ, երեքից հինգ տարի գործունեության պարագայում՝ 3 բալ, երկուսից երեք տարի գործող փոխառու-իրավաբանական անձանց՝ կարող է տրվել 2 բալ, ընդամենը մեկից երկու տարի գործունեություն ծավալելու պարագայում՝ 1 բալ, և եթե փոխառու-իրավաբանական անձը գործում էր իր հիմնական արտադրանքի շուկայում մեկ տարուց պակաս, ապա տվյալ ցուցանիշի գծով, ըստ մշակված մեթոդական մոտեցման, վերջինիս բալեր պետք չէ շնորհել (աղյուսակ՝ 3.2.4): Փոխառու-իրավաբանական անձի գործունեության ժամկետը հաշվարկվում է վերջինիս գրանցման պահից ի վեր:

Աղյուսակ 3.2.4. Գործունեության ժամկետի վերլուծություն՝ ըստ մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման:⁹

Չափանիշների նկարագրություն	Բալային գնահատական
Փոխառու-իրավաբանական անձի գործունեության ժամկետը հինգ տարուց ավելին է:	Գ _{գժ1}
Փոխառու-իրավաբանական անձի գործունեության ժամկետը երեքից հինգ տարի է:	Գ _{գժ2}
Փոխառու-իրավաբանական անձի գործունեության ժամկետը երկուսից երեք տարի է:	Գ _{գժ3}
Փոխառու-իրավաբանական անձի գործունեության ժամկետը մեկից երկու տարի է:	Գ _{գժ4}
Փոխառու-իրավաբանական անձի գործունեության ժամկետի մեկ տարին դեռ չի լրացել:	Գ _{գժ5}

$$\text{որտեղ՝ } Q_{[x]1} > Q_{[x]2} > Q_{[x]3} > \dots > Q_{[x]n}$$

Ներկայացվող ներքին վարկանշման մոդելի շրջանակներում փորձագիտական գնահատման գործունեության դիվերսիֆիկացիա բլոկում վերլուծվում են հետևյալ ցուցանիշները՝ «մատակարարներից կախվածություն», «սպառողներից կախվածություն», «պահանջարկի առաձգականություն»:

Մատակարարներից կախվածություն:

⁹ Աղյուսակը կազմված է հեղինակի կողմից՝ մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում:

Եթե փոխառու-իրավաբանական անձի մատակարարներից կախվածությունը բացակայում է, այսինքն որպես հիմնական մատակարարներ (ըստ մշակված մեթոդական մոտեցման մատակարարները նրանք են, ում բաժին է ընկնում փոխառու-իրավաբանական անձի կողմից ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների ամբողջական ծախսերի հիսուն տոկոսից ավելին) հանդես են գալիս կառույցներ, որոնք ենթակա են կամ գտնվում են փոխառու-իրավաբանական անձի հսկողության ներքո, ապա վերջինիս շնորհվում են առավելագույն բալեր՝ [8...10]: Երբ կախվածությունը ցածր է, այսինքն փոխառու-իրավաբանական անձն ունի միմյանց հետ չկապակցված մատակարարների և կապալառուների անսահմանափակ շրջանակ (տասից ավելի), ապա վերջինիս կարող է շնորհվել 6 կամ 7 բալ: Երբ կախվածությունը աննշան է, այսինքն փոխառու-իրավաբանական անձն ունի միմյանց հետ չկապակցված մատակարարների և կապալառուների սահմանափակ շրջանակ (տասից պակաս), որոնցից յուրաքանչյուրին բաժին է ընկնում ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների ամբողջական ծախսերի քսան տոկոսից ոչ ավելին, ապա տվյալ ցուցանիշի գծով, համաձայն մշակված մեթոդական մոտեցման, փոխառու-իրավաբանական անձը կարող է վաստակել 4 կամ 5 բալ: Այն դեպքում, երբ կախվածությունը մատակարարներից էական է, այսինքն փոխառու-իրավաբանական անձն ունի միմյանց հետ չկապակցված մատակարարների և կապալառուների սահմանափակ շրջանակ (տասից պակաս), սակայն վերջիններից գոնե մեկին բաժին է ընկնում ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների ամբողջական ծախսերի քսան տոկոսից ավելին, փոխառու-իրավաբանական անձին կարող է շնորհվել 2 կամ 3 բալ: Եթե կախվածությունը մատակարարներից մեծ է, այսինքն փոխառու-իրավաբանական անձն ունի միմյանց հետ չկապակցված մատակարարների և առաքիչների սահմանափակ շրջանակ (տասից պակաս), սակայն վերջիններից գոնե մեկին բաժին է ընկնում ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների ամբողջական ծախսերի հիսուն տոկոսից ավելին, ապա փոխառու-իրավաբանական անձին կարող է շնորհվել 1 բալ: Այն դեպքում, երբ փոխառու-իրավաբանական անձի մատակարարներից կախվածությունը հնարավոր չէ գնահատել, այսինքն օբյեկտիվ պատճառներով՝ մատակարարների վերաբերյալ ունեցած տեղեկատվության որակի և քանակի չափանիշներից ելնելով, չի կարելի գնահատել վերջիններից փոխառու-իրավաբանական անձի կախվածության մակարդակը, վերջինիս կարող է շնորհվել -5 բալ (աղյուսակ՝ 3.2.5):

Աղյուսակ՝ 3.2.5. Մատակարարներից կախվածության վերլուծությունը՝ ըստ մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման:¹⁰

Չափանիշների նկարագրություն	Բալային գնահատական
Փոխառու-իրավաբանական անձի մատակարարներից կախվածությունը բացակայում է:	Գ _{Մ41}
Փոխառու-իրավաբանական անձի մատակարարներից կախվածությունը ցածր է:	Գ _{Մ42}
Փոխառու-իրավաբանական անձի մատակարարներից կախվածությունը աննշան է:	Գ _{Մ43}
Փոխառու-իրավաբանական անձի մատակարարներից կախվածությունը էական է:	Գ _{Մ44}
Փոխառու-իրավաբանական անձի մատակարարներից կախվածությունը բարձր է:	Գ _{Մ45}
Գնահատումը հնարավոր չէ իրականացնել:	Գ _{Մ46}

որտեղ՝ $Q_{[x]1} > Q_{[x]2} > Q_{[x]3} > \dots > Q_{[x]n}$

Հիմնական արտադրանքի սպառողներից կախվածություն:

Երբ սպառողներից կախվածությունը ցածր է, այսինքն փոխառու-իրավաբանական անձն ունի միմյանց հետ չկապակցված սպառողների անսահմանափակ շրջանակ (տասը կամ տասից ավելի), որոնցից յուրաքանչյուրին բաժին է ընկնում փոխառու-իրավաբանական անձի հասույթի ոչ ավելի, քան տասը տոկոսը, ապա վերջինիս, ըստ մշակված մեթոդական մոտեցման, կարող է շնորհվել 9 կամ 10 բալ: Այն դեպքում, երբ սպառողներից կախվածությունը աննշան է, այսինքն փոխառու-իրավաբանական անձն ունի միմյանց հետ չկապակցված սպառողների անսահմանափակ շրջանակ (տասը կամ տասից ավելին), որոնցից յուրաքանչյուրին բաժին է ընկնում փոխառու-իրավաբանական անձի հասույթի ոչ ավելի, քան քսան տոկոսը, փոխառու-իրավաբանական անձին կարող է շնորհվել 7 կամ 8 բալ: Երբ սպառողներից կախվածությունը միջին մակարդակի է, այսինքն փոխառու-իրավաբանական անձն ունի միմյանց հետ չկապակցված սպառողների սահմանափակ շրջանակ (տասից պակաս), որոնցից յուրաքանչյուրին բաժին է ընկնում փոխառու-իրավաբանական անձի հասույթի ոչ ավելի, քան քսան տոկոսը, ապա, ըստ ներկայացվող ներքին վարկանշման մոդելի, վերջինիս կարող է շնորհվել 5 կամ 6 բալ: Այն դեպքում, երբ կախվածությունը էական է, և փոխառու-իրավաբանական անձն ունի հիմնական արտադրանքի միմյանց հետ չկապակցված սպա-

¹⁰ Աղյուսակը կազմված է հեղինակի կողմից՝ մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում:

ռողների սահմանափակ շրջանակ (տասից պակաս), որոնցից յուրաքանչյուրին բաժին է ընկնում փոխառու-իրավաբանական անձի հասույթի ոչ ավելի, քան հիսուն տոկոսը, ապա վերջինիս կարող է շնորհվել 3 կամ 4 բալ: Եթե կախվածությունը բարձր է, այսինքն ընդ փոխառու-իրավաբանական անձն ունի գոնե մեկ հիմնական արտադրանքի սպառող, ուն բաժին է ընկնում վերջինիս հասույթի հիսուն տոկոսից ավելին, ապա փոխառու-իրավաբանական անձին կարող է շնորհվել 1 կամ 2 բալ: Այն դեպքում, երբ փոխառու-իրավաբանական անձի սպառողներից կախվածությունը հնարավոր չէ գնահատել, այսինքն օբյեկտիվ պատճառներով՝ սպառողների վերաբերյալ ունեցած տեղեկատվության որակի և քանակի չափանիշներից ելնելով, չի կարելի գնահատել վերջիններից փոխառու-իրավաբանական անձի կախվածության մակարդակը, համաձայն մշակված մեթոդական մոտեցման, վերջինիս բալեր չեն շնորհվում (աղյուսակ՝ 3.2.6.):

Աղյուսակ՝ 3.2.6. Հիմնական արտադրանքի սպառողներից կախվածության վերլուծություն՝ ըստ մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման:¹¹

Չափանիշների նկարագրություն	Բալային գնահատական
Սպառողներից կախվածությունը ցածր է:	Գ _{U41}
Սպառողներից կախվածությունը աննշան է:	Գ _{U42}
Սպառողներից կախվածությունը միջին մակարդակի է:	Գ _{U43}
Սպառողներից կախվածությունը էական է:	Գ _{U44}
Սպառողներից կախվածությունը բարձր է:	Գ _{U45}
Գնահատում հնարավոր չէ իրականացնել:	Գ _{U46}

որտեղ՝ $Գ_{[x]1} > Գ_{[x]2} > Գ_{[x]3} > \dots > Գ_{[x]n}$

Պահանջարկի առաձգականության մակարդակի վերլուծություն.

Պահանջարկի առաձգականությունը կախված է բազմաթիվ գործոններից՝ գներ, սպառողների եկամուտներ և այլն: Եթե փոխառու-իրավաբանական անձի հիմնական արտադրանքի պահանջարկը ոչ առաձգական է՝ կախված ապրանքի տեսակից, յուրահատկությունից, չափից դուրս ցածր գնից և այլն, ապա վերջինիս, ըստ մշակված մեթոդական մոտեցման, կարող է շնորհվել 9 կամ 10 բալ: Այն դեպքում, երբ փոխառու-իրավաբանական անձի հիմնական արտադրանքի պահանջարկը միավոր առաձգական է, այսինքն գնի կրկնակի փոփոխությունը բերում է հասույթի նույն ուղղությամբ կրկնակի փոփոխության, ապա վերջինիս կարող է շնորհվել 6 կամ 7 բալ: Այն դեպքում, երբ փոխառու-իրավաբանական անձի հիմնական արտադրանքի պահանջարկը թույլ առաձգական է և էական փոփոխությունների չի ենթարկում հասույթը, ապա վերջինիս, համաձայն

¹¹ Աղյուսակը կազմված է հեղինակի կողմից՝ մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում:

մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման, կարող է շնորհվել 3 կամ 4 բալ (աղյուսակ՝ 3.2.7):

Աղյուսակ 3.2.7. Պահանջարկի առաձգականության մակարդակի վերլուծություն՝ ըստ մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման:¹²

Չափանիշների նկարագրություն	Բալային գնահատական
Փոխառու-իրավաբանական անձի հիմնական արտադրանքի պահանջարկը ոչ առաձգական է:	Գ _{ու1}
Փոխառու-իրավաբանական անձի հիմնական արտադրանքի պահանջարկը միավոր առաձգական է:	Գ _{ու2}
Փոխառու-իրավաբանական անձի հիմնական արտադրանքի պահանջարկը թույլ առաձգական է:	Գ _{ու3}
Փոխառու-իրավաբանական անձի հիմնական արտադրանքի պահանջարկի առաձգականությունը հնարավոր չէ գնահատել:	Գ _{ու4}

որտեղ՝ $Q_{[x]1} > Q_{[x]2} > Q_{[x]3} > \dots > Q_{[x]n}$

Այն դեպքում, երբ փոխառու-իրավաբանական անձի պահանջարկի առաձգականությունը հնարավոր չէ գնահատել առկա տեղեկատվության հիման վրա, ապա, ըստ մեթոդական մոտեցման, բալեր չեն շնորհվում:

Ներկայացվող վարկանշման մոդելի շրջանակներում ֆինանսական վիճակի փորձագիտական գնահատման փոխառու-իրավաբանական անձի բնութագիր բլոկում վերլուծվում են հետևյալ ցուցանիշները.

- վարկային պատմություն,
- բանկերում կրեդիտային հաշիվների շրջանառություն:

Վարկային պատմության վերլուծություն: Վարկային պատմության վերլուծության իրականացման տեղեկատվական աղբյուրներ:

Վարկային պատմության վերլուծությունը առկա է փոխառու-իրավաբանական անձանց վարկանշման յուրաքանչյուր մոդելի մեջ, քանզի իրենից ներկայացնում է փոխառու-իրավաբանական անձի վարկունակության գնահատման անբաժան մաս և տրամադրում է փոխառու-իրավաբանական անձի ռիսկայնությունը բնութագրող տեղեկություններ: Վարկային պատմության վերլուծությունը իրենից ենթադրում է փոխառու-իրավաբանական անձի նախկինում և տվյալ պահի դրությամբ վարկային պարտա-

¹² Աղյուսակը կազմված է հեղինակի կողմից՝ մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում:

վորությունների առկայության, մեծության և ժամկետանց լինելու կամ չլինելու վերաբերյալ ողջ տեղեկատվության տիրապետում և վերլուծություն [67]: Վարկային պատմության վերլուծության գործընթացը արագացնելու և արժանահավատ տեղեկատվություն ստանալու նպատակով անհրաժեշտ են վարկային տեղեկատվական վերլուծական կենտրոններ՝ վարկային ռեգիստր, վարկային բյուրո և այլն: Նախ, վերջիններս դյուրացնում են բանկերի և վարկային կազմակերպությունների գործը, փոխառու-իրավաբանական անձի վարկային պատմության վերաբերյալ արագ և ամենակարևորը արժանահավատ տեղեկատվություն տրամադրելով, երկրորդը՝ վերջիններիս առկայությունը ունի նաև դիսցիպլինար հատկություն, քանի որ եթե 10-15 տարի առաջ փոխառու-իրավաբանական անձիք կարող էին որևէ բանկում ունենալով «վատ» վարկային պատմություն դիմել վարկային ռեսուրսներ ստանալու նպատակով մեկ այլ բանկ կամ վարկային կազմակերպություն՝ համոզված լինելով, որ վերջիններս տեղյակ չեն դրամասին, ապա վարկային տեղեկատվական կենտրոնների առկայության դեպքում դա հնարավոր չէ: Վարկառուները այժմ քաջատեղյակ են, որ կամայական բանկում կամ վարկային կազմակերպությունում իրենց ունեցած վարկային պատմությունը հասանելի է բոլոր ֆինանսական կազմակերպություններին, այդ պատճառով նրանք աշխատում են բացասական վարկային պատմություն չունենալու գծով, քանի որ դրական վարկային պատմություն ունենալու պարագայում կարող են հավակնել ավելի ցածր տոկոսադրույքներով և ավելի մեծ սահմանաչափերի վարկային ռեսուրսների ներգրավմանը: Վարկային պատմության տեղեկատվական կենտրոններում առկա է տեղեկատվություն փոխառու-իրավաբանական անձի գործող կամ նախկինում ունեցած վարկերի մեծության, տրամադրված վարկերի տոկոսադրույքների, վարկերի ապահովվածության, վարկերի մայր գումարների կամ տոկոսագումարների գծով ժամկետանց օրերի քանակի և վարկի մնացորդի մեծության վերաբերյալ ողջ տեղեկատվությունը [67]: Վարկային պատմության տեղեկատվական և վերլուծական կենտրոններ առկա են բոլոր երկրներում, և, մեծամասամբ, վերջիններս գտնվում են տվյալ երկրների ԿԲ-երի կառավարման, կարգավորման կամ վերահսկողության ներքո: 2005 թվականին ՀՀ ԿԲ-ի կողմից ստեղծվեց վարկային ռեգիստրը [68], որը տեղեկատվական համակարգ է, որտեղ պահպանվում է և կուտակվում վարկառուների և նրանց տրամադրված վարկերի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը: Վարկային ռեգիստրում առկա է փոխառու-իրա-

վաբանական անձի գործունեության վերջին հինգ տարիների վերաբերյալ վարկային պատմությունը: Տեղեկատվությունը վարկային ռեգիստրին տրամադրում են բանկերը և վարկային կազմակերպությունները, վարկառուի հետ վարկային պայմանագրի կնքման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրերի ընթացքում: Դա գործում է անընդհատության սկզբունքով CBANET միջբանկային համակարգչային ցանցի միջոցով: Վարկային ռեգիստրը վարկառուին իր սեփական վարկային պատմությունը տրամադրում է տարին մեկ անգամ՝ դիմումը ստանալու օրվանից երկու ամսվա ընթացքում անվճար հիմունքներով: Բանկերը և վարկային կազմակերպությունները ՀՀ ԿԲ-ի վարկային ռեգիստրից տեղեկատվություն են ստանում իրենց բոլոր վարկառուների՝ համակարգում ունեցած բոլոր պարտավորությունների վերաբերյալ յուրաքանչյուր ամիս մինչև վեցերորդ աշխատանքային օրը:


2004 թ-ին ՀՀ-ում հիմնադրվել է առաջին մասնավոր վարկային բյուրոն՝ ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփոռթինգ ՓԲԸ-ն (այսուհետ՝ ԱՔՌԱ) [67], այն տեղեկատվական բանկ է, որը հավաքագրում է ֆինանսական և առևտրային կազմակերպություններից տեղեկատվություն, մշակում, պարբերաբար թարմացնում և տրամադրում է վերջիններիս անհրաժեշտության դեպքում, կամայական պահին: ԱՔՌԱ-ի շնորհիվ ֆինանսական և առևտրային կազմակերպությունները հնարավորություն են ստանում տեղեկացված լինել իրենց հաճախորդների մասին, կարճ ժամանակում ճանաչել ցածր ռիսկայնություն ունեցող հաճախորդներին և վայրկյանների ընթացքում ստանալ պոտենցիալ հաճախորդների վարկային պատմությունն արտացոլող զեկույց, ինչը հարմարավետ պայմաններ է ստեղծում ֆինանսական և առևտրային կազմակերպությունների գործունեության համար: ԱՔՌԱ-ն ունի ծառայությունների լայն տեսականի, որոնք տրամադրվում են կոնկրետ գնացուցակի համաձայն, վերջինս շատ ավելի էժան է, համեմատած նախկինում ֆինանսական և առևտրային կազմակերպությունների կողմից փոխառու-իրավաբանական անձանց վարկային պատմության վերլուծության վրա ծախսվող գումարների հետ: Նման տնտեսումը ձեռնտու է ինչպես վարկառուներին, քանի որ ծախսերի նվազեցումը բերում է տոկոսադրույքի որոշ չափով նվազմանը, այնպես էլ վարկատուներին, որոնք ի վիճակի են լինում մրցունակ տոկոսադրույքներ սահմանել: Բացի վարկային պատմությունների տրամադրումից ԱՔՌԱ-ն զբաղվում է նաև վարկային սքրինինգով: ԱՔՌԱ վարկային բյուրոյի կողմից որպես հիմնական ծառայություն օգտագործվում են

նկարագրողական և կանխատեսող սքորերը: “ԱՔՌԱ” ընթացիկ (նկարագրող) սքորը բնութագրում է վարկառուի վիճակը, հիմնվելով այդ պահին առկա վարկային պատմության, պարտային ծանրաբեռնվածության չափի, վարկային պատմության տևողության վրա (տիպային օրինակ՝ գծապատկեր 3.2.1):

Եթե փոխառու-իրավաբանական անձն առնվազն երեք տարի ունի դրական վարկային պատմություն ըստ պարտավորությունների, որոնց ծավալը համադրելի է փոխառու-իրավաբանական անձի բանկի կամ վարկային կազմակերպության առջև ունեցած ընթացիկ պարտավորությունների ծավալի հետ, վերջինիս, ըստ մշակված մեթոդական մոտեցման, կարող է շնորհվել (8...10] բալ: Եթե փոխառու-իրավաբանական անձն ունի կարճաժամկետ՝ մինչև երեք տարի ժամանակահատվածի ընթացքում, դրական վարկային պատմություն ըստ պարտավորությունների, որոնց ծավալը համադրելի է փոխառու-իրավաբանական անձի բանկի կամ վարկային կազմակերպության առջև ունեցած ընթացիկ պարտավորությունների ծավալի հետ, ապա վերջինիս կարող է շնորհվել 7 կամ 8 բալ:

Գծապատկեր 3.2.1. ԱՔՌԱ ընթացիկ սքոր [67]


1. Վճարումների (մարումների) պատմություն - 83%
2. Վարկային բեռի մեծություն - 8%
3. Վարկային պատմության երկարություն - 5%
4. Օգտագործված փոխառությունների տեսակներ - 3%
5. Նոր վարկի փնտրում - 1%



ԱՔՌԱ կանխատեսող սքորը - բնութագրում է վարկառուի կանխատեսող վարկարժանությունն առաջիկա ժամանակաշրջանի համար՝ հաշվի առնելով նրա վարկային պատմության մոդելը, վարքագիծը և նմանատիպ վարկառուների նկարագիրը (3.2.2):

Գծապատկեր 3.2.2. ԱՔՌԱ կանխատեսող սքոր [67]

1. Վճարումների (մարումների) պատմություն - 43%
2. Վարկային բեռի մեծություն - 15%
3. Վարկային պատմության երկարություն - 25%
4. Օգտագործված փոխառությունների տեսակներ - 16%
5. Նոր վարկի փնտրում - 1%



Այն դեպքում, երբ փոխառու-իրավաբանական անձն ունի դրական վարկային պատմություն բանկում և տեղեկատվական վերլուծական կենտրոնում (վարկային ռեզիստր, ԱՔՌԱ, Նորք) ըստ պարտավորությունների, որոնց ծավալը համադրելի չէ փոխառու-իրավաբանական անձի բանկի կամ վարկային կազմակերպության առջև ունեցած ընթացիկ պարտավորությունների ծավալի հետ, ապա վերջինիս կարող է շնորհվել 5 կամ 6 բալ: Եթե փոխառու-իրավաբանական անձն ունի դրական վարկային պատմություն (ըստ պարտավորությունների, որոնց ծավալը համադրելի է փոխառու-իրավաբանական անձի բանկի կամ վարկային կազմակերպության նկատմամբ ունեցած ընթացիկ պարտավորությունների ծավալի հետ) այլ բանկերում և վարկային կազմակերպություններում՝ համաձայն տեղեկատվական վերլուծական կենտրոնների տեղեկատվության, վերջինիս կարող է շնորհվել 3 կամ 4 բալ: Այն դեպքում, երբ փոխառու-իրավաբանական անձն ունի դրական վարկային պատմություն (ըստ պարտավորությունների, որոնց ծավալը համադրելի չէ փոխառու-իրավաբանական անձի բանկի կամ վարկային կազմակերպության առջև ունեցած ընթացիկ պարտավորությունների ծավալի հետ) այլ բանկերում և վարկային կազմակերպություններում՝ համաձայն տեղեկատվական վերլուծական կենտրոնների տեղեկատվության, վերջինիս կարող է շնորհվել 1 բալ: Այն պարագայում, երբ փոխառու-իրավաբանական անձը չունի դրական վարկային պատմություն ոչ բանկում, ոչ տեղեկատվական վերլուծական կենտրոններում կամ բա-

ցակայուն է տեղեկատվություն, որը բավարար կլիներ վերջինիս վարկային պատմությունը գնահատելու համար, փոխառու-իրավաբանական անձին, համաձայն ներկայացվող մեթոդական մոտեցման շնորհիվում է զրո բալ (աղյուսակ՝ 3.2.8):

Աղյուսակ 3.2.8. Վարկային պատմության վերլուծություն՝ ըստ մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման:¹³

Չափանիշների նկարագրություն	Բալային գնահատական
Փոխառու-իրավաբանական անձն ունի առնվազն երեք տարվա դրական վարկային պատմություն:	Գ _{վո1}
Փոխառու-իրավաբանական անձն մինչև երեք տարի ժամանակահատվածի ընթացքում դրական վարկային պատմություն:	Գ _{վո2}
Փոխառու-իրավաբանական անձն ունի դրական վարկային պատմություն բանկում և տեղեկատվական վերլուծական կենտրոնում, ըստ պարտավորությունների, որոնց ծավալը համադրելի չէ փոխառու-իրավաբանական անձի բանկի կամ վարկային կազմակերպության առջև ունեցած ընթացիկ պարտավորությունների ծավալի հետ:	Գ _{վո3}
Փոխառու-իրավաբանական անձն ունի դրական վարկային պատմություն (ըստ պարտավորությունների, որոնց ծավալը համադրելի է փոխառու-իրավաբանական անձի բանկի կամ վարկային կազմակերպության առջև ունեցած ընթացիկ պարտավորությունների ծավալի հետ) այլ բանկերում և վարկային կազմակերպություններում:	Գ _{վո4}
Փոխառու-իրավաբանական անձն ունի դրական վարկային պատմություն (ըստ պարտավորությունների, որոնց ծավալը համադրելի չէ փոխառու-իրավաբանական անձի բանկի կամ վարկային կազմակերպության առջև ունեցած ընթացիկ պարտավորությունների ծավալի հետ) այլ բանկերում և վարկային կազմակերպություններում:	Գ _{վո5}
Փոխառու-իրավաբանական անձը չունի դրական վարկային պատմություն ոչ բանկում, ոչ տեղեկատվական վերլուծական կենտրոններում կամ բացակայում է տեղեկատվություն, որը բավարար կլիներ վերջինիս վարկային պատմությունը գնահատելու համար:	Գ _{վո6}

որտեղ՝ $Q_{[x]1} > Q_{[x]2} > Q_{[x]3} > \dots > Q_{[x]n}$

Այն դեպքում, երբ փոխառու-իրավաբանական անձի վարկային պատմությունը տեղեկատվական վերլուծական կենտրոնում ընդհանուր առմամբ բացասական է, սակայն վերջինս տվյալ բանկում ունի երկարատև դրական համագործակցության պատմություն, բանկը կամ վարկային կազմակերպությունը ի զորու է ցուցաբերել հաճախորդի հանդեպ անհատական մոտեցում և, ըստ իր հայեցողության, (վերլուծելով նախկինում ունեցած պարտավորությունների համադրելիությունը ընթացիկ պարտավորություններին, հնարավորինս բացահայտելով տեղեկատվական վերլուծական կենտրո-

¹³ Աղյուսակը կազմված է հեղինակի կողմից՝ մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում:

նուն առկա բացասական վարկային պատմության պատճառները և այլն), բալեր շնորհել փոխառու-իրավաբանական անձին տվյալ ցուցանիշի համար:

Բացատրություն. Վարկային պատմությունը համարվում է դրական, երբ փոխառու-իրավաբանական անձն իր՝ երբևէ ունեցած բոլոր պարտավորությունների գծով, չի ունեցել ժամկետանց օրեր, այսինքն բոլոր պարտավորությունների տոկոսագումարները և մայր գումարը մարվել են սահմանված ժամանակացույցի համաձայն: Համադրելի են համարվում այն պարտավորությունները, որոնք կազմում են փոխառու-իրավաբանական անձի բանկի կամ վարկային կազմակերպության առջև ունեցած ընթացիկ պարտավորությունների ծավալի հիսուն և ավելի տոկոս: Ներկայացվող մեթոդական մոտեցման շրջանակներում պարտավորություն ասելիս ի նկատի է առնված փոխառու-իրավաբանական անձի բանկից ներգրավված վարկերն ու փոխառությունները:

Բանկերում կրեդիտային հաշիվների շրջանառություն:

Այն դեպքում, երբ փոխառու-իրավաբանական անձն իր բոլոր հաշվարկները իրականացնում բանկում բացված իր հաշվեհամարների միջոցով, վերջինիս կարող է շնորհվել [8...10] բալ: Այն դեպքում, երբ փոխառու-իրավաբանական անձի բանկային հաշիվների զուտ վարկային շրջանառության մասնաբաժինը վերջինիս բոլոր բանկային հաշիվների զուտ վարկային շրջանառության մեջ կազմում է ոչ պակաս, քան յոթանասունհինգ տոկոս, փոխառու-իրավաբանական անձին, համաձայն մշակված մեթոդական մոտեցման, կարող է շնորհվել [6...8] բալ: Այն դեպքում, երբ փոխառու-իրավաբանական անձի բանկային հաշիվների զուտ վարկային շրջանառության մասնաբաժինը վերջինիս բոլոր բանկային հաշիվների զուտ վարկային շրջանառության մեջ կազմում է ոչ պակաս, քան հիսուն տոկոսը, փոխառու-իրավաբանական անձին կարող է շնորհվել 4 կամ 5 բալ: Եթե այլ վարկային կազմակերպություններում փոխառու-իրավաբանական անձն իրականացնում է հաշվարկների հիսուն տոկոսից ավելին, ընդ որում վերջինիս բանկային հաշիվների զուտ վարկային շրջանառության մասնաբաժինը բոլոր բանկային հաշիվների զուտ վարկային շրջանառության մեջ ավելի քիչ չէ, բանկի առջև ունեցած պարտավորությունների մասնաբաժինը բոլոր վարկային կազմակերպությունների առջև ունեցած պարտավորությունների ընդհանուր մեծության համեմատ, ապա փոխառու-իրավաբանական անձին կարող է շնորհվել 2 կամ 3 բալ: Եթե այլ վարկային կազմակերպություններում փոխառու-իրավաբանական անձն իրականացնում է հաշվարկ-

ների հիսուն տոկոսից ավելին, ընդ որում վերջինիս բանկային հաշիվների զուտ վարկային շրջանառության մասնաբաժինը բոլոր բանկային հաշիվների զուտ վարկային շրջանառության մեջ ավելի քիչ չէ, բանկի կամ վարկային կազմակերպության առջև ունեցած պարտավորությունների մասնաբաժինը բոլոր վարկային կազմակերպությունների առջև ունեցած պարտավորությունների ընդհանուր մեծության համեմատ, ապա փոխառու-իրավաբանական անձին կարող է շնորհվել 1 բալ: Այն դեպքում, երբ փոխառու-իրավաբանական անձն իր բոլոր հաշվարկները իրականացնում է այլ վարկային կազմակերպություններում բացված հաշվեհամարների միջոցով, վերջինիս, ըստ մշակված մեթոդական մոտեցման, բալեր չեն շնորհվում (աղյուսակ՝ 3.2.9):

Աղյուսակ՝ 3.2.9. Բանկերում կրեդիտային հաշիվների շրջանառության վերլուծություն՝ ըստ մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման:¹⁴

Չափանիշների նկարագրություն	Բալային գնահատական
Փոխառու-իրավաբանական անձն իր բոլոր հաշվարկները իրականացնում է բանկում բացված իր հաշվեհամարների միջոցով:	Գ ₄ ՀԵ1
Փոխառու-իրավաբանական անձի բանկային հաշիվների զուտ վարկային շրջանառության մասնաբաժինը վերջինիս բոլոր բանկային հաշիվների զուտ վարկային շրջանառության մեջ կազմում է ոչ պակաս, քան յոթանասունհինգ տոկոսը:	Գ ₄ ՀԵ2
Փոխառու-իրավաբանական անձի բանկային հաշիվների զուտ վարկային շրջանառության մասնաբաժինը վերջինիս բոլոր բանկային հաշիվների զուտ վարկային շրջանառության մեջ կազմում է ոչ պակաս, քան հիսուն տոկոսը:	Գ ₄ ՀԵ3
Այլ վարկային կազմակերպություններում փոխառու-իրավաբանական անձն իրականացնում է հաշվարկների հիսուն տոկոսից ավելին, ընդ որում վերջինիս բանկային հաշիվների զուտ վարկային շրջանառության մասնաբաժինը բոլոր բանկային հաշիվների զուտ վարկային շրջանառության մեջ ավելի քիչ չէ, քան փոխառու-իրավաբանական անձի՝ բանկի առջև ունեցած պարտավորությունների մասնաբաժինը բոլոր վարկային կազմակերպությունների առջև ունեցած պարտավորությունների ընդհանուր մեծության համեմատ:	Գ ₄ ՀԵ4
Այլ վարկային կազմակերպություններում փոխառու-իրավաբանական անձն իրականացնում է հաշվարկների հիսուն տոկոսից ավելին, ընդ որում վերջինիս բանկային հաշիվների զուտ վարկային շրջանառության մասնաբաժինը բոլոր բանկային հաշիվների զուտ վարկային շրջանառության մեջ ավելի քիչ չէ, քան փոխառու-իրավաբանական անձի՝ բանկի առջև ունեցած պարտավորությունների մասնաբաժինը բոլոր վարկային կազմակերպությունների առջև ունեցած պարտավորությունների ընդհանուր մեծության համեմատ:	Գ ₄ ՀԵ5

¹⁴ Աղյուսակը կազմված է հեղինակի կողմից՝ մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում:

<p>Աղյուսակ՝ 3.2.9. շարունակություն</p> <p>Փոխառու-իրավաբանական անձն իր բոլոր հաշվարկները իրականացնում է այլ վարկային կազմակերպություններում բացված հաշիվների միջոցով:</p>	<p>Գ₄₇₀₆</p>
---	-------------------------

որտեղ՝ $Q_{[x]1} > Q_{[x]2} > Q_{[x]3} > \dots > Q_{[x]n}$

Բացառություններ. Այն դեպքում, երբ փոխառու-իրավաբանական անձը բանկում կամ վարկային կազմակերպությունում վերջին հինգ տարվա ընթացքում ունեցել է դրական վարկային պատմություն, վերջինս կարող է անտեսել փոխառու-իրավաբանական անձի կողմից բոլոր հաշվարկները այլ վարկային կազմակերպություններում բացված հաշիվների միջոցով իրականացնելու փաստը, և, պահանջելով և վերլուծելով փոխառու-իրավաբանական անձի այլ վարկային կազմակերպություններում հաշվի շարժի քաղվածքները, վերջինիս հանդեպ անհատական մոտեցում ցուցաբերել և շնորհել որոշակի բալեր:

Բանկային հաշիվների միջին ամսական վարկային շրջանառություն ասելիս հասկանում ենք միջին ամսական վարկային շրջանառություն՝ փոխառու-իրավաբանական անձի հաշվարկային և ընթացիկ հաշիվների գծով (դրամական և փոխարժեքային):

Հաշիվների զուտ շրջանառության վերլուծությունը թույլ է տալիս համադրել փոխառու-իրավաբանական անձի ֆինանսական հաշվետվություններում նշված տեղեկատվությունը հաշվի իրական մուտքերի հետ: Բացի այդ զուտ շրջանառության ցուցանիշը թույլ է տալիս փոխառու-իրավաբանական անձի գործունեության ավելի խորը ֆինանսական վերլուծություն կատարել, եթե ընդունել վերջինս, որպես փոխառու-իրավաբանական անձի համախառն եկամուտ:

Ներկայացվող ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում փորձագիտական գնահատման հաջորդ բլոկը դրամական միջոցների հոսքերի կանխատեսումային հաշվարկի և պարտավորությունների մարման աղբյուրների վերլուծությունն է:

Դրամական միջոցների հոսքերի կանխատեսումային հաշվարկի վերլուծություն:

Դրամական հոսքերի կառուցվածքի, ծավալի և կայունության վերլուծությունը կարևոր դեր է խաղում փոխառու-իրավաբանական անձի վարկունակության գնահատման գործընթացում, քանի որ թույլ է տալիս բանկին կամ վարկային կազմակեր-

պությանը պատկերացում կազմել, պոտենցիալ փոխառու-իրավաբանական անձի պարտավորությունները ժամանակին մարելու ունակության մասին: Դրամական միջոցների հոսքերի մեծության գնահատման ժամանակ համադրվում են փոխառու-իրավաբանական անձի դրամական միջոցների ներհոսքը և արտահոսքը վարկավորման ողջ ժամանակահատվածի համար: Ստացված տեղեկատվության հիման վրա հնարավոր է լինում կատարել վարկավորման ողջ ժամանակահատվածի համար դրամական հոսքերի կանխատեսում [26, էջ 108]: Բացի այդ, բանկի համապատասխան մասնագետին հետաքրքրում է փոխառու-իրավաբանական անձի կողմից ներգրավվող վարկային ռեսուրսների և օպերացիոն գործունեությունից զուտ դրամական հոսքերի հարաբերությունը, քանի որ վարկային ռեսուրսները ընդհանուր առմամբ պետք է վերադարձվեն այդ միջոցների հաշվին: Եթե վարկավորման ողջ ժամանակահատվածի ընթացքում փոխառու-իրավաբանական անձը չի ունեցել դրամական միջոցների անբավարարություն, այսինքն բանկի համապատասխան մասնագետի կողմից դրամական հոսքերի շարժի կանխատեսումային հաշվարկի համաձայն, փոխառու-իրավաբանական անձը բանկի առջև իր ունեցած պարտավորությունների մարման ամսաթվի դրությամբ կունենա դրամական միջոցների դրական մնացորդ և գործառույթների անցկացման ողջ ժամանակահատվածի ընթացքում բացակայում են այնպիսի հաշվետու ամսաթվեր, որոնց դրությամբ միջոցների մնացորդը լինի բացասական, ինչպես նաև այն դեպքում, եթե փոխառու-իրավաբանական անձը բացի ֆակտորինգային գործարքից (եթե փոխառու-իրավաբանական անձը բանկում ունի այլ վարկային գործարքներ, որոնց գծով շնորհվել է ներքին վարկանիշ, ապա վերջինս ունի առաջնահերթություն ֆակտորինգի գծով շնորհված վարկանիշի նկատմամբ) ոչ մի այլ գործարք չի իրականացնում, որը կպահանջեր ներքին վարկանիշի շնորհում, և վերջինիս հանդեպ կիրառվում են ավելի մեղմ պահանջներ, փոխառու-իրավաբանական անձին, ըստ մշակված մեթոդական մոտեցման կարող է շնորհվել [13...15] բալ: Եթե վարկավորման ողջ ժամանակահատվածի ընթացքում, առկա են աննշան քանակի հաշվետու ամսաթվեր, որոնց դրությամբ գրանցվի դրամական միջոցների անբավարարություն, այսինքն բանկի համապատասխան մասնագետի կողմից դրամական հոսքերի շարժի կանխատեսումային հաշվարկի համաձայն, փոխառու-իրավաբանական անձը բանկի առջև իր ունեցած պարտավորությունների մարման ամսաթվի դրությամբ ունի

դրամական միջոցների դրական մնացորդ և գործառույթների անցկացման ողջ ժամանակահատվածի ընթացքում առկա են երկու ամսից ոչ ավել հաշվետու ամսաթվեր, որոնց դրությամբ միջոցների մնացորդը բացասական է, այդ դեպքում փոխառու-իրավաբանական անձին կարող է շնորհվել [8...10] բալ: Այն դեպքում, երբ վարկավորման ողջ ժամանակահատվածի ընթացքում, առկա են զգալի քանակի հաշվետու ամսաթվեր, որոնց դրությամբ գրանցվել է դրամական միջոցների անբավարարություն, այսինքն բանկի համապատասխան մասնագետի կողմից դրամական հոսքերի շարժի կանխատեսումային հաշվարկի համաձայն, փոխառու-իրավաբանական անձը բանկի առջև իր ունեցած պարտավորությունների մարման ամսաթվի դրությամբ ունի դրամական միջոցների դրական մնացորդ և գործառույթների անցկացման ողջ ժամանակահատվածի ընթացքում առկա են երկու ամսից ավել հաշվետու ամսաթվեր, որոնց դրությամբ միջոցների մնացորդը բացասական է, փոխառու-իրավաբանական անձին, համաձայն մշակված մեթոդական մոտեցման, կարող է շնորհվել [5...7] բալ: Այն դեպքում, երբ կանխատեսումը վստահելի չէ, այսինքն արված կանխատեսման մեջ առկա են տվյալներ, որոնք չեն համապատասխանում փոխառու-իրավաբանական անձի վերջին երկու տարիների ֆինանսական հաշվետվության հետահայաց տվյալներին (ռետրոսպեկտիվ) կամ բացակայում են կանխատեսման հավաստիության վերաբերյալ փաստաթղթեր կամ կանխատեսումը արված է վարկավորման ժամանակահատվածի միայն որոշ մասի համար, փոխառու-իրավաբանական անձին շնորհվում է ընդամենը 2 բալ: Այն դեպքում, երբ բանկի համապատասխան մասնագետի կողմից դրամական հոսքերի շարժի կանխատեսումային հաշվարկի համաձայն, փոխառու-իրավաբանական անձը բանկի առջև իր ունեցած պարտավորությունների մարման ամսաթվի դրությամբ ունի դրամական միջոցների բացասական մնացորդ կամ բանկը չունի հնարավորություն փոխառու-իրավաբանական անձի դրամական հոսքերի շարժի հիմնավորված կանխատեսում կազմել կամ փոխառու-իրավաբանական անձը բացի ֆակտորինգային գործարքից ոչ մի այլ գործարք չի իրականացնում, որը կպահանջեր ներքին վարկանիշի շնորհում, փոխառու-իրավաբանական անձին, ըստ ներկայացվող մեթոդական մոտեցման, կարող է շնորհվել 0 բալ (աղյուսակ՝ 3.2.10):

Աղյուսակ 3.2.10. Դրամական միջոցների հոսքերի կանխատեսումային հաշվարկի վերլուծությունը՝ ըստ մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման:¹⁵

Չափանիշների նկարագրություն	Բալային գնահատական
Վարկավորման ողջ ժամանակահատվածի ընթացքում փոխառու-իրավաբանական անձը չի ունեցել դրամական միջոցների անբավարարություն:	Գ _{ՊՄ31}
Վարկավորման ողջ ժամանակահատվածի ընթացքում, առկա են աննշան քանակի հաշվետու ամսաթվեր, որոնց դրությամբ գրանցվի դրամական միջոցների անբավարարություն:	Գ _{ՊՄ32}
Վարկավորման ողջ ժամանակահատվածի ընթացքում, առկա են զգալի քանակի հաշվետու ամսաթվեր, որոնց դրությամբ գրանցվել է դրամական միջոցների անբավարարություն:	Գ _{ՊՄ33}
Կանխատեսումը վստահելի չէ:	Գ _{ՊՄ34}
Փոխառու-իրավաբանական անձը բանկի առջև իր ունեցած պարտավորությունների մարման ամսաթվի դրությամբ ունի դրամական միջոցների բացասական մնացորդ:	Գ _{ՊՄ35}

որտեղ՝ $G_{[x]1} > G_{[x]2} > G_{[x]3} > \dots > G_{[x]n}$

Պարտավորությունների մարման աղբյուրներ.

Փոխառու-իրավաբանական անձի կողմից լրացուցիչ կապիտալի ներգրավման պոտենցիալ անհրաժեշտությունը գնահատվում է հաշվի առնելով վերջինիս պլանները, օրինակ՝ բիզնեսի զարգացում, միաձուլում, մեծամասշտաբ ներդրումային ծրագրեր, ավելի թույլ մասնաճյուղերին աջակցության ցուցաբերում և այլն: Կապիտալի պոտենցիալ աղբյուրներն են՝ հասարակ բաժնետոմսեր, չբաշխված շահույթ, կապիտալի պահուստներ, գործող բիզնեսի շնորհիվ կապիտալի հավելում: Պարտավորությունների մարման աղբյուրների վերլուծությունը ներկայացվող ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում կատարվում է հետևյալ կերպ:

Այն դեպքում, երբ փոխառու-իրավաբանական անձն ունի վարկային ռեսուրսների բավարար մարման աղբյուրներ, այսինքն փոխառու-իրավաբանական անձի ունեցած պարտավորություններն ամբողջովին մարվում են (սպասարկվում են) հիմնական գործունեությունից ստացված դրամական միջոցների հաշվին և փոխառու-իրավաբանական անձի և բանկի կամ վարկային կազմակերպության միջև գործարքների իրականացման ողջ ժամանակահատվածի ընթացքում լրացուցիչ ֆինանսավորման ներգրավման

¹⁵ Աղյուսակը կազմված է հեղինակի կողմից՝ մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում:

անհրաժեշտություն չի ենթադրվում [85], փոխառու-իրավաբանական անձին ըստ ներկայացվող վարկանշման մեթոդական մոտեցման կարող է շնորհվել [12...15] բալ: Այն դեպքում, երբ առկա է վարկային ռեսուրսների մասնակի վերաֆինանսավորման անհրաժեշտություն, բայց պարտային բեռի աճի միտումները բացակայում են, փոխառու-իրավաբանական անձին կարող է շնորհվել 10 կամ 11 բալ: Այն դեպքում, երբ առկա է մասնակի վերաֆինանսավորման անհրաժեշտություն և առկա են պարտային բեռի աճի միտումներ, փոխառու-իրավաբանական անձին կարող է շնորհվել [5...9) բալ: Այն դեպքում, երբ բացահայտվում է փոխառու-իրավաբանական անձի կողմից բանկից կամ վարկային կազմակերպությունից ներգրավված միջոցների օգտագործման փաստ՝ ավելի վաղ այլ բանկից կամ վարկային կազմակերպությունից ներգրավված միջոցների կամ այլ վարկային կազմակերպությունների պարտավորությունների մարման նպատակով, վերջինիս կարող է շնորհվել [2...4] բալ: Այն դեպքում, երբ առկա է փոխառու-իրավաբանական անձի կողմից պարտավորությունների մարման աղբյուրների բացակայություն, այսինքն վերջինս իր պարտավորությունների մեծ մասը (50 տոկոսից ոչ պակաս) սպասարկում է (մարում է) միմիայն լրացուցիչ միջոցների ներգրավման հաշվին, վերջինիս կարող է շնորհվել մինչև 0 բալ (աղյուսակ՝3.2.11.):

Աղյուսակ 3.2.11. Պարտավորությունների մարման աղբյուրների վերլուծություն՝ ըստ մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման:¹⁶

Չափանիշների նկարագրություն	Բալային գնահատական
Փոխառու-իրավաբանական անձն ունի մարման բավարար աղբյուրներ:	Գ _{ՊՄԱ1}
Փոխառու-իրավաբանական անձի մոտ առկա է վարկային ռեսուրսների մասնակի վերաֆինանսավորման անհրաժեշտություն: Բայց պարտքային բեռի աճի միտումները բացակայում են:	Գ _{ՊՄԱ2}
Առկա է մասնակի վերաֆինանսավորման անհրաժեշտություն և պարտքային բեռի աճի միտում:	Գ _{ՊՄԱ3}
Բացահայտվել է բանկից կամ վարկային կազմակերպությունից փոխառու-իրավաբանական անձի ներգրավված միջոցների օգտագործման փաստ՝ ավելի վաղ այլ բանկից ներգրավված միջոցների կամ այլ վարկային կազմակերպությունների պարտավորությունների մարման նպատակով օգտագործման փաստ:	Գ _{ՊՄԱ4}
Առկա է փոխառու-իրավաբանական անձի կողմից պարտավորությունների մարման աղբյուրների բացակայություն:	Գ _{ՊՄԱ5}

¹⁶ Աղյուսակը կազմված է հեղինակի կողմից՝ մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում:

որտեղ՝ $Q_{[x]1} > Q_{[x]2} > Q_{[x]3} > \dots > Q_{[x]n}$

Բացատրություն. «Պարտային բեռի էական աճ» ասելիս ներկայացվող ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում հասկանում ենք փոխառու-իրավաբանական անձի կողմից ներգրավված վարկերի և փոխառությունների ընդհանուր գումարի հավելած ավելի քան հիսուն տոկոսով՝ ըստ փոխառու-իրավաբանական անձի հետ գործարքի ժամանակահատվածի ընթացքում կամայական եռամսյակի: Պարտային բեռի հավելածը հիսուն և հիսունից պակաս տոկոսով համարվում է ոչ էական: Վարկային բեռի հավելածը բանկից ֆինանսավորման ներգրավման արդյունքում հաշվարկման մեջ հաշվի չի առնվում:

Յուրաքանչյուր բանկ կամ վարկային կազմակերպություն՝ ելնելով իր արտաքին միջավայրի, գործունեության առանձնահատկություններից, ռիսկ-ախորժակից և այլն, փորձագիտական գնահատման միջոցով է սահմանում նկարագրված գործակիցների գծով շնորհվող բալերը և բալերի միջակայքերը:

Ատենախոսության հավելված 4-ում, ներկայացված են փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկերի գնահատման նպատակով մշակված ներքին վարկանշման մոտեցման շրջանակներում հեղինակի, վերջինիս գիտական ղեկավարի և ևս երեք փորձագետների կողմից գործակիցների փորձագիտական գնահատման բալային մեթոդի հիման վրա առաջարկվող (ընտրված) բալերը և բալային միջակայքերի (չափերը):

3.3 Փոխառու-իրավաբանական անձանց գործունեության որակական գնահատմանը ենթակա ռիսկերի գնահատում և կանխատեսում:

Բանկերի համար վարկային ռիսկի հիմնական բաղադրիչ հանդիսացող փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկի արդյունավետ կառավարումը վերջիններիս առանցքային խնդիրներից մեկն է, որը պահանջում է ֆորմալ մոտեցում: Ջարգացող երկրներում տնտեսության անկայունությունը և շուկայի սահմանափակությունը ավելացնում են պոտենցիալ ռիսկերը [91, էջ 75-76]: Այդ է պատճառը, որ վերջիններս փորձում են վերլուծել փոխառու-իրավաբանական անձի գործունեության հետ կապված ռիսկերի բոլոր աղբյուրները: Եթե նախկինում փոխառու-

իրավաբանական անձանց անվճարունակությունը գնահատելու նպատակով բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից կիրառվող վարկանշման մոդելները սահմանափակվում էին ֆինանսական վիճակի քանակական և փորձագիտական վերլուծություններով, ապա այժմ փոխառու-իրավաբանական անձին շնորհված ներքին վարկանիշը արտացոլում է նաև վերջինիս գործունեությանը բնորոշ, քանակական գնահատմանը չենթարկվող, փորձագետի սուբյեկտիվ կարծիքի հիման վրա գնահատվող բոլոր ռիսկերը, որոնք բխում են, ինչպես գործունեության բնագավառի կամ գործունեության բնույթի յուրահատկություններից (ներքին գործոններ՝ ռազմավարությունը, վարկային քաղաքականությունը, վարկային պորտֆելի կազմը և այլն) [70, էջ 47], այնպես էլ արտաքին գործոններից, որոնց վրա փոխառու-իրավաբանական անձը ի գորու չէ ազդել (արտաքին գործոններ՝ երկրի դրամավարկային քաղաքականություն [78, էջ 106], ներքին քաղաքականություն [71, էջ 49]) (այսուհետ՝ որակական գնահատմանը ենթարկվող ռիսկեր) [99, էջ 149-150]: Արտաքին և ներքին գործոնները կարող են լինել տարբեր բնույթի, ունենան տարբեր գոյացման աղբյուրներ, տարբեր մասշտաբների հետևանքներ և այլն: Բանկի և վարկային կազմակերպության համապատասխան մասնագետի խնդիրն է բացահայտել յուրաքանչյուր կոնկրետ փոխառու-իրավաբանական անձի գործունեությանը բնորոշ որակական գնահատմանը ենթակա ռիսկերը, պարզել, թե տվյալ ռիսկերը ժամանակավոր, թե հաստատուն բնույթ են կրում, դասակարգել վերջիններս ըստ գոյացման աղբյուրների, վերլուծել և հաշվարկել վերջիններիս ազդեցության աստիճանը փոխառու-իրավաբանական անձի բնականոն գործունեության վրա՝ ինչպես ֆինանսական, այնպես էլ մարքեթինգային առումով, առանձնացնել այն ռիսկերը, որոնց հնարավոր է ապահովագրել [73, էջ 188-190] և մշակել մնացած ռիսկերի ազդեցության նվազմանն ուղղված միջաջառումներ: Արտաքին ռիսկերը բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից դյուրին են նույնականացվում, քանի որ դրանք համատարած են և տարբերվում են միայն ազդեցության աստիճանով, սակայն ինչ վերաբերվում է ներքին գործոններին, ապա վերջիններիս մեջ կան յուրահատուկ բնույթի ռիսկեր, որոնց առկայությունը դժվար է պարզել: Այդ դեպքում բանկը կամ վարկային կազմակերպությունը դիմում է այնպիսի միջոցառումների իրականացմանը, ինչպիսիք են կառավարիչների հետ անհատական զրույցներ, ՋԼՄ-ների տեղեկատվության վերլուծություններ և այլն:

Ստորև ներկայացված է փոխառու-իրավաբանական անձանց գործունեությանը բնորոշ ռիսկերի նկարագրության և վերջիններիս համապատասխանեցված բալային գնահատման աղյուսակ (աղյուսակ՝ 3.3.1):

Աղյուսակ՝ 3.3.1. Փոխառու-իրավաբանական անձի գործունեությանը բնորոշ որակական գնահատմանը ենթակա ռիսկերի վերլուծություն՝ ըստ մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման:¹⁷

Ռիսկերի չափանիշների նկարագրություն	Բալային գնահատման միջակայք
Փոխառու-իրավաբանական անձի գործունեությանը բնորոշ են սակագնային կամ մաքսային կարգավորման հետ կապված ռիսկեր:	[1-2]
Փոխառու-իրավաբանական անձի գործունեության իրականացումը ենթադրում է ամենամյա քվոտաների, լիցենզիաների և այլնի ստացում:	[1-2]
Փոխառու-իրավաբանական անձի հասույթի հիսուն տոկոսից ավելին բաժին է ընկնում միջխմբային գործարքներին:	[1-4]
Փոխառու-իրավաբանական անձի գործունեությանը բնորոշ են էական ֆիսկալ ռիսկեր [79, էջ 526]:	[1-4]
Փոխառու-իրավաբանական անձի գործունեությունը կրում է սեզոնային բնույթ:	[1-3]
Փոխառու-իրավաբանական անձի կողմից բանկին կամ վարկային կազմակերպությանը տրվող վարկի ապահովվածության գումարը կազմում է բանկի կամ վարկային կազմակերպության առջև ունեցած պարտավորությունների 30% -ից պակաս գումար:	[1-2]
Խզվում է փոխառու-իրավաբանական անձի առանցքային գործարքներից մեկը:	[2-4]
Փոխառու-իրավաբանական անձի հիմնական միջոցները ունեն էական մաշվածություն:	[2-4]
Փոխառու-իրավաբանական անձի կանոնադրական կապիտալի էական մասը պատկանում է կազմակերպություններին, որոնք գրանցված են օֆշորային տարածքներում, կամ սեփականատերերի կազմը թափանցիկ չէ:	[3-5]
Առաջիկա տարվա ընթացքում սպասվում է փոխառու-իրավաբանական անձի կողմից թողարկվող հիմնական արտադրանքի կամ մատուցվող ծառայությունների գների անկում:	[1-4]
Խպասվում է փոխառու-իրավաբանական անձի սեփականատերերի կազմի փոփոխություն (բաժնետոմսերի փաթեթի կամ փայաբաժինների վաճառք ավելի քան կապիտալի 20%-ի չափով),	[3-5]
Փոխառու-իրավաբանական անձը խախտել է բանկի հետ կնքած վարկային պայմանագրի շրջանակներում առկա լրացուցիչ պայմանների իրազորման ժամկետները:	[4-6]
Առկա է փոխառու-իրավաբանական անձի բաժնետերերի կամ սեփականատերերի միջև կոնֆլիկտի վերաբերյալ տեղեկատվություն:	[4-6]

¹⁷ Աղյուսակը կազմված է հեղինակի կողմից՝ մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում:

Աղյուսակ՝ 3.3.1. շարունակություն	
Առկա է մոտ ապագայում փոխառու-իրավաբանական անձի ոչ ընկերական կլանման վտանգի վերաբերյալ տեղեկատվություն:	10
Փոխառու-իրավաբանական անձին ներկայացված է դատական հայց վերջինիս մաքուր ակտիվների 25 %-ից ավել գումարի չափով:	[5-7]
Առկա են բանկի կամ վարկային կազմակերպության կողմից փոխառու-իրավաբանական անձին տրամադրված վարկի ոչ նպատակային օգտագործման վերաբերյալ փաստաթղթերով հաստատված փաստեր:	[5-7]
Բանկին հայտնի են փոխառու-իրավաբանական անձի կողմից բանկից կամ այլ վարկային կազմակերպություններից ներգրավված վարկերի և փոխառությունների, երաշխիքների, երաշխավորությունների կամ բացված ակրեդիտիվների գծով վերակազմավորման բազմակի դեպքեր՝ կապված մայր գումարի, տոկոսների, կոմիսիսոն վճարների կամ այլ վճարների հետ:	[7-9]
Փոխառու-իրավաբանական անձի գործունեության իմաստը խմբի գործունեությանը փաստաթղթային աջակցություն ցուցաբերելն է:	[6-8]
Փոխառու-իրավաբանական անձին ներկայացված են մաքուր ակտիվների 25%-ից ավել կազմող գումարի չափով հարկային պահանջներ:	[5-7]
Փոխառու-իրավաբանական անձն իր գործունեության հետ կապված ունի չբավարարված պահանջներ իր անմիջական ներդրողների կամ սպառողների կողմից:	[5-7]

Հեղինակի, գիտական ղեկավարի և ևս երեք փորձագետների կողմից փորձագիտական գնահատման բալային մեթոդի հիման վրա առաջարկվում են բալերի տվյալ միջակայքերը, սակայն յուրաքանչյուր բանկ՝ ելնելով իր արտաքին միջավայրի, գործունեության առանձնահատկություններից և այլն, փորձագիտական գնահատման միջոցով ինքնուրույն է սահմանում նկարագրված ռիսկերի գծով շնորհվող բալերի միջակայքերը:

Հիմնվելով Աղյուսակ 3.3.1.–ի վրա՝ մանրամասն անդրադառնանք յուրաքանչյուր ռիսկի գնահատման յուրահատկություններին և բացահայտման աղբյուրներին:

Փոխառու-իրավաբանական անձի գործունեությանը (որպես վաճառող կամ սպառող) բնորոշ սակագնային կամ մաքսային փոփոխությունները, իրենցից ենթադրում են մաքսային օրենսգրքում մաքսային կարգավորման վերաբերյալ փոփոխությունները: Տվյալ արտաքին գործոնի վրա փոխառու-իրավաբանական անձը ի գորու չէ ազդել, սակայն նման փոփոխությունների մասին տեղեկատվությունը առկա է նախօրոք, հետևաբար բանկը կամ վարկային կազմակերպությունը կարող է մոտավոր կանխատեսում կատարել, թե ինչ ազդեցություն է ունենալու վերջինս փոխառու-իրավաբանական անձի ֆինանսական վիճակի վրա: Արտաքին գործոնների ռիսկ է նաև փոխառու-իրավա-

բանական անձի գործունեության իրականացման համար ամենամյա քվոտաների, լիցենզիաների և այլն ստացումը, ինչը կարող է բազմաթիվ խոչընդոտների պատճառով հետաձգվել կամ մերժվել. այդ պատճառով բանկը կամ վարկային կազմակերպությունը պետք է մանրազնիմ վերլուծի նման ելքերի հավանականությունը և դրան հաջորդող վնասների չափը համապատասխանեցնի տվյալ ռիսկի գծով տրվող բալերի քանակին: Փոխառու-իրավաբանական անձի գործունեության հետ կապված ռիսկերը կարող են բխել նաև վերջինիս՝ փոխառու-իրավաբանական անձանց որևէ խմբի անդամ լինելուց, օրինակ, եթե փոխառու-իրավաբանական անձը դուստր ընկերություն է, ապա բանկը կամ վարկային կազմակերպությունը պետք է վերլուծի գլխավոր ընկերությունը այն-քանով, որքանով դուստր ընկերությունը կապված է վերջինիս հետ, այսինքն բացահայտի ռիսկերի բոլոր այն գործոնները (ընդունվող որոշումներ, ռազմավարության փոփոխություն և այլն), որոնց վրա դուստր ընկերությունը, իր կարգավիճակից ելնելով, չի կարող ազդել և գնահատել տվյալ գործոնների ազդեցությունը դուստր ընկերության վրա: Նույն մտածելակերպն է գործում, երբ փոխառու-իրավաբանական անձը փոխառու-իրավաբանական անձանց խմբի կազմի մեջ է մտնում: Նման պարագայում փոխառու-իրավաբանական անձի գործունեությունը այս կամ այն չափով կրում է այն բոլոր ռիսկերը, որոնք առկա են խմբի գործունեության մեջ: Այդ է պատճառը, որ այն դեպքում երբ փոխառու-իրավաբանական անձի հասույթի հիսուն տոկոսից ավելին բաժին է ընկնում միջխմբային գործարքներին և վտանգ կա, որ խմբում խնդիրների առաջացման պարագայում փոխառու-իրավաբանական անձը ի զորու չի լինի դիմակայել ֆինանսական դժվարություններին՝ տվյալ ռիսկի գծով փոխառու-իրավաբանական անձին կարող է շնորհվել [1-4] բալ՝ կախված խմբի գործունեության բնութագրիչներից:

Կարևոր է բացահայտել նաև փոխառու-իրավաբանական անձի գործունեությանը բնորոշ ֆիսկալ ռիսկերը, որոնք գնահատվում են փորձագիտական եղանակով՝ հարկման օպտիմալացման սխեմաների հիման վրա [74]: Ֆիսկալ ռիսկեր ասելիս, հասկանում ենք փոխառու-իրավաբանական անձի մոտ, վերահսկող մարմինների կողմից, գործող հարկային օրենսդրության խախտումների կամ վերջիններիս չհետևելու փաստերի բացահայտման և արձանագրման հետ կապված ռիսկեր: Նման ռիսկերի չափը որոշվում է բացահայտված խախտումների գծով հնարավոր հետևանքների գնահատման եղանակով: Կախված այն հանգամանքից, թե ինչ չափի վնասներ

(տուգանքներ և այլն) կհասցնեն վերոնշյալ ռիսկերը՝ փոխառու-իրավաբանական անձին
ներկայացվող մեթոդական մոտեցման շրջանակներում տվյալ ռիսկի գծով կարող է
շնորհվել [1-4] բալ: Եթե օրենսդրական խախտումների բացահայտելու դեպքում
փոխառու-իրավաբանական անձի համապատասխան մարմինները կարող են
ենթարկվել քրեական պատասխանատվության, ռիսկի գործոնի համար տրվող բալերի
քանակը կարող է գնահատվել բանկի կամ վարկային կազմակերպության հայեցողու-
թյամբ (աճման ուղղությամբ). մասնավոր դեպքերում՝ նմանատիպ տեղեկատվության
առկայության դեպքում, բանկը կամ վարկային կազմակերպությունը հնարավոր է
ընդհանրապես դադարեցնի փոխառու-իրավաբանական անձի վարկանշման
գործընթացը: Հաջորդ ռիսկը կապված է փոխառու-իրավաբանական անձի գործունեու-
թյան սեզոնայնության հետ, ինչը բնորոշ է հատկապես գյուղատնտեսական [75, էջ 179]
և շինարարական առևտրային կազմակերպություններին, նման դեպքում բանկի կամ
վարկային կազմակերպության համապատասխան մասնագետի կողմից կարևոր է
բացահայտել տարվա կտրվածքով սեզոնի տևողությունը և վերջինիս համապատասխա-
նությունը փոխառու-իրավաբանական անձի և վերջիններիս առջև ունեցած պարտավո-
րությունների մարման ժամանակահատվածին: Առանձնակի վերլուծության է արժանի
նաև բանկի կամ վարկային կազմակերպության կողմից տրամադրած կամ տրա-
մադրվելիք վարկի դիմաց փոխառու-իրավաբանական անձի կողմից տրվող
ապահովվածությունը, որն իրենից ներկայացնում է բանկի կամ վարկային կազմա-
կերպության վարկային ռիսկի նվազեցման մեթոդ: Բանկը կամ վարկային կազմակեր-
պությունը պետք է կարողանա մշակել ապահովվածության այնպիսի տարբերակներ,
որոնք կնվազեցնեն ռիսկը և ի վիճակի կլինեն հատուցել վերջիններիս տրամադրված
վարկային ռեսուրսը ապահովվածության իրացման հաշվին: Որպես ապահով-
վածություն կարող են ծառայել խոշոր բանկերի կամ կազմակերպությունների
երաշխիքներ, բանկերի կամ կազմակերպությունների բաժնետոմսեր, բնակելի
տարածքներ, ինչպես նաև թանկարժեք մետաղներ և այլն, որոնք պատկանում են
փոխառու-իրավաբանական անձին կամ վերջինիս հետ փոխակապակցված երրորդ
անձանց (վերջիններիս համաձայնությունը փաստող փաստաթղթերի առկայության
դեպքում): Նյութական գրավի դեպքում բանկը կամ վարկային կազմակերպությունը
մեծամասամբ պահանջում է վերջիններս ապահովագրել վստահելի ապահովագրական

ընկերություններից որևէ մեկում: Ի տարբերություն վերը քննարկված անվճարունակության ռիսկերի նվազեցման մեթոդների՝ պահուստավորում և սահմանաչափերի կիրառում, որոնց վերլուծությունը պահանջում է մասնագիտացված գիտելիքներ ֆինանսական և վարկային բնագավառներում, վարկի ապահովվածության արժեքի որոշումը (ինչպես նաև ապահովագրությունը և հեջավորումը) բավականին ծավալուն խնդիր է, որը պահանջում է խորը վերլուծություն այնպիսի մասնագիտական բնագավառներում, ինչպիսիք են ակտիվների ապահովագրություն, շարժական և անշարժ գույքի գնահատում և այլն [19, 27]: Հնարավոր են դեպքեր, երբ հատկապես փոքր և միջին բանկերում, բանկի համապատասխան մասնագետների կողմից փոխառու-իրավաբանական անձի կողմից տրամադրված վարկային ռեսուրսի ապահովվածության արժեքի մակերեսորեն գնահատումը փոխհատուցվի ապահովվածության արժեքի նվազեցման մեծ տոկոսով (լիկվիդացիոն գին–հավելյալ տոկոս): Սակայն նմանատիպ մոտեցումը չի համապատասխանում անվճարունակության ռիսկի ժամանակակից կոնցեպտներին. վարկի ապահովվածության վերլուծությունը թույլ է տալիս արդյունավետ կազմակերպել վարկի տրամադրման գործընթացը. վարկի ապահովվածության որակի և բանկի համար վարկային ռիսկ հանդիսացող կոնտրագենտ կազմակերպության անվճարունակության ռիսկի միջև գոյություն ունի հակադարձ համեմատական կապ: Նման կապ գոյություն ունի նաև շնորհված վարկանիշերի և անվճարունակության ռիսկի միջև, ըստ այդմ, այն դեպքում, երբ փոխառու-իրավաբանական անձն ունի բարձր վարկանիշ, սակայն ապահովվածության որակը բավարար չէ և չի համապատասխանում բանկի կողմից տրամադրվելիք վարկային ռեսուրսին, ապա բանկը որոշում կայացնելիս նախապատվությունը, համաձայն ներկայացվող ներքին վարկանշման մեթոդական մոտեցման, պետք է տա վարկանիշի գործոնին: Այսպիսով, որքան վարկանիշը ցածր լինի, այնքան ապահովվածության որակը և մեծությունը ավելի բարձր պետք է լինեն և հակառակը, բարձր վարկանիշ ունեցող փոխառու-իրավաբանական անձանց վարկային ռեսուրսների ապահովվածությունը ավելի մեղմ պայմաններով պետք է գնահատվի բանկի կամ վարկային կազմակերպության համապատասխան մասնագետի կողմից (գործում է բլանկային սահմանաչափերի դեպքում օգտագործվող տրամաբանությունը): Վարկի ապահովվածությունը պետք է հավասար լինի այն դրամական գումարին, որը բանկի կամ վարկային

կազմակերպության կարծիքով, ամենայն հավանականությամբ, հնարավոր կլինի ստանալ վերջինիս իրացումից (այն դեպքում, երբ փոխառու-իրավաբանական անձը չկարողանա մասամբ կամ ամբողջությամբ կատարել իր պարտավորությունները՝ բանկի կամ վարկային կազմակերպության հետ կնքված պայմանագրի շրջանակներում)՝ ներառյալ ապահովվածության առգրավման և իրացման ծախսերը: Վարկի ապահովվածության վերլուծությունը խորհուրդ է տրվում իրականացնել հետևյալ հիմնական ուղղություններով [31, էջ 198].

- իրացվելիության վերլուծություն (ապահովվածության՝ դրամական միջոցների վերածվելու արագությունը), այսինքն, ըստ իրացվելիության՝ ապահովվածության տարբեր ձևերի տեսակարար կշիռների վերլուծություն,
- վարկային ռեսուրսի ապահովվածության երկարատև պահպանման հատկությունը,
- վարկային ռեսուրսի ապահովվածության շուկայական գնի կայունությունը,
- վարկային ռեսուրսի ապահովվածության պահպանման և իրացման ծախսերի գնահատումը,
- ապահովվածության բավարարության քանակական վերլուծություն:

Վերլուծության արդյունքում բացահայտվեցին հետևյալ հարցերը՝ կարող է արդյոք փոխառու-իրավաբանական անձի կողմից տրամադրվող վարկային ռեսուրսի ապահովվածությունը ծածկել վարկային ռեսուրսի մայր գումարը, տոկոսագումարները, բացասական ելքի դեպքում պայմանագրով նախատեսված տույժերը, ինչպես նաև ինչքանով դյուրին և ծախսատար կլինի ապահովվածության պահպանումն ու իրացումը բանկի կամ վարկային կազմակերպության կողմից: Փոխառու-իրավաբանական անձի ֆինանսական կայունությունը կախված է ինչպես վերջինիս բնականոն գործունեությունից, այնպես էլ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող կազմակերպությունների բնականոն գործունեությունից, լինում են դեպքեր, երբ բազմաթիվ գործոնների պատճառով առանցքային գործարքներից մեկը, որին բաժին էր հասնում փոխառու-իրավաբանական անձի ընդհանուր հասույթի զգալի մասը կարող է խզվել, ինչի հետևանքով վերջինիս մոտ կարող են ծագել անվճարունակության ռիսկեր, այդ է պատճառը, որ կարևոր է վերլուծել փոխառու-իրավաբանական անձի պայմանագրային

հարաբերությունների մեջ գտնվող հիմնական կազմակերպությունների գործարար համբավը, վերջիններիս համագործակցության հուսալիությունը: Ռիսկի աղբյուր է նաև փոխառու-իրավաբանական անձի հիմնական միջոցների մաշվածության աստիճանը: Այս հարցը արդիական է ՀՀ-ում, քանի որ գոյություն ունեն առևտրային կազմակերպություններ, հատկապես սննդի արդյունաբերության ոլորտում, որոնք գնել էին նախկին ԽՍՀՄ գործարանները և մինչ այժմ մասնակիորեն օգտագործում են այնժամանակյա արտադրական միջոցները: Բանկի կամ վարկային կազմակերպության կողմից վերլուծվում են նաև սեփականատերերի կազմի հետ կապված ռիսկերը, վերջինս կարող է թափանցիկ չլինել, այսինքն սեփականատերերի կազմի մեջ կարող են առկա լինել մասնակիցներ, որոնք ունենան քրեական անցյալ կամ առհասարակ «վատ գործարար համբավ», տվյալ դեպքում հաշվի է առնվում առկա տեղեկատվության հավաստիությունը և համապատասխան միջոցառումներ են ձեռնարկվում: Ի դեպ ռիսկի աղբյուր է նաև փոխառու-իրավաբանական անձի սեփականատերերի կազմի փոփոխությունը, քանի որ վերջինս կարող է հանգեցնել ռազմավարության փոփոխության, որի հետևանքները պարզ կլինեն միայն ապագայում: Բացի այդ սեփականատերերի փոփոխությունը կարող է վերջիններիս միջև կոնֆլիկտների առաջացման նախադրյալ լինել, ինչի հետևանքով կարող է տուժել ողջ կազմակերպությունը, ինչպես նաև բանկը կամ վարկային կազմակերպությունը՝ փոխառու-իրավաբանական անձին տրամադրած վարկային ռեսուրսի սահմաններում: Նախասիրությունների փոփոխման, տեխնոլոգիական առաջընթացի, միջազգային շուկաներ մուտք գործելու կամ տվյալ շուկաներում գործունեությունը շարունակելու անհնարինության և այլ գործոնների հետ կապված արտադրանքի գները կարող են անկում ապրել, ինչը, կախված անկման վրա ազդող գործոնից, կարող է ինչպես ժամանակավոր այնպես էլ հաստատուն բնույթ կրել. բանկը կամ վարկային կազմակերպությունը պարտավոր է հաշվի առնել տվյալ ռիսկը և պարզել, թե ինչպես դա կանդրադառնա փոխառու-իրավաբանական անձի ֆինանսական վիճակի վրա, արդյոք վերջինս ձեռնարկում է որոշակի միջոցառումներ, որպեսզի գների անկումը հնարավորինս մեղմ ազդեցություն ունենա իր վրա, թե՛ ոչ: Առանձնակի ուշադրության է արժանի բանկի կամ վարկային կազմակերպության կողմից փոխառու-իրավաբանական անձին տրամադրած վարկային ռեսուրսի ոչ նպատակային օգտագործման վերաբերյալ առկա տեղեկատվությունը, ինչպես նաև փոխառու-իրավաբանա-

կան անձի կողմից տարբեր վարկային կազմակերպությունների կողմից տրամադրած վարկային ռեսուրսների վերակազմավորման կամ մարման գործընթացի երկարացման բազմակի դեպքերի առկայությունը, ինչը յուրօրինակ ազդանշան է բանկերի կամ վարկային կազմակերպությունների առջև փոխառու-իրավաբանական անձի պարտավորությունները մարելու անպարտաճանաչության և անպատրաստակամության վերաբերյալ: Նախկինում փոխառու-իրավաբանական անձի և բանկի միջև կնքված վարկային պայմանագրի կամ ապահովվածության լրացուցիչ պայմանների իրագործման հետ կապված խնդիրների առկայությունը ևս ռիսկի կարևոր աղբյուր է, որի նվազեցման ուղղությամբ բանկը կարող է կնքվելիք վարկային պայմանագրում ավելի խստացնել վերոնշյալ պայմանների չկատարման արդյունքում ծագող տույժերը:

Բացատրություն. Վարկային պայմանագրի կամ վարկի ապահովվածության լրացուցիչ պայմաններ ասելիս հասկանում ենք կանայական պայմաններ (օրինակ՝ փոխառու-իրավաբանական անձի կողմից կրեդիտային հաշվի շրջանառության որոշակի մասը բանկում իրագործելու վերաբերյալ պայման, վարկի ապահովվածության որակական բնութագրիչներին ներկայացվող լրացուցիչ պայմաններ և այլն), որոնք առկա են փոխառու-իրավաբանական անձի վարկային պայմանագրի մեջ՝ որպես լրացուցիչ պայմաններ:

Չարկային մարմինների կամ անմիջական ներդրողների ու սպառողների կողմից փոխառու-իրավաբանական անձի հանդեպ ունեցած պահանջների առկայությունը ևս պահանջում է բանկի կողմից մանրազնին վերլուծություն, քանի որ վերոնշյալ պահանջները կարող են լինել տարբեր մասշտաբների և հետևանքների՝ երբեմն ընդունելով նաև դատական հայցի տեսք, ինչը կարող է հանգեցնել փոխառու-իրավաբանական անձի սնանկությանը կամ լուծարմանը: Ստորև ներկայացնենք փոխառու-իրավաբանական անձանց գործունեությանը բնորոշ այնպիսի ռիսկեր, որոնց գծով նպատակահարմար չէ սահմանել հնարավոր բալերի միջակայքեր, քանի որ վերջիններիս զնահատումը կախված է յուրաքանչյուր անհատական դեպքից:

Եթե փոխառու-իրավաբանական անձի մոտ առկա է վերջին 12 ամիսների ընթացքում հիմնական պարտքի կամ տոկոսագումարների գծով 30 օրացուցային օրերից ավել ժամկետանց օրեր կամ առկա է փոխառու-իրավաբանական անձի կողմից պարտավորությունների մարման ընդհատում և վերջինիս կողմից բանկին գրավի (որը չի

իրացվել բանկի կողմից ավելի քան 180 օրացուցային օրվա ընթացքում) գիշում ի հաշիվ բանկի առջև ունեցած պարտավորությունների, ապա բանկը վարկանիշի մոնիթորինգի շրջանակներում, ըստ ներկայացվող մեթոդական մոտեցման, նվազեցնում է փոխառու-իրավաբանական անձի վարկանիշը և ստեղծում է համապատասխան պահուստ: Ֆինանսական հաշվետվության ժամկետի լրացման պահից ի վեր մինչև նոր ֆինանսական հաշվետվություն ներկայացնելու պահը ընկած ժամանակահատվածը համարվում է ֆինանսական հաշվետվության բացակայության ժամկետ: Երբ վերոնշյալ ժամանակահատվածը հավասար է զրոյի, առկա չէ ֆինանսական հաշվետվության բացակայություն, հետևաբար տվյալ ռիսկի գծով, ներկայացվող մեթոդական մոտեցման շրջանակներում, բալեր չեն հանվում: Այն դեպքում, երբ փոխառու-իրավաբանական անձի համապատասխան բաժնի կամ անվտանգության ծառայությունների կողմից տրամադրվում է եզրակացություն, որտեղ նշվում է, որ փոխառու-իրավաբանական անձի հետ գործարքների կնքումը նպատակահարմար չէ համաձայն վերջինիս մասին առկա քրեական բնույթի տեղեկատվության, ըստ ներկայացվող ներքին վարկանշման մեթոդական մոտեցման, բանկը պետք է ձևավորի փոխառու-իրավաբանական անձին տրամադրված վարկի գծով հատուկ պահուստ՝ վարկի գումարի 100% - ի չափով: Եթե բանկի կողմից վարկային ռեսուրսը դեռ տրամադրված չէ փոխառու-իրավաբանական անձին և վերջինս գտնվում է վարկանշան փուլում, ապա նման ռիսկի գործոնի դեպքում բանկը պետք է օբյեկտիվորեն գնահատի տեղեկատվության արժանահավատությունը և համապատասխան որոշում կայացնի փոխառու-իրավաբանական անձին վարկանիշ շնորհելու ժամանակ: Փոխառու-իրավաբանական անձի գործունեությանը բնորոշ ռիսկերը բացահայտելու նպատակով պետք է օգտագործել նաև տեղեկատվության հետևյալ աղբյուրները՝ ՋԼՄ-ներ, անվտանգության ծառայությունների կողմից տրամադրված տեղեկատվություն (քրեական բնույթի ռիսկերը բացառելու համար, որոնք արտահայտվում են փաստաթղթերի կեղծմամբ, առանձին տեսակների ակտիվների յուրացմամբ և այլն [79, էջ 526]) և այլն: Եթե փոխառու-իրավաբանական անձի մոտ առկա են մի քանի տեսակի ռիսկեր, ապա բոլոր ռիսկերի գծով բալերը պետք է գումարվեն և հանվեն փոխառու-իրավաբանական անձի փորձագիտական գնահատման արդյունքում շնորհված բալերի գումարից՝ համաձայն վերջնական բալային գնահատականի բանաձևի (մանրամասն նկարագրված է 3.4 ենթավերնագրում):

Ինչպես գիտենք, վարկանշունը կատարվում է որոշակի ժամանակահատվածի համար և պահանջում է մոնիթորինգ, սակայն հեղինակները միակարծիք են [26], [27], [18] որ վարկանիշը պետք է ունենա նաև որոշակի տեղեկատվություն ապագայի վերաբերյալ, թեպետ արվում է անցյալ հաշվետու ժամանակահատվածի ցուցանիշների հիման վրա: Այդ խնդիրը լուծելու համար փոխառու-իրավաբանական անձանց վարկանիշ շնորհելուց բացի, պետք է կազմել նաև վարկանիշերի փոփոխության մատրից, որը կգնահատի ժամանակի ընթացքում վարկանիշի արժեքի փոփոխության հավանականությունը շուկայական նորմալ պայմաններում, մատրիցի տողերը պետք է արտահայտեն փոխառու-իրավաբանական անձի տվյալ ժամանակահատվածի վարկանիշը, սյուները՝ կանխատեսվող վարկանիշը, իսկ մատրիցի տողերի և սյուների հատման կետերը պետք է ցույց են տան վարկանիշի տեղափոխության հավանականությունը. օրինակ՝ «AAA» վարկանիշ ունեցող փոխառու-իրավաբանական անձի «BB» վարկանիշ տեղափոխվելու հավանականությունը տոկոսներով արտահայտված և այլն: Բնական է, որ միևնույն վարկանիշ ունեցող փոխառու-իրավաբանական անձիք, տվյալ մատրիցի շրջանակներում, կունենան սնանկության միևնույն հավանականություն: Նման մատրիցի հիմք է ընդունվում նախորդ ժամանակահատվածների տարբեր վարկանիշներով փոխառու-իրավաբանական անձանց սնանկության վերաբերյալ տեղեկատվությունը: Նման մատրից կազմելու համար անհրաժեշտ է ստույգ և մեծածավալ տեղեկատվություն առանց ընդհատման նախորդ առնվազն երեք հաշվետու ժամանակահատվածների վերաբերյալ: Վերոնշյալ մատրիցը ճշգրիտ կառուցելու համար անհրաժեշտ է ժամանակ, որի ընթացքում վարկանշման մեթոդական մոտեցումը կանցնի վալիդացման փուլ: Վարկանիշերի միգրացիայի սանդղակի և փոխառու-իրավաբանական անձանց որակական գնահատմանը ենթակա ռիսկերի հիման վրա հնարավոր է կատարել կանխատեսում:

3.4 Փոխառու-իրավաբանական անձանց ներքին վարկանիշի շնորհումը մեթոդական մոտեցման շրջանակներում:

Ներքին վարկանշման մեթոդական մոտեցման նպատակը կազմակերպությունների անվճարունակության ռիսկերի համալիր գնահատումն ու կանխատեսումն է: Քանի որ ատենախոսության օբյեկտը բանկերում ու վարկային կազմակերպություններում սպասարկվող փոխառու-իրավաբանական անձիք են, կազմակերպությունների անվճա-

րունակության ռիսկերը վերլուծվել են առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների տեսանկյունից՝ փոխառու-իրավաբանական անձանց ներքին վարկանիշի հաշվարկման ալգորիթմի որոշման միջոցով՝ անվճարունակության ռիսկի քանակական և փորձագիտական գործոնների միագումար քանակական գնահատման հիման վրա: Փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկը ուղիղ համեմատական կապի մեջ է բանկի վարկային ռիսկի հետ (որքան կազմակերպության անվճարունակության ռիսկը բարձր է, այնքան տվյալ կազմակերպության գծով բանկի վարկային ռիսկը բարձր է և հակառակը), այդ է պատճառը, որ կազմակերպությունների անվճարունակության գնահատումը առանցքային խնդիր է բանկերի համար:

Մեթոդական մոտեցման սահմաններում շնորհված ներքին վարկանիշը կարող է ուղեցույց լինել բանկի համար փոխառու-իրավաբանական անձի սնանկության հավանականության ցուցանիշը հաշվարկելիս, վարկային պորտֆելի որակը գնահատելիս, փոխառու-իրավաբանական անձի՝ հետագա կորուստների գծով պահուստների ձևավորման նպատակով ֆինանսական վիճակը վերլուծելիս, առանձին վարկային նախագծերի և վարկային պորտֆելի սպասելի և չնախատեսված կորուստների մեծությունը հաշվարկելիս, գործարքների իրականացման գնային պայմանները սահմանելիս և այլն:

Մշակվել է ներքին վարկանշման մեթոդական մոտեցում, որը կարող է կիրառվել բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից առևտրային կազմակերպությունների անվճարունակության ռիսկերը գնահատելու գործընթացում: Ներքին վարկանշման ներկայացվող մեթոդական մոտեցման ընդհանուր սկզբունքներն են.

- ներքին վարկանիշը անհրաժեշտ է շնորհել այն փոխառու-իրավաբանական անձանց, ում հետ արդեն կնքված են (վարկանիշի ակտուալացում) կամ ենթադրվում է կնքել (վարկանիշի նախնական շնորհում) հետևյալ գործարքները՝ վարկ, փոխառություն, վարկային գիծ, օվերդրաֆտ, ֆակտորինգ և այլ գործարքներ,
- նկարագրվող մեթոդական մոտեցման շրջանակներում ներքին վարկանիշ է շնորհվում այն դեպքում, երբ հաճախորդի հետ կնքվելիք կամ կնքված վերոնշյալ գործարքների պայմանագրային հարաբերությունների շրջանակներում կարելի է ստանալ վերջինիս մասին ողջ տեղեկատվությունը: Ներկայացվող վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում վարկանիշ չի շնորհվում այն փոխառու-

իրավաբանական անձանց, ում հետ բանկն ունի կամ պատրաստվում է ունենալ ներդրումային գործարք,

- ներքին վարկանիշի շնորհումը իրենից ներկայացնում է փոխառու-իրավաբանական անձի ֆինանսական վիճակի քանակական գնահատական: Փոխառու-իրավաբանական անձի վերջնական բալային գնահատականը դուրս է բերվում ֆինանսական վիճակի գնահատման միջին կշռված գնահատականներից՝ հիմնված ֆինանսական ցուցանիշների և փորձագիտական կարծիքի վրա:

Անվճարունակության ռիսկի գնահատման արդյունքում ներքին վարկանիշի շնորհումը իրենից ներկայացնում է բազմափուլ գործընթաց, որը ներկայացվող մեթոդական մոտեցման շրջանակներում ենթադրում է փոխառու-իրավաբանական անձի ֆինանսական վիճակի միջին կշռված գնահատական՝ հիմնված վերջինիս քանակական և փորձագիտական վերլուծության վրա՝ համաձայն հետևյալ բանաձևի (1).

$$FQ_0 = FQ_{\Phi} \times 0.6 + (FQ_q - \sum FQ_n) \times 0.4 \quad (1)$$

որտեղ՝

FQ_0 - փոխառու-իրավաբանական անձի ֆինանսական վիճակի վերջնական բալային գնահատական:

FQ_{Φ} - փոխառու-իրավաբանական անձի ֆինանսական վիճակի քանակական գնահատման բալային գնահատականն է, որը դուրս է բերվում հինգ խումբ ֆինանսական գործակիցների հիման վրա (մանրամասն նկարագրված է 3.1 ենթավերնագրում):

$(FQ_q - \sum FQ_n)$ - փոխառու-իրավաբանական անձի ֆինանսական վիճակի գնահատման փորձագիտական բալային գնահատական:

FQ_q - փոխառու-իրավաբանական անձի գործունեության բալային գնահատականն է, որը դուրս է բերվում հինգ խումբ ցուցանիշների հիման վրա (մանրամասն նկարագրված է 3.2 ենթավերնագրում):

FQ_n - փոխառու-իրավաբանական անձի գործունեության մեջ հայտնաբերված ռիսկերի բալային գնահատականն է (մանրամասն նկարագրված է 3.3 ենթավերնագրում): Կախված փոխառու-իրավաբանական գործունեությունից՝ վերջինիս կարող են բնորոշ լինել տարաբնույթ ռիսկեր, ինչպես արտաքին՝ առկա օրենսդրական բազայի փոփոխություն, ճգնաժամ, այնպես էլ ներքին՝ սեփականատերերի կազմի փոփո-

խություն, վերջիններիս միջև կոնֆլիկտների առկայություն և այլն, որոնց համալիր գնահատումը թույլ է տալիս փոխառու-իրավաբանական անձի վարկունակության լիարժեք պատկերի ստացում:

Կախված փոխառու-իրավաբանական անձի վերջնական բալային գնահատականից (1)՝ վերջինիս շնորհվում է ներքին վարկանիշ, ըստ որի փոխառու-իրավաբանական անձը դասվում է անվճարունակության ռիսկի միևնույն մակարդակ ունեցող փոխառու-իրավաբանական անձանց համապատասխան խմբին: Ստորև ներկայացվում է ներքին վարկանիշերի սանդղակը (աղյուսակ 3.4.1), որն ունի հետևյալ տեսքը. AAA, AA, A վարկանիշերին համապատասխանում են համապատասխանաբար (90-100], (80-90] և (70-80], BBB, BB, B համապատասխանում են համապատասխանաբար (60-70], (50-60], և (40-50], իսկ CCC, CC, C համապատասխանում են (30-40], (20-30], (10-20] բալերը, երբ վերջնական բալային գնահատականը փոքր է 10 - ից, փոխառու-իրավաբանական անձին շնորհվում է D վարկանիշ, որը վկայում է փոխառու-իրավաբանական անձի անվճարունակության մասին:

Աղյուսակ 3.4.1. Նկարագրվող ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում կիրառվող վարկանիշերի և վերջնական բալային գնահատականների համապատասխանեցված սանդղակ:¹⁸

Վարկանիշ	Բալային գնահատական
AAA	(90 -100]
AA	(80 -90]
A	(70 -80]
BBB	(60 -70]
BB	(50 -60]
B	(40 -50]
CCC	(30 -40]
CC	(20 -30]
C	(10 -20]
D (default)	≤10

Բացի փոխառու-իրավաբանական անձի հավաքած բալերի քանակը հաշվի առնելուց, վարկանիշ շնորհելու ժամանակ համաձայն ներկայացվող մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման, պետք է հաշվի առնել նաև փոխառու-իրավաբանական անձի գործունեության մեջ բացասական գործոնների առկայությունը: Մշակված մեթոդական մոտեցման շրջանակներում, եթե փոխառու-իրավաբանական անձի գործունեության մեջ բացահայտվում են բացասական գործոններ, շնորհվող ներքին վարկանիշի վրա դրվում են որոշակի սահմանափակումներ օրինակ՝ փոխառու-իրավաբանական անձի վարկանիշը ներքին վարկանիշից մեկ դասով ցածր դրվում է:

¹⁸ Աղյուսակը կազմված է հեղինակի կողմից՝ մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում:

նական անձին, անկախ վերջնական բալային գնահատականից, չի շնորհվում BB-ից բարձր վարկանիշ, եթե

- փոխառու-իրավաբանական անձի մոտ առկա է վերջին 12 ամիսների ընթացքում հիմնական պարտքի կամ տոկոսագումարների գծով 30 օրացուցային օրերից ավել ժամկետանց օրեր,
- փոխառու-իրավաբանական անձի զուտ ակտիվների 25%-ից ավելին կազմում են ժամկետանց պարտավորությունները (հարկերի, աշխատավարձերի գծով և այլն):

Փոխառու-իրավաբանական անձին, անկախ վերջնական բալային գնահատականից, չի կարող շնորհվել D-ից բարձր վարկանիշ, եթե փոխառու-իրավաբանական անձը այլ բանկից կամ վարկային կազմակերպությունից ստացված վարկային ռեսուրսը «վատ» է սպասարկում, ինչը վկայում է վերջինիս մոտ անվճարունակության ռիսկի ի հայտ գալու մասին փոխառու-իրավաբանական անձը դասակարգվել է, փոխառու-իրավաբանական անձի հետ գործարքների կնքումը նպատակահարմար չէ՝ համաձայն վերջինիս մասին առկա քրեական բնույթի տեղեկատվության և այլն: Փոխառու-իրավաբանական անձանց ներքին վարկանշման վերը նկարագրված մեթոդական մոտեցման շրջանակներում ստացված վարկանիշը ամբողջական է, քանի որ վերջինս հիմնված է փոխառու-իրավաբանական անձի գործունեության համալիր վերլուծության վրա: Մեթոդական մոտեցման մեջ առկա ցուցանիշների խմբերը ներառում են փոխառու-իրավաբանական անձի գործունեության ինչպես անցյալ, այնպես էլ ներկա և ապագա միտումները: Այս ամենի արդյունքում՝ կազմակերպությունների անվճարունակության ռիսկերի համալիր գնահատման և կանխատեսման մշակված ներկայացվող ներքին վարկանշման մեթոդական մոտեցումը կարող է օգտագործվել բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկերը համալիր գնահատման նպատակով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսության շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքում կատարվեցին մի շարք եզրակացություններ և գործնական առաջարկություններ, որոնց կարելի է ընդհանրացնել հետևյալ կերպ.

1. ՀՀ-ում առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից վարկավորումը փոխառու-իրավաբանական անձանց համար եղել և մնում է ֆինանսական ռեսուրսների ներգրավման գլխավոր աղբյուրներից մեկը: Ֆինանսական ռեսուրսների ներգրավման բնականոն գործընթացի ապահովումը ենթադրում է վարկային միջոցների տրամադրման ընդունելի, ֆինանսական կայունությանը չխոչընդոտող, շահույթ ապահովող, անվտանգ և պարզ պայմանների առկայություն: Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկային ռեսուրսների մարման ռիսկը կարող է էականորեն նվազել, եթե վերջիններս իրականացնեն փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկի քանակական և փորձագիտական գնահատում՝ վերջիններիս ներքին վարկանիշ շնորհելու միջոցով, ինչը համապատասխան կլինի Բազելյան կոմիտեի կողմից սահմանված՝ յուրաքանչյուր առևտրային բանկում փոխառու-իրավաբանական անձանց ներքին վարկանշման մոդելի առկայության պահանջին:

2. Փոխառու-իրավաբանական անձանց վարկանշման արտերկրյա և հայրենական փորձի ատենախոսության շրջանակներում կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս բացահայտել վարկանշման գործող մոդելների թերությունները և առավելությունները: Մասնավորապես որոշ մոդելներ զերծ են փոխառու-իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկի փորձագիտական գնահատումից, փոխառու-իրավաբանական անձանց գործունեությանը բնորոշ որակական ռիսկերի վերլուծություններից և կանխատեսումներից և այլն, ինչպես նաև վերլուծված չեն այնպիսի ֆինանսական ցուցանիշներ, որոնց շնորհիվ շնորհված ներքին վարկանիշը կլիներ ապագային միտված: Բացի այդ, փորձ է արվել բացահայտել հրապարակված ներքին վարկանշման մոդելների կիրառման խոչընդոտները ՀՀ-ում. կախված տնտեսության առանձնահատկություններից՝ շուկայի մեծությունից, կազմակերպության գործունեության ծավալներից, երկրի շրջափակման արդյունքում արտահանման դժվարություններից և այլն, ՀՀ-ում առկա են վարկավորման առանձնահատկություններ, որոնք իրենց ազդեցությունն են թողնում փոխառու-իրավաբանական անձանց շնորհվող ներքին վարկանիշի վրա:

3. Ատենախոսության շրջանակներում կատարված վերլուծությունների հիման

վրա կարելի է եզրակացնել, որ փոխառու-իրավաբանական անձանց վարկանշման մոդելները տարբերվում են ըստ ընտրված ցուցանիշների խմբերի, վերջիններում առկա ցուցանիշների կազմի, յուրաքանչյուր ցուցանիշի գծով շնորհված բալերի և վերջիններիս համապատասխանեցված վարկանիշերի և այլն: Բացի այդ վարկանշման մոդելները տարբերվում են ըստ կազմակերպությունների անվճարունակության ռիսկի վերլուծության քանակական և փորձագիտական գործակիցների կշիռների:

4. Ատենախոսության թեմայի շրջանակներում կատարված հետազոտության հիման վրա բացահայտվեց, որ մի շարք ՀՀ առևտրային բանկեր իրականացնում են փոխառու-իրավաբանական անձանց վարկանշում սեփական ներքին վարկանշման մոդելներով: Այդ մոդելները ժամանակի ընթացքում պետք է անցնեն վալիդացման փուլ և այդ պատճառով տվյալ մոդելների կիրառման արդյունքում յուրաքանչյուր փոխառու-իրավաբանական անձ ստանում է ոչ համարժեք վարկանիշ տարբեր առևտրային բանկերում:

5. Ատենախոսության շրջանակներում առաջարկվող փոխառու-իրավաբանական անձանց ներքին վարկանշման մեթոդական մոտեցման սահմաններում ստացված արդյունքները կարող են օգտագործվել փոխառու-իրավաբանական անձանց սնանկության հավանականության ցուցանիշը հաշվարկելիս, վարկային պորտֆելի որակը գնահատելիս, տրամադրվող վարկի գծով սպասելի և չնախատեսված կորուստների մեծությունը գնահատելիս, ռիսկի վճարի տոկոսադրույքը հաշվարկելիս, տրամադրվող վարկային ռեսուրսի սահմանաչափը սահմանելիս, գործարքների իրականացման գնային պայմանները սահմանելիս, որոնք կապված են վարկային ռիսկերի ընդունման հետ, ինչպես նաև վարկային ռեսուրսների գծով ՀՀ ԿԲ սահմանված նորմատիվներով պահուստների չափը թույլատրելի մակարդակով բարձրացման անհրաժեշտությունը գնահատելիս և այլն:

6. Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից կիրառվող ներքին վարկանշման մոդելի արդյունքում ստացված ներքին վարկանիշը պետք է արտահայտի, ինչպես փոխառու-իրավաբանական անձի ֆինանսական վիճակը, այնպես էլ շուկայում զբաղեցրած դիրքը, վարկային պատմությունը, կառավարման որակը, դրամական հոսքերի շարժը, վերջինիս գործունեությանը բնորոշ որակական ռիսկերը և այլն:

7. Փոխառու-իրավաբանական անձանց ներքին վարկանշման համար անհրաժեշտ տեղեկատվությունը չպետք է սահմանափակվի միայն պաշտոնական ֆինանսական հաշվետվությունները վերլուծելով, անհրաժեշտ է օգտագործել նաև կառավարչական հաշվետվություններ, որոնք փոխառու-իրավաբանական անձիք տրամադրում

են առևտրային բանկերին և վարկային կազմակերպություններին վարկային միջոցներ ներգրավելիս:

8. Չնայած այն հանգամանքին, որ փոխառու-իրավաբանական անձին շնորհված ներքին վարկանիշը արտացոլում է տվյալ ժամանակահատվածի դրությամբ վերջինիս վարկունակությունը, այն պետք է ունենա ապագային միտվածություն, ինչը բացակայում է վարկանշման գործող մոդելներում: Առաջարկվող փոխառու-իրավաբանական անձանց մշակված ներքին վարկանշման մեթոդական մոտեցման շրջանակներում այդ թերությունը փորձ է արվել շտկել ֆինանսական վիճակի վերլուծության ժամանակ գնահատելով նաև փոխառու-իրավաբանական անձանց գործունեության զարգացման միտումները:

